Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8
9-61

478-62

पर

Printed in Turkey

8
4-6t
Uկ
20

ԳԻՐՔ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ
ՈՐ ԿՈՉԻ
ՊՂՆՁԻ ՔԱՂԱՔ
ԵՒ
ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ
ԽԻԿԱՐԱՅ ԽՐԱՏՆՈՅ
ԵՒ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ

40557

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ.-ՊՕԼՍՈՅ
Տ. Տ. ՍԱՐԳՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Տպագրութիւն
ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՐՔՃԵԱՆ
Կ.-ՊՕԼԻՍ, ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ
—1861—

38250 ա.հ.

21033.60

841
40

2001

Printed in Turkey

ՅԵՌԵՎԵՔԵՆ

Մատեանս անուանեալ ՊՂՆՁԻ ՔԱՂԱՔ՝ բովանդակէ երկուս Վէպս իւիք իրօք նման վիպասանութեանց ինչ որ յարդեաց բոմն կոչին. զՊատմութիւն Ալէքսիանոսի և կամաւոր աղքատի որ և 'ի Վարս Հարանց գտանի, և այլ վէպս և բանս խրատականս։ Յօրինուածս Վիպացն չէ արդարև ճարտար և գեղեցիկ, բայց և այնպէս անդէպ և հակառակ ինչ կրօնից և բարոյականութեան ոչ գտանի 'ի նոսա։ Հայեցեալ 'ի հանգամանս և յանուսումնութիւն ժամանակին յորում գրեալ են, զարուեստ և զճարտարութիւն կամ զճաշակ արդի մատենագրութեան, և կամ զյստակութիւն և զփափկութիւն լեզուի ընտիր մատենագրաց մերոց խնդրել 'ի նմա չէ պարտ։ Յայտնի ինն

է թէ 'ի բազմաց բամբասի մատեանս. այլ՝ որպէս ասացաք՝ թէպէտ և չիցէ արժանի մեծի գովութեան, սակայն և չիք տեղի ծաղու և անարգանաց այնոցիկ՝ որ կարի սաստկութեամբ բամբասեն զնա։ Ապրադդեայք գաւառաբնակք յօժարութեամբ ընթեռնուն զսա. և վասն այսորիկ երբեմն փափաքանօք խնդրի։ Ուստի կամեցեալ մեր նորոգ 'ի լոյս ընծայել զսա, և տեսեալ և զանհարթութիւն լեզուին, խորհեցաք ուղղել զլեզուն լոկ, առանց մուծանելոյ փոփոխութիւն յիմաստսն. և քանզի յօրինուածք լեզուին առաւել մերձ էր 'ի հին գրաւոր լեզու, քան յարդի աշխարհիկ բարբառ մեր, վասն այնորիկ բարուոքթուեցաւ մեզ ուղղել զնա ըստ կանոնաց պարզ և յստակ հայկաբանութեան։ Պէտ նպատակի մերոյ 'ի սրբագրութեան մատենիս կրկին է. նախ՝ զի յօրինելով զսա ըստ ոճոյ յստակ հայեցի լեզուի, ոչ միայն ընթերցողացն լիցի դիւրութիւն և միջոց վար-

ժելոյ 'ի գրաբարն, այլ և կարիցէ ծառայել 'ի պէտս աշակերտաց քերականութեան 'ի գաւառս, ուր՝ որպէս լսեմք՝ բազում անգամառ 'ի չգոյէ մատենի, զկոյն զայս մատեան տան 'ի ձեռս այն ինչ զարգացելոց յուսման քերականութեան։ Երկրորդ՝ զի մի ամենևին անհետ լեալ ջնջեսցի յիշատակարանս այս յետին դարուց մատենագրութեան, որ եթէ ոչ զայլ ինչ՝ գէթ զոգի ժամանակին ցուցանէ։ Վստահեմք թէ յետ ամաց ինչ 'ի ծաղկել ուսմանց և գիտութեանց 'ի գաւառս, ոչ և ս եղիցի պիտոյ տարածումն այսպիսեաց։ բայց ամենայնի գոյ ժամ և ժամանակ։ և իմաստութեան է զամենայն ոք այնպիսի խայծիւք որսալ որ ախորժական թուի քմաց նորա։

Ա՛ռ այժմ այսչափ յառաջադիմութիւն բաւական լեցի՝ զի այս վերջին նուագ մատեանս փոխանակ անհարթ լեզուին՝ որչափ ինչ մարթ էր յստակ հայեցի բարբառով 'ի լոյս ընծայի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՂՆՁԻ ՔԱՂԱՔԻՆ

ՈՐ Է

ՕՐԻՆԱԿ ԱՇԽԱՐՀԻ

Էր 'ի Բաբելոն քաղաքի խալիֆայ մի, որում անուն էր Աբդումէլիք։ Յաւուր միում էջ 'ի հրապարակ, ժողովեաց զիւր մեծամեծսն, եւ եհարց վասն Սողոմոնի թէ Ո՞րպէս հրաման առնէր 'ի վերայ դիւացն։

Յառաջ եկն Ամիրայն եւ ասաց։

Հզօր եւ մեծ խալիֆայ. էր մարդ մի որդի վաճառականի եւ ասէր թէ՝ ես գնացի 'ի Սելեւկիա կղզին, եւ մոլորեցաք 'ի ծովուն քառասուն օր։ Եւ ապա ելաք 'ի լեառն մի բարձր՝ եւ ամենեքին ոչ ճանաչէաք զտեղին. եւ տեսաք մարդիկ սեւաւ եւ այլադէմս, որք ողջոյն ետուն եւ տա-

բան զմեզ 'ի տունս իւրեանց։ Եւ կացաք առ նոսա առուրս երիս։ Եւ եկեալ գնացին 'ի ծովն յորս, եւ տարան զմեզ ընդ իւրեանս։ Արկին զգործին՝ եւ կալան ձկունս բազումս. եւ զոյգ ընդ ձկանցն բերին կուժ մի՝ արճճով կնքեալ՝ կնքով Սողոմոնի։ Եւ բացեալ զկուժն՝ ել մուխ սեաւ եւ բարձրացաւ յօդս, եւ եղեւ գիշատեսիլ մարդոյ։ Աղաղակեաց եւ ասէ. Սողոմոն, Սողոմոն, որդի Դաւթի մարգարէի. մեղա՛յ, ոչ եւս այլ գործեմ զոր ինչ գործեցիս. այլ կամ 'ի հրամանս քո։ Զի գիտաց զեւն թէ՝ զեռ եւս Սողոմոն կենդանի է։

Յայնժամ ասէ Խալիֆայն. Ոչ հանդչի սիրտ իմ՝ մինչեւ տեսանեմ զայն կուժ, եւ ապա հաւատամ բանիդ այդմիկ։ Եւ հրամայեաց Խալիֆայն Տալիպի որդւոյ Սէհալայ թէ՝ Գնա առ Ամիրուսէն առ տէրն աբեւմտից. երկոքին երթայք շրջեցարուք մինչեւ գտանիցէք զկուժն. եւ ինձ հաստատուն զրոյց բերջիք թէ զի՞նչ կայցէ 'ի ծովու կամ 'ի ցամաքի։ Եւ եկա Խալիֆայն զանձ բազում Տալիպին եւ ականս պատուական, Ցանձիկ ձիան, եւ ապնիւ ծառայս։

Գնաց Տալիպն առ Ամիրուսէն։

Եւ եկ Ամիրուսէն շատ հեծելովք յաշխարհն Ականացւոց թագաւորին։

Ընթերցաւ թագաւորն Ականացւոց զհրաման Տալիպին. եւ կոչեաց որչափ ինչ

յիւրում աշխարհին հին մարդ կայր, եւ ըզ-
հանապազորդեանց վաճառականն։ Գտաւ
մարդ մի ծեր, որ գիտէր զծով եւ զցամաք.
եւ զանբնակ աշխարհն տեսեալ էր։ Եհարց
թագաւորն զծերն եւ ասէ. Սիրելի՛ գիտե՞ս
զայն տեղի՛ ուր Սողոմոն բարկացաւ գիւաց,
եւ 'ի պղնձի կուժ սրիկ եւ արձնով կընքե-
ցաց եւ 'ի ծով ընկէց։ Ասաց ծերն՝ Այո՛
գիտեմ։ Ասաց թագաւորն թէ՝ Գարտ է զի
տարցես զԽալիֆայն եւ զԱմիրայն յայն
տեղի։ Ասաց ծերն՝ Ցոյս ունիմ յԱստուած,
եթէ 'ի բարին առաջնորդեսցէ։ Բայց ճա-
նապարհն վտանգաւոր է եւ հեռի. քառա-
սուն օր անջուր պարտին երթալ եւ գալ։
Եւ բաղում զարմանք կան 'ի ճանապարհին։
Յայնժամ ասաց թագաւորն ցԱմիրմուէն.
Զայդ գիտուն ծերդ՝ որոյ նման յաշխարհի
այլ չիք, քեզ եմ տուեալ։ Ծանր եդ Ա-
միրմուէն՝ եւ զդեցոյց պատմուճան ծերոյն։
Եւ եհարց զծերն՝ թէ Զի՞նչ պէտք են 'ի
ճանապարհին։ Ասաց ծերն՝ Հազար ուղտ
առելի պիտին քան զմեր զրաստս՝ զի Ջուր
բառնամք ու մատանեմք 'ի Պուի աշխարհն։
Այլ զջուրն պարտ է ապակեղէն կժով բառ-
նալ՝ զի մի ցամաքեսցի. զի հողին սատ-
տիկ զոյ, որ ցամաքեցուցանէ զջուրն 'է
տիկին։

Յայնժամ զուզեցին եւ ուղեւորեցան՝
'ի ճանապարհ։ Եւ գնացին երկու հազար ձի-

աւորօքն 'ի չէն եւ յանչէն 'ի ներքս. եւ հասին
յանմարդաբնակ աշխարհն, եւ կատարեցաւ
տարի մի։ Եւ 'ի գիշերի միում զաստղն նշան
եդեալ ծերոյն՝ երթային. եւ ծածկեաց ամպն
զաստղն, եւ մոլորեցան 'ի ճանապարհէն։ Ե-
հարց Ամիրմուսէն զծերն եւ ասէ. Յորո՞ւմ
աշխարհի եմք։ Ասաց ծերն՝ Ո՛չ գիտեմ։
Ասաց Ամիրմուսէն. Կարե՞ս դառնալ յայն
տեղի՝ ուր զճանապարհն կորուսաք։ Ասաց
ծերն՝ Ոչ։ Յայնժամ շատ լացին, եւ գնացին
յանուն Աստուծոյ մինչեւ 'ի հասարակ օր։
Եւ մտին յաշխարհ մի տափարակ. եւ կայր
'ի մէջ յաշխարհին սեւագոյն բլուր մի բար-
ձրը. եւ 'ի հեռուստ որպէս զծուխ երեւէր.
եւ դիմեցին 'ի նա։ Եւ իբրեւ մերձեցան՝
տեսին, զի գմբէթ էր բարձր եւ գեղեցիկ.
եւ բովանդակ շինուածն էր յականց պատ-
ուականաց. յակինթ եւ զմրուխտ, եւ շուրջ
զանազան ակամբք զարդարեալ։ Ասաց Ա-
միրմուսէն՝ Փառք Աստուծոյ. ո՛րպէս գե-
ղեցիկ են շինուածքս։ Եւ դուռնն գեղեցիկ
մարմարիոնեայ էր։ Եւ գմբեթին նիստ՝ հա-
զար ուղտու քայլ էր. եւ գմբէթն բարձր՝
արճճով կապեալ։ Ետես Ամիրմուսէն՝ եւ
զարմացաւ ընդ բարձրութիւն գմբեթին։ Եւ
էր անվայր եւ անմարդաբնակ. եւ բու ճը-
չէր 'ի վերայ պարսպացն։ Իբրեւ զայն տես-
սին՝ լացին յոյժ։ Եւ ասաց Ամիրմուսէն թէ
Բաց յԱստուծոյ ոչ ոք կարէ շինել. զի

փառք եւ վայելչութիւն աշխարհիս սուտէ։

Եւ գրեալ էր ողբս այս :

Գնաց ժամանակ նոցա իբրեւ զերազ 'ի մութ գիշերի. չի՛ք դառնալոյ հնար յայն տեղի՝ զոր զկնի թողին։ Երանի՛ թէ կարէ՞աք գիտել, թէ արդեօ՞ք բարի գործո՞վք գնացին. կամ թէ հարուածովք անցին, վասն մեղաց որ չերեւին այլ եւս։

Յայնժամ ասաց Ամիրմուսէն. Ո՞ւր են առցա տեարքն կամ չինողքն. եւ ո՞ւր են, որ բազումս աշխատ եղեն, եւ որպէս ըզ ծաղիկ թառամեցան եւ պակասեցան։ Ասաց ծերունին. Պա՛տ է քեզ գոհանալ զԱստուծոյ, որ փրկեաց զմեզ 'ի վտանգէ անտի, եւ հասոյց յայն տեղի վայելուչ։ Գիտե՞ս, քաջ արանց, զի քո աստուածսիրութիւնդ փրկեաց զմեզ։ Իմ հայրն ասէր թէ՝ որ յայնմ տեղւոջ մոլորեալ է՝ ուր մե՛ք մոլորեցաք, այլ ոչ է երեւեալ։ Բայց աստի մինչեւ 'ի Պղնձի քաղաքն երե՛ք ամսոց ճանապարհ է. զայս քաղաք Աղեքսանդր չինեաց՝ եւ ընդ այս գնայր 'ի Պղնձի քաղաքն։ Յայնժամ ասաց Ամիրմուսէն՝ Նախ 'ի քաղաքս յայս մտցուք եւ տեսցուք զվայելչութիւն քաղաքին, եւ ապա երթիցուք։ Եւ մտեալ 'ի քաղաքն՝ տեսաք գեղեցիկ դարպաս մի չինեալ մեծ եւ լայնանիստ. եւ 'ի դրան գրեալ էր գիր նշարագրովք։ Ասաց Ամիրայն. ո՛վ կա-

ըէ կարդալ զայս գիրս։ Ասաց ծերն՝ Ես եօ-
թըն աղգի գիր գիտեմ։ Ասաց ամիրայն՝
Կարդա՛, զի տեսից։

Եւ գրեալ էին այս բանք։

Մարդ որ գայ յայս տեղի, թող լացցէ
զմեզ՝ ինքն խրատեսցի. զի մեք՝ ի մեր
բազում իրացն բաժանեալ ողորմելի ու լա-
լոյ արժանի եմք։ Եւ սակաւ մի յառաջ եր-
թայք, եւ տեսանիցէք իրս զարմանալիս. եւ
փառս Աստուծոյ տացջիք։ քանզի նա է
միշտ կենդանի։ Ցեսէ՛ք գուք բազում զար-
մանս, թէ յորմէ հետէ մարդ՝ ի հող դարձ-
եալ է. եւ մահ բաժանեաց զմեզ, կորուսաք
զոր ինչ ունէաքն։ Հանարս տալոց եմք
մեք արարչին՝ զոր ինչ եմք գործեալ. այլ
վա՛յ անաչառ ատենին, ուր ահեղ բարբա-
ռն է հնչելոյ։ Ժողովեցաք զանձս բա-
զումս, եւ այլոյ թողեալ գնացաք. զսակաւն
տուաք, եւ զանդէնին բազումն մոռացաք։ Եւ
ընդ մեզ երկն, զոր ինչ յայս կեանս գործե-
ցաք. եւ եթէ չար արարեալ եմք զամենայն
գործոց գնաչիւն տալոց եմք։

Ցայնժամ մտին՝ ի դարպասն եւ տեսին զար-
մանալի չինուածս՝ եւ գետինն էր յատակ-
եալ արծաթազօծ եւ ոսկեզօծ. եւ գնացին
յայլ դուռն մի։

Եւ գրեալ էր ողբս այս։

Քանի Ադամայ որդիք ծնեալ են յայս կեանս եւ մեռեալ. եւ քան զանասուն անբան՝ կենդանեօքս աստէն մոլորեալ են։ Այլ որ գիտունքն լեալ են, զայս կեանս սուտ են համարեալ. զանդէնն իւրեանց տուն չինեալ, եւ վստահ 'ի ներքս գնացեալ են։ Լուաւ Ամիրմուսէն՝ եւ աղիողորմ ելաց եւ ասաց. Որ ունի միտս եւ իմաստութիւն՝ նա կարէ ճանաչել զայս կեանս, զի ամենայն մեծութիւն ոչ ինչ է։ Եւ էր 'ի քաղաքին յայնմիկ գմբեթ մի, եւ շուրջ զգմբեթաւն էին գերեզմանք չորեք հարիւր մարմարիոնեայ քարամբք ազգի ազգի գունովք։ Եւ գրեալ էր 'ի վերայ չիրմին փորեալ եւ ոսկովք լցեալ՝ Ցունարէն գրով ողբ բազում. եւ գերեզման մի այլ կայր զարդարեալ՝ զոր ընթերցաւ ծերն։

Եւ գրեալ էր ողբս այս։

Եղուկ եմ ես, ցորչափ կենդանի էի եւ վայելեցի, զամենայն գործոց զհամարն պահանջիմ. ահա եհաս ժամ։

Մինչդեռ կենդանի էի, բազմաց պարգեւս բաշխէի. եւ անմահ կարծէի զանձն իմ, այլ ահա եղէ սակաւ մի փոշի։

Եւ զրեալ էր թէ՝ Հեռուպին գերեզմանն է, որ 'ի մահուն ժամանակի ասաց 'ի վերայ իւրոյ անձինն:

Մինչդեռ յայս կեանս էիր, հանապազ երերեալ եւ տատանեալ կացեր, բերդս եւ քաղաքս բազում, զամենայն խլեցեր դու զայլոց։ Այժմ խաւարին լեալ ես, եւ ես դու կեր որդանց. եւ վասն ամենայնի զոր զրկեցեր դու 'ի կեանս յայս՝ պատասխանի տալոց ես։

Ցայնժամ մտին յայլ դուռն մի. եւ զբրեալ էր. Երբ մահ եկն՝ իմ զօրքն չկարացին թափել զիս. իմ յայնչափ մեծութենէն ոչ էր այլ մարդ. իմ բաժին պատանքն են, եւ որ տանին եւ փորեն զգերեզմանս. ասենայն մեծութիւնս կորեաւ՝ եւ այլոց մընաց։ Ցետոյ ուրեմն 'ի միտ առի թէ մարմնոյ սէրն կորոյս զիս. յորժամ իմ անչափ մեծութիւն ինձ շահ ինչ ոչ եղեւ. եւ իցէ՞ մարդ որ այսց սուտ կենաց հաւատայցէ։

Եւ մտին յայլ դմբեթ մի. եւ տեսին՝ զի զարմանալի շինուածովք զարդարեալ էր։ Ո՛վ եղբարք՝ Աստուած միայն է անմահ եւ անսրատ. մի՛ լինիք վստահ 'ի սէր աշխարհի. զի խաբէութիւն եւ սուտ է, եւ երազոյ նման։

Եւ գրեալ էր ողբս այս:

Ա՛յ իմ սիրելի եղբարք, նայեցարուք յիս 'ի վշտահարս. բազում 'ի միասին կեցաք, եւ ուրախ լինէաք հաւասար։ Յայսմ տեղւոջ իմ համար խիստ է, զի դժոխք են մթին եւ խաւարին. տեսէք զիս եւ զձեր հնարս խորհեցարուք. եղո՛ւկ ինձ, եւ բի՛ւր եղուկ։

Եւ գրեալ էր թէ՝ Որ զիսն տեսանէ, թող վայ տացէ ինձ. զի ես թագաւոր էի հըզօր եւ յաղթող 'ի պատերազմի. այժմ լաւ է մուրացիկ մի քան զիս։

Եւ գրեալ էր ողբս այս:

Մինչ ես կենդանի էի, տէր էի հազար քաղաքաց, բերդք եւ գաւառ բազում, անհամար եւ անթիւ էին իմ։ Ունէի ձիս քսան հազար անհեթեթս եւ զարմանալիս. եւ իբրեւ ելանէի 'ի տանէ, քսան հազար արանց տայի հեծանել։

Անչափ ոսկի եւ արծաթ, ականս պատուականս եւ մարգարիտ ունէի. զոր պարկովք լցեալ էի, եւ կեցի անս հարիւր տասն։ Յանկարծակի մահ պատահեաց յիս ապարանս, եւ ոչ մնացաք ո՛չ ծեր եւ ո՛չ տըղայ, այնպէս զի թաղել ոչ կարացաք։ Իբրեւ զմեծն թաղէաք, եւ զայլն 'ի բաց ընկենուաք. այլ այժմ մեք յաղթեցաք չա-

բաչար, եւ զայս բանս առ ձեզ գրեմք։ Որ զմեր հէք մահն լսէք, դուք ձեզէն մեօք խրատեցարուք. լսելով զհասեալ բարկութիւնն, 'ի մանկութեան ձերում ապրեսջիք։ Ես մեծ թագաւոր էի, հզօր զօրաւոր եւ քաջ. բազում գանձ եւ կերպաս ունէի՝ զոր այլ ոք ոչ ունէր 'ի վերայ երկրի։ Զհոգի իմ անտես արարի, եւ զընչից չահս թուէի. այլ զամենայն այժմ այլոց թողի, միայն զպատանս առեալ գնացի։ Մեռայ ես որ տէր էի բարութեանց զոր դուք տեսանէք. ումեք յերկրի մերում այնպիսի գեղեցիկ վայելչութիւն ոչ եհաս։ Նա տակաւին զրկէի զայլ ոք, մինչեւ մահն ասաց թէ բաւական է. մոխրոյ եմ հաւասար եղեալ, այլ եղբարք իմ դուք մի՛ խաբիք։

Եւ յորժամ ցաւն զիս նեղեաց՝ կոչեցի զիմն զամենայն եւ ասացի թէ Օգնեցէք ինձ. թափեցէք զիս 'ի մահուանէ, որ բաժանէ զիս 'ի ձէնջ։ Ն.ոքա ասացին, Եթէ թշնամի չարակամ ունիս, ասա զի կռուեսցուք. ապա թէ. ոչ ընդ Աստուծոյ ո՛վ կարէ կռուել, մահ առաջի ամենեցուն կայ։ Իբրեւ զայն լսեցի, կացի 'ի հրամանն Աստուծոյ. եառու բերել զինչս իմ զամենայն, եւ կուտեցի որպէս զբլուր մի։ Եւ ասացի իմոյ գանձին թէ՝ Գնեա՛ զիս, զի տարի մի եւս այլ կեցից։ Նա ասաց, թէ Ա՛յդմ բանի չի՛ք հնար. եւ կացի յԱստուծոյ հր-

բամանան, եւ արձակեցի զհոգի։

Եղո՛ւկ իմոյ անուան մեռելոյ, զի այլ ոչ բնաւ յիշատակի. թագաւոր որդի Գաղատայ, որդւոյ Շատայ թագաւորի։

Որչափ գանձ եւ կարասի եւ կերպաս էր իմ, զոր մեղօք էի ժողովեալ. ոչ կարաց ինձ մին օգնել, կամ սակաւ մի ըզցաւ փարատել։ Տուք զայս կեանս եւ զայն առէք. քանզի մահու հնար հատեալ է, եւ չիք հողածին ծնունդ կենդանի որ զանձն 'ի մահուանէ պահել կարիցէ։

Եւ բուրգն մի էր 'ի մէջ ապարանիցն, եւ ոսկի Արծիւ մի՝ գրեալ 'ի վերայ նորա. Ջուրն 'ի բերանն 'ի վայր թափէր. 'ի ներքոյ նորա էր գետինն յատակեալ արծաթեզօծ եւ ոսկեզօծ։ Եւ գրեալ էր թէ՝ Որ տեսանէ զայս վայելչութիւն, նա թող փառաւորէ զԱստուած։

Եւ գրեալ էր ողբս այս։

Է մարդ՝ իմացիր զայս կեանս, եւ գիտասջիր զի չէ նա մնացական. զմահ մուտացայք դուք, նա ամենեցուն է ապրնջական։ Որչափ ոք յԱդամայ անտի ծնեալ են, ամենեքին գնան. դու Ջանա զի զբարիս գործեսցես, զի մի անդ զղջացիս։

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԱՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԿ-ՏՕՊԱ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Եւ գնացին 'ի չորրորդ դուռն. եւ գըրեալ էր թէ՝ մինչ ես 'ի սեղան նստէի՝ նազար մարդ 'ի ծառայութիւն կանգներ առաջի իմ. եւ երկու հարիւր մարդ յիմ սեղան նստեր. եւ ողբս այս:

Այժմ 'ի հող դարձայ, կերակուր լեալ եմ որդանց. եւ յանհուն բարեաց անտի խմոց զատարկ եւ 'ի բաց եմ մնացեալ։ Բազում այր անարժան ուտիւք յիմ տուն եկեալ զգնայր եւ կոխէր. այժմ ոչ ոք երկնչի յինէն, աղքատաց նման լեալ է իմ։ Է՛ մարդ, յորժամ դաս առ մեզ. լաց եւ որոնեա զմեր կորուստն. մահ դիւրաւ հասանէ մարդոյ, եւ զկեանս մարդոյն գիւրաւ փոփոխէ։ Մինչդեռ կենդանի՛ք էք, նստէք ընդ ում արժանն էր. այժըմ յամենեցունց զատեալ եմ, եւ անանց հարկն զիս այրէ։

Եւ գնացին 'ի հինգերորդ դուռն. եւ գըրեալ էր 'ի վերայ դրանն ոսկեղէն գրով խրատ բազում, եւ ողբս այս:

Աստի կենաց բարիք չեն բնաւ մնայուն. մահ հղօր դայ եւ տանի 'ի հող եւ 'ի բանտ։ Որչափ անհոգ լինիս, եւ ինչս բազում ունիս 'ի գանձի, մահ դայ քակէ եւ տանի, այնպէս զի եւ հեաք անդամ չերեւին։

Ի վեցերորդ դուռն գրեալ էր ողբս այս:

Ցիմար որդիք Ադամայ, որ զաշխարհաւ կոթողի էք. տեսէք թէ քանի մարդիկ, յԱդամայ հետէ անցեալ են։ Դուք իսկ բընաւ ոչ յիշէք, այլ իբրեւ զանբանս էք դուք. եւ անմխիթար քայլիք զօր մահուն մոռացեալ էք։

Ցեօթներորդում դրանն գրեալ էր ողբս այս:

Աստի կենաց բարութիւնք երազոյ ինն նման են. հազար վայ նմա ասեմ, որ զայս կեանս սիրէ յոյժ։ Երանի տամ մարդոյ որ զանտի զտունն չինէ, զի յորժամ 'ի կենաց աստի ելանիցէ, մի յամօթ կրեսցէ յԱստուծոյ։

Ցուրբերորդ դրանն գրեալ էր ողբս այս:

Այլ ոչ խրատին մարդիկ, թէ մահուն օրն գալոյ է. մոռանան զահագին տանջանն, որ զբազումս անդր ժողովէ։

Զոր ինչ աստ գործեալ են, անդ ընդ միում հազար տուժին. այլ դու Ջանա զքեզ ազատ պահել 'ի մեղաց եւ 'ի գործոց չարաց։

Եւ գրեալ էր թէ՝ Ցեսէք զի այս ամենայն չինուածոյս եւ գանձուս ես տէր էի, նստէի յայսմ գմբեթի եւ վայելէի. եւ 'ի յայսրում անուշահոտութենէ անմահանալի։ Արդ՝

տեսէք զայս ամենայն թագաւորութիւնս, որ տուն լեալ են այժմ գազանաց եւ թըռչնոց. ցորչափ զայս տեսանէք այլ մի՝ հըպարտանայք, եւ մի՝ գործէք չար, եւ մի՝ նախանձիք ընդ սուտ փառս։ Ցիշեցէք զայն՝ զի համարս տալոց էք առաջի Քրիստոսի. զի ոչ կարէք պատճառել, թէ ոչ գիտացաք։

Եւ գրեալ էր ողբս այս։

Արի՛ք դուք յայս տեղի եկայք, եւ տեսէք զիս ընդ հողով. թողեալ եմ զամենայն 'ի բաց, այլ եւ զգործոց իմոց զհամար պահանջիմ։ Լացէք զայնր ամենայնի իշխանս. զի տէր էի հազար երկրի, այսօր յամենայնէ զրկեալ, անձն իմ ակն ունի գեհենի։

Եւ այլ բազումբանք ողբոց գրեալ էին. եւ թեթեւացոյց Ամիրմուսէն զաշխարհս յաչս իւր։ Եւ գնացին յայն գմբեթ՝ որ քան զծուխն նուրբ եւ անօսր երեւէր. այնչափ բարձր էր եւ արճճով կապեալ. զայն տեսին՝ եւ զայլոց վայելչութիւնն մոռացան։ Քանզի որմքն համակ ոսկւով շինեալ, եւ դրունքն համօրէն ծխանելիք էին, մեք ոչ կարացաք գրել. 'ի գմբեթին յայնմիկ էր սեղան մի, որ դեղին ակամբք պատուականօք ոսկւով եւ մարգարտով էր կազմեալ. եւ էին շուրջ զնովաւ երկոտասան

ականք, եւ ողջոյն սեղանն հարիւր թիզ էր։ Եւ գրեալ էր թէ՝ Ո՞ւր են նոքա, որ զուարթանային չորջ զսեղանովս. եւ սեղանն բովանդակ լի էր լուսատու ակամբք։

Եւ գրեալ էր ողբս այս։

Բազում թագաւորք 'ի ճաշ բազմեալ են զսովաւ. այսօր մին 'ի նոցանէ ոչ երեւի. եւ այն որ գալոց է այսր, գնալոց է անհնարին։ Փոխին ազգէ յազգ աւուրքս, եւ եկն օր զի ամենեքին մեռան անտէր թողին զայս սեղան, եւ լալով գնացին։

Եւ 'ի միւս կողմն գրեալ էր ողբս այս գեղեցիկ։

Զինչ գեղեցիկ չինուած կայցէ, մահ գայ զամենայն խափանէ. ճարտար դու, միտ դիր. սոցա չինողքն այժմ ո՞ւր են։ Ապա արժեցո զաշխարհս, եւ մտօք զանձն քընեա, դու երկնաւորին փառս տուր, զի ամենայն հոգւոց նա տիրէ։

Եւ գրեալ էր, թէ Այս սեղան զմրուխտ թագաւորին է։ Հազար թագաւոր է կերակրեալ 'ի վերայ սեղանոյս, եւ ամենայն թագաւորաց անուանք գրեալ են. եւ ամենեքեան մտեալ են 'ի հող։

Եւ իբրեւ ետես Ամիրմուէն՝ հրամայեաց հեծելոցն թէ՝ Գրեցէք զայս ամենայն. եւ մնացին յայնմ գիրեթի աւուրս երիս։

Եւ ապա գնացին այլ եւս երից աւուրց ճանապարհ, եւ տեսին բլուր մի բարձր, եւ 'ի վերայ բլրին կայր ձիաւոր մի 'ի պղնձէ. եւ գրեալ էր 'ի վերայ ոմբի թէ՝ Կալ զիս եւ տասն անգամ չուրջ ած. եւ ուր դադարեսցիս՝ այն է Պղնձի քաղաքն։ Արարին որպէս եւ գրեալ էր, եւ ուղղեցաւ ծայր ոմբին ընդ արեւմուտս. եւ գնացին ընդ այն, եւ անցին ընդ դժուարին կապան մի, եւ տեսին բարձր բլուր մի 'ի քարէ։ Եւ անդ 'ի սեան միոյ ծայր կայր կենդանի մի 'ի ձեւ մարդոյ. թաղեալ 'ի մէջ սեանն մինչեւ 'ի մէջան։ Եւ ունէր երկուս թեւս մեծամեծս. ձեռք որպէս առիւծու էին. հերք որպէս ձիոյ. աչք մեծամեծք եւ կարմիր իբրեւ զբոց վառեալ. եւ կերպարանք նորա որպէս զթուխ սագի։ Գոչէր ահագին ձայնիւ եւ ասէր. Փա՛ռք Աստուծոյ անարատի եւ անմահի բարձրելոյ եւ միշտ կենդանւոյ, որ զայս անտանելի չարչարանս ած յիմ վերայ։ Եւ իբրեւ տեսին, զարմացան յոյժ։

Եւ ասաց Ամիրմուսեն զողբս զայս 'ի վերայ նորա։

Զարմանալիս տեսաք, մեք այսօր, զոր չէր տեսեալ այլ մարդ հողածին. կենդանի մի թեւաւոր, յորոյ աչացն հուր փայլէր։ Կերպարանքն որպէս թուխ սագի,

փառք ասէր անմահ Արարչին, որ զայս չարչարանս ինձ ետ. զոր չէ կրեալ այլոյ քաջի անմարմնոյ։

Եւ գնացին։ Էհարց առ նա ծերն եւ ասաց. Ո՞վ ես դու. կամ ո՞յր եղեալ է զքեզ յայդ սինդ։ Ասաց թէ՝ Ես այնդեւ եմ, որ ընդ Սողոմոնի պատերազմեցայ. իմ անունս Ջամշէր է. ես ասա կամ 'ի չարչարանս հրամանաւ Սողոմոնի, մինչեւ Աստուծոյ հրամանն հասանէ առ իս։

Ասէ Ամիրմուսէն. վասն է՞ր եդ զքեզ Սողոմոն յայդ չարչարանս։ Ասաց քաջն. թագաւոր մի Ապտիլազիզ անուն, որ ինձ քեռորդի էր։ Եւ ունէր երկուս կուռս. կանաչ զմրուխտ, եւ յակինթ. եւ ես սպասաւոր էի կուռցն։ Եւ մերոյ թագաւորին բազում հեծեալ զօրք էին. եւ ոչ ոք կարէր զդէմ ունել նորա. եւ բազում քաջք 'ի նորա հրամանս էին։ Եւ թագաւորին էր մերոյ դուստր մի չքնաղագեղ զարմանալի որոյ նման ոչ գոյր։ Առաքեաց Սողոմոն դեսպան առ թագաւորն մեր եւ ասաց. Ցուր զքո դուստրն ինձ 'ի կնութիւն. եւ կոտորեա զկուռս քո. եւ հաւատա յԱստուածն իմ, որ արար զերկինս եւ զերկիր։ Թէ զայս առնես՝ եղբայր լինիս ինձ. ապա թէ ոչ՝ պատրաստեա զքեզ 'ի պատերազմ, զի գամ տամ զմահ քեզ բաժին։

Լուաւ մեր թագաւորն եւ բարկացաւ։ կոչեաց զիւր հեծեալսն ամենայն, եւ ասէ հարց թէ՝ Զի՞նչ տամք պատասխանի Սողոմոնի։ Ասացին մեծամեծքն թէ՝ Ի մարմնաւորաց քան զքեզ ոչ գոյ մեծ. զու մեծ ես քան զՍողոմոն։ Բայց մուտ զու առա՛ջի չաստուածոցն, եւ աղաչեա զնոսա, թէ Օգնեցէք ինձ. զի Սողոմոն կամի զալ 'ի վերայ մեր առ 'ի կոտորել զմեզ։ Յայնժամ ես անբան տգէտ եւ ամբարտաւան եւ յուսացեալ յիմ մեծութիւն. որոչ ճանաչէի զՍողոմոն հզօր Դաւթի որդի՝ ես հարցի զկուռսն վասն այսր բանի։ Պատասխանի ետուն թէ՝ Մի՛ երկնչիք 'ի Սողոմոնէ արքայէ ես կարող եմ առնուլ զգործ Սողոմոնի. եւ տամ ձեզ զյաղթութիւն։ Լուաւ Ապտիլազիզ թագաւորն մեր եւ ուրախ եղեւ յոյժ, եւ զՍողոմոնի դեսպանսն զանեհար, եւ բազում բանս չարս թշնամանաց ասաց զՍողոմոնէ. եւ ասաց, թող պատրաստեսցի 'ի պատերազմ. զի ես եկեալ տամ նմա բաժին զմահ։

Գնաց դեսպանն եւ պատմեաց Սողոմոնի զամենայն։ Եւ սողոմոն պատրաստեցաւ 'ի պատերազմ. ժողովեաց զօրս եւ քաջս բազումս մամնաւորս եւ անմարմինս. հազարս հազարաց եւ բիւրս բիւրոց, օձս եւ վիշապս, գազանս եւ անասունս եւ թռչունս. եւ ուստոյց նոցա մարտնչել։ Եւ ե-

կեալ Սողոմոն յաշխարհ մեր՝ յղեաց պատ-
գամ առ թագաւորն մեր թէ, Ահա եկի
'ի քո աշխարհն. լուր հրամանաց իմոց եւ
եկ առիս. եւ կոտորեա զկուռսդ. եւ հա-
ւատա յԱստուածն իմ. զի ոչ կարեն դո-
քա պահել զքեզ 'ի ձեռաց իմոց։ Լուաւ
թագաւորն մեր՝ եւ կալաւ զպատգամա-
ւորսն Սողոմոնի. զերեսս նոցա սեւացոյց՝ եւ
յուղարկեաց առ Սողոմոն թէ՝ Պատրաստ
լեր, զի կռուիմք. տեսցուք՝ ո՞ր Աստուած
կարող է եւ յաղթող։ Գնաց պատգամա-
ւորն՝ եւ ասաց Սողոմոնի զամենայն։

Յայնժամ գնաց Սողոմոն 'ի դաշտ մի
տափարակ. եւ իմ թագաւորն 'ի լեառն մի
տափարակ։ Ժողովեցան զօրք բազումք
անթիւ եւ անհամար՝ եւ քաջք բազումք,
եւ յաջողեաց կռիւն։ Եւ հրամայեաց Սողո-
մոն գազանացն՝ որոց կէսն ընդաջմէ կա-
յին, եւ կէսն 'ի ձախմէ։ Եւ թռչնոցն հր-
ամայեաց որ բարձրանային 'ի վերայ ճայ-
թելով, եւ կացով ծակէին զերեսս եւ զա-
չերս մեր, եւ չտային բանալ։ Գազանացն
հրամայեաց թէ՝ Զգրաստս լափեցէք եւ
փախստական արարէք։ Օձիցն եւ վիշա-
պացն հրամայեաց թէ՝ Ի մէջ ոտից նոցա
մտէք եւ պաշարեցէք։ Եւ ինքն Սողոմոն
նստեալ էր յաթոռ ոսկիապատ օձակերպ,
զարդարեալ ազգի ազգի զարդուք։ Եւ
հրամայեաց Սողոմոն՝ եւ բարձրացուցին

զաթոռն, որ հայէր 'ի վերայ պատերազմին եւ հրամայեաց Սողոմոն մեծի պաշտօնէին իւրում. որ կայր յաջակողմն իւր՝ եւ այլ հեծեալք ընդ անմարմնոցն 'ի ձախմէ կային։ Եւ եռուն պատերազմ զերիս աւուրս եւ զերիս գիշերս. եւ ով կարէ պատմել զահագին պատերազմն, զդղրդումն՝ եւ զգոռումն։ Եւ նախ քան զամենեսին ես յաղթեցի հեծելոցն Սողոմոնի. եւ պարծեցայ, թէ զառաջին պաշտօնեայ Սողոմոնի զԱմիրաթ՝ բերեմ առաջի իմոյ թագաւորի։ Գոչեցի եւ խառնեցայ 'ի հեծեալն ասելով թէ՝ Զայլ ոք ոչ խնդրեմ, բայց զՔեզ Ամիրաթ. եկ զի տեսցուք զիրեար։ Եւ նա եւս գոչեաց ահեղագոչ ձայնիւ. Եւ ինձ այնպէս թուեցաւ թէ՝ երկինք պատռեցան եւ փլան 'ի վերայ իմ. բեկան մէջք հեծելոցն մերոց 'ի սաստիկ ձայնէ նորա։ Եւ յորժամ խառնեցաք ամենեքին յիրեար, թռչունքն չտային 'ի մեզ բանալ զաչս. գազանքն եւ սողունքն ահիւցուցին զմեզ։ Եւ այնպէս սաստկացաւ կռիւն զի ոչ հայր որդւոյ ողորմէր, եւ ոչ եղբայր եղբօր կարէր օգնել. եւ բազումք 'ի մերոց զօրաց մեռան։ Ապա եկաք ես եւ Ամիրաթն յիրեար. եւ վեց ժամ կռուեցաք, մինչեւ ձանձրանալ երկոցունց. եւ ես կամէի՝ մեկնիլ Ամիրաթէն։ Եւ ես Սողոմոն զիմ դառնալն յետս. հրամայեաց

թէ՝ Կալարուք զայդ անհաւատդ։ Փախեայ
ես, եւ Ամիրաթն անկաւ 'ի վերայ իմ.
ասացի ցԱմիրաթն՝ Երդմնեցուցանեմ ըզ
քեզ յԱստուած կենդանի. զի յորժամ տար-
ցիս զիս առաջի Սողոմոնի արքայի, մի՝
տացես սպանանել զիս։ Եւ տարաւ զիս
առաջի արքային։ Եւ Սողոմոն ետ բերել
զայս սիւն քարեղէն, եւ բանտարկեաց
զիս ասա երկաթով, եւ արճճով, եւ պը-
ղնձով։ Եւ հրամայեաց Ամիրաթին՝ Որ բարձ
զիս յուս այսու քարամբ եւ յայս լեառն զոր
տեսանէք։

Ասաց ծերն. Այն պատերազմ զի՞նչ ե-
ղեւ։ Ասաց քաջն. Յորժամ Ամիրաթն զիս
փախոյց եւ կալաւ, իմ թագաւորն փա-
խեաւ. եւ Սողոմոն եմուտ զհետ նորա, ու
զիմ թագաւորն սպան եւ զզօրն կոտոր-
եաց։ Ապին զկղզին, եւ զկուռան ջարդեցին.
եւ զթագաւորին դուստր առ Սողոմոն իւր
կնութեան. եւ զերկիրն Ամիրաթին 'ի ձե-
ռըն ետ. եւ ինքն դարձաւ ուրախութեամբ
'ի տուն իւր։

Ասաց Ամիրմուսէն. Օրհնեալ է Աստ-
ուած զի յամենայն տեղիս փառաւորի ա-
նուն նորա։ Եհարց ցքաջն թէ՝ Զայն տե-
ղի գիտե՞ս, ուր Սողոմոն զդեւսն 'ի պը-
ղընձի կուժ ելից՝ եւ 'ի ծով ընկէց։ Ասաց
քաջն թէ՝ Մօտ է 'ի կուռկուռեայ լեառն
'ի ծովն. եւ բնակեալ են 'ի լերինն յայն-

միկ մարմնաւոր սեաւ մարդիկ։ Եւ ետ քաջն զնչան լերինն եւ զքաղաքին Պղնձոյ։

Գնացին աւուրս բազումս. եւ իջին 'ի դաշտ մի, ուր կայր ծառ եւ տունկ. եւ պտուղն անուշահամ։ Գետ եւ աղբերակունք եւ ջուր քաղցր։ Եւ անտի անդր գնացին քառասուն օր, եւ ապա հասին 'ի Պղնձի քաղաքն. եւ էր որպէս զհուր վառեալ։

Ասաց ծերն. Ահա այն է քաղաքն Պղնձի։ Եւ իջին 'ի դուռն քաղաքին, եւ ոչ գտին զմուտն. եւ հեծուցին երիս արս յուղտ, եւ շրջեցան ընդ պարսպաւն զի-բիս աւուրս եւ զերիս գիշերս. ոչ գտին այլ տեղի, որ խոնարհագոյն էր քան զայն տեղի՝ ուր իջեալ էին։ Եւ պարիսպն ամենայն որպէս մի սեաւ քար էր. եւ այնպէս թուէր որպէս միաբերդ։ Վաթսուն կանգուն բարձրութիւն, քառասուն թիզ լայնութիւն էր պարսպին. եւ ունէր քսան եւ եօթն դուռն. 'ի միոջէ դրանէն ցմիւս դուռն ոչ երեւէր մարդն։ Յայնժամ էառ Ամիրմուսէն ընդ իւր զՑալիպն եւ զալեւորն, եւ գնացին 'ի բարձր լեառն սի որ մօտ էր քաղաքին։ Հայեցան 'ի վերայ քաղաքին եւ ասացին թէ՝ Ոչ եմք տեսեալ այսպիսի չինուածս 'ի վերայ երկրի. եւ բուճչէր 'ի վերայ պարսպացն Ցեսոյ դարձան եւ գտին տապանս մարմարիոնեայս գոյն

զգոյն. եւ գրեալ էր 'ի վերայ սեաւ փոր-
եալ եւ ոսկւով լցեալ։

Եւ գրեալ էր ողբս այս։

Է՛ մարդիկ որդիք Ադամայ, դուք ըզ-
դաստացարուք եւ իմացարուք մտօք զսուտ
կեանս, եւ զմահու գալն 'ի վերայ։ Զի
քակէ զամենայն չինուած, զոր չինէ տէր
եւ ոչ իմանայ. կայ մնայ մեզ պատասխանի
տալ ամենայնի, եւ ոչ մի բան ոչ մնայ։

Եւ յայլում շիրմի գրեալ կայր ողբս այս։

Է՛ դուք, որդիք Ադամայ, մի լիցի
թէ մոռանայցէք զԱստուած. նա առաա
է իւրով բարերարութեամբ, հարբերէ՝
եւ դուք ոչ իմանաք։ Դարձարուք 'ի
պիղծ գործոց ձերոց, զի մի յանանց հու-
րըն մատնեսջիք. մեք 'ի բիւրապատիկ
բարեաց անտի մերոց՝ քան զպարանս այլ
ինչ ընդ մեզ ոչ տարաք։

Եւ յայլոյ գերեզմանի վերայ գրեալ էր
ողբս այս։

Է՛ դուք, որդիք Ադամայ, թափեցէք
զգինիդ որ 'ի ձեզ է, զմարմինդ պարա-
րէք, հոգւոյ ձերոց բաժին ինչ ո՞չ պատ-
րաստէք։ Զի մի յորժամ 'ի ճանապարհ
ելանիցէք՝ դողումն զձեօք պատիցէ. կազմ
եւ պատրաստ կացէք, զի մի երկանց դեւն
զձեզ արգելուցու։

Եւ յայլոյ գերեզմանի վերայ գրեալ էր ողբս այս:

Դիտասջիք զի առ սակաւ սակաւ աւուրք մեր անցանեն. որչափ եւ զարմանք թոռիցին մեզ, 'ի հող գնացոց եմք։ Արթունք եւ պատրաստք լերուք. պատասխանեի տալոց է այնմ որ դատի. վա՛յ մարդոյ որ չունիցի բնաւ զահ եւ զերկիւղ մահուն։

Եւ յայլում շիրմի այս ողբ գրեալ էր:

Ով Աստուած իմ բարերար, ազատեմ զքեզ խրատեա զիս. ունկն դիր ծառայի քում. ազատեա զիս յիրոց մեղաց։ Խրատ բարեաց տուր ինձ, եւ զիմ զբաղում մեղս մի յիշեր. դու ողորմած Աստուած ես, եւ զմարդ ընդ մեղաց ոչ դատիս։

Եւ 'ի վերայ այլոյ իրիք գերեզմանի ողբս այս գրեալ էր:

Ով դու՛ք, որդի՛ք Ադամայ, զայն տանելոց է զոր ասա գործէք. ազգ ընդ ազգի դատի՛ք. այլ զոր չահէ՛ն ասա թողո՛ք, անդր ինչ ոչ տանի՛ք։ Գիտեմ զի Աղոսմոն ասաց. Էր զոր ուտէի, եւ էր զոր խաբէի, այլ զոր եմուս աղքատաց, զամենայն անդ դտի։

Զայս ամենայն բանս որ 'ի վերայ շիր-

ճաց դերեզմանացն դրեալք էին, հարին 'ի գիր, եւ եկին 'ի հեծելագունդն։ Եւ կապեցին սանդուղիս եւ եդին 'ի պարիսպն։ Ասաց մարդ մի թէ՝ Ես եղանեմ 'ի պարիսպն։ Իբրեւ եղ 'ի պարիսպն՝ ծիծաղեցաւ. ծափ զծափի եհար եւ ասաց. Ո՛հ, ո՛հ, զի՛ գեղեցիկ է քաղաքս, եւ անկաւ անդէն եւ մեռաւ։ Այլ ոք եկն յառաջ եւ ասաց՝ Ես եղանեմ 'ի պարիսպն, զի այրն այն ցնորեցաւ եւ զխելն ունել ոչ կարաց։ Ասաց Ամիրմուսէն. Ոչ է գործ առն իմաստնոյ զիւր ընկերն մեռեալ տեսանել եւ չերկնչել։ Ցետ այնորիկ եօթն այլ արք եղին 'ի պարիսպն, եւ ամենեքեան ծիծաղեցան. ծափ զծափի հարին եւ անկան 'ի քաղաքն եւ մեռան։ Ուշաթափեցաւ Ամիրմուսէն՝ եւ եղաց դառնապէս։

Եւ ասաց զողբս զայս 'ի վերայ պարսպին։

Պարիսպ դու անեսան, զամենեսին 'ի վայր ընկեցեր. մարդիկդ որ 'ի վերայ քո եղին՝ իբրեւ զծաղիկ թօթափեցան։ Զեմ ես տէր ամենայնի, թերեւս չարի դիպեցան. ահա դողան հեծեալքս ամենայն յիրաց այսի, ով քաղաքդ անեսան։

Դարձաւ եւ ասաց Տալիպն. Կամիմ ես գնալ վասն հեծելոյդ։ Ասաց Ամիրմուսէն. Գնա վասն հեծելոյդ, եւ վասն Խալիֆա-

յին սիրոյ. վասն իմոյ բանիս մի՛ գնար։ Յայնժամ Տալիպն զիւրոյ ընչից զկէտն Աստուծոյ խոստացաւ. եւ իբրեւ եկ 'ի պարիսպն յիշեաց զԱստուած. ծիծաղեցաւ եւ ծափ զծափ հար. անկաւ 'ի քաղաքն եւ ուշաթափեցաւ։

Յայնժամ Ամիրմուսէն եկաց յոյժ, զի համարեցաւ թէ մեռաւ։ Այլ Տալիպն ըզգաստացաւ, ուշաբերեաց, ձայն ետ եւ ասէ. Մի՛ լար, կենդանի եմ ես։ Յետ այնորիկ ետես Տալիպն զի 'ի մէջ դրանն ձիաւոր մի կանգնեալ էր, եւ գրեալ էր 'ի վերայ ձեռին նորա գիր թէ կալ զբեւեռն որ 'ի վերայ բարաւորի դրանն է, ած զնա շուրջ երկոտասան անգամ, եւ բանաս ըզդուռնդ։ Ընթերցաւ Տալիպն եւ արար զոր գրեալն էր, եւ եբաց զդուռն քաղաքին։

Յայնժամ առ Ամիրմուսէն զկէս հեծելոյն, եւ եմուտ 'ի քաղաքն. եւ շուրջ եկին զքաղաքաւն։ Ցետին, զի մեռեալ էին ամենեքեան, եւ վաճառանոցք փակեալ էին։ Եւ էր գետինն յատակեալ, եւ ջուր էր 'ի վերայ։ Եւ 'ի գլուխս ամենայն փողոցաց էր մէն մի բուրգն. եւ վերայ բըրգանցն մի մի արծիւ, եւ ջուր երանէր ընդ բերան նոցա։ Ծաղկունք՝ անուշահոտք եւ գեղեցիկք էին. եւ մարդիկն բազմեալ 'ի 'ի գմբեթին։ Ոսկի եւ արծաթ, ականք պատուականք եւ մարգարիտ բազում կու-

տեալ էր, եւ տեարք նոցա անդր մօտ մեռեալք եւ փտեալք էին, եւ իբրեւ մերձենայր ոք 'ի նոսա՝ անդէն 'ի հող դառնային։ Յայնժամ մտին 'ի խանութս քանդակողացն եւ ոսկերչաց, եւ 'ի կրպակս մատվաճառաց եւ 'ի տունս գանձուց։ Ամենայն ինչ ոսկւով եւ մարգարտով զարդարեալ էր։ Որ միանգամ տեսանէրն՝ լայր եւ հառաչէր, եւ ելանէր արտաքս առանց չար ինչ ունելոյ 'ի սրտի։ Յայնժամ ելին անտի եւ գնացին յապարանս թագաւորին, որոյ էին դրունք երեք իբրեւ զբերդի, առաջինն՝ պղնձի, երկրորդն՝ արծաթի, եւ երրորդն՝ ոսկի։ Ցեսին զարմանալի շինուածս՝ զոր չէր տեսեալ ակն մարդոյ. եւ զնորա նմանութիւնն ոչ կարացին գրել։ Եւ առաջի դրանց ապարանիցն կայր ձիաւոր մի, եւ անդր մօտ բուրգն մի, եւ 'ի հինգ կողմանց ջուր ելանէր, եւ առաջի նորա դրախտ էր ծաղկանց, եւ 'ի նմա մրրգաբերաց ծառք եւ տունկ բազում։ Եւ եթէ մտանէր ոք 'ի նա, արբենայր ինքն յանուշահոտութենէ անտի. վարդք էին իբրեւ զգունդս, եւ ընդ հովանեաւ նոցա էին արք մեռեալք։ Յայնժամ մտին 'ի գմբեթն, որոյ դէմ յանդիման կայր քաղաքն

Եւ ասաց Ամիրմուսեն զողբս զայս
'ի վերայ քաղաքին:

Եղուկ քեզ, քաղաք գեղեցիկ, զի չիք
'ի քեզ կենդանի. ամենեքին 'ի հող դարձեալ են, չիք մարդ, եւ դու լի ես ամենայն բարեօք։ Ո՜հ, երանի թէ չէր մեր բնաւ տեսեալ զտառապանս նոցա. երկնչիմ թէ եւ մեք թերեւս իբրեւ զնոսա լինիցիմք, հէգք եւ թշուառք եւ արժանիք ողբոց եւ լալեաց։

Ապա մտանեն 'ի դահլիճն, եւ տեսանեն զՀնա եւ զարդս աղդի աղդիս. գունդքս եւ աղեղունս լարեալս, եւ սուսերս, եւ բեկորս ասպարաց եւ կապարանս։ Իբրեւ մտին 'ի սրահան 'ի ներքս, տեսին զի մարդիկ նստէին մեռեալք, որոց չէր փքուեալ, այլ մորթն սեւացեալ 'ի վերայ։

Ետես Ամիրմուսեն եւ զարմացաւ, եւ
ասաց զողբս այս:

Եկայք տեսէք նոր զարմանս, զի եղաք մեք անմխիթար. լաւ էր թէ չէր տեսեալ մեր. տեսիս այս ետ մեզ յարտասուս ցընդել։ Ես փառս տամ Արարչին որ ինքն է Աստուած բարերար եւ 'ի յարութեան առուրն, ոչ արկցէ՝ 'ի հուր եւ 'ի խաւար։

Գնացին յայդուսն մի՝ եւ տեսին զկաճարն բարձր եւ զարմանալի. խայտուած-

քըն ամենայն կարմիր ականք էին, զո-
րոց գնմանութիւնն գրել ոչ կարացին։

Ի վերայ սեմոցն գրեալ էր ողբս այս:

Այս դրունք գեղեցիկք են. չէ մարթ
իմիք լինել քան զնոսա մեծ, գովելի եւ
արքունական, եւ չիք ինչ նման շինուա-
ծոյս այսմիկ։ Այլ տուք սոցա վայ, զի չե-
ղեն սոքա մեզ բնակութիւն. գնացաք եւ
զանցաւոր զշինուածս զայսոսիկ թողաք
մեք։

Մտին 'ի ներքս եւ տեսին, զի երեք
սիւնք էին 'ի մէջ ապարանիցն, առաջինն՝
կապոյտ, երկրորդն՝ կարմիր, երրորդն՝ կա-
նաչ. եւ գմբեթ մի 'ի վերայ սեանցն ծե-
փեալ ոսկւով. Եւ 'ի գմբեթն ոչ տեսին
շինուած քարեղէն կամ փայտեղէն. այլ
ամենայն ոսկի եւ արծաթ էր։ Եւ սիւն մի
այլ կայր 'ի մէջ ապարանիցն, որ երեսուն
կանգուն բարձր էր. եւ ոսկի գմբեթ մի
'ի վերայ. եւ ոսկի առիւծ մի յօրինեալ
էր իբրեւ կենդանի. եւ լուսատու ականք
դրոշմեալք յառիւծն. զի իբրեւ գիշեր լի-
նէր՝ ականքն լոյս տային իբրեւ զարեգա-
կըն։ Եւ ոսկի տախտակ մի գրեալ էր 'ի
վերայ աթոռոյ միոյ. եւ ականք պատուա-
կանք 'ի նմա մարգարտով յօրինեալ։ Եւ
գեղեցիկ գշխոյ մի 'ի վերայ աթոռոյն նըս-
տեալ. եւ ակումբ մի տարածեալ լի մար-

գարտով 'ի ներքոյ դշխոյին։ Եւ կայր 'ի գլուխն թաղ մի գեղեցիկ եւ անմնման յորինեալ. զորոյ զնշանն գրել ոչ կարացաք։ Եւ 'ի պարանոցի նորա մանեակ 'ի մարգարտոյ, մէն մի մարգարիտ մեծ էր քան զճուռ աղաւնոյ, եւ 'ի միջոցի մանեկին ակն մի լուսատու։ Եւ գլխադիր մի էր նորա 'ի նմանութիւն սիրամարգի երին երփին գունովք։ Եւ թաղն որ 'ի գլուխ նորա՝ էր չորեքկին թուով. մին կարմիր, մին կապոյտ, մին կանաչ 'ի զմրխտոյ, եւ միւս եւս մին լուսատու ակն որոյ ոչ գոյր նման, եւ մարդ չկարէր հայել 'ինա. եւ այնպէս թուէր զի դշխոյն այն մեռեալ էր այն օր։ Եաեւ Ամիրմուսէն եւ ելաց դառնապէս եւ ասաց թէ փառս տամ Աստուծոյ, զի տեսէմ ես հայիլ յերեսս նորա։

Եւ ասաց զողբս զայս 'ի վերայ դշխոյին։

Դու ակն պատուական անգին, բարէ՛ էր վասն եղեր անպիտան. դու իբրեւ կենդանի մարդ ես, մարմին քո վասն է՞ր 'ի հող է չրջեալ։ Աչս գեղեցիկս իբրեւ զքոյս 'ի մարդ հողեղէն իմ չիք տեսեալ։ վայ տամ ես հազար անգամ քաղաքին՝ որ զքեզ վայելել ոչ կարաց։ Եւ զայս տեսեալ Ամիրմուսէն՝ երազոյ նման ասաց զկեանս մարդոյ։

Եւ ասաց զողբս զայս 'ի դիմաց Դշխոյին:

Եղբարք սիրելիք որ կայք, մի՛ խաբիք յաշխարհի սատ. այսց կենաց մի՛ հաւատայք, ամենեքին առէք օրինակ յինէն։

Ամենայն որդի Ադամայ որ ծնանի՝ առ իս գայ, զու ջանա բարիս գործել, զի մի՛ յանշէջ հուրն առաքեսցիս։

Ի դիմաց Ամիրմուսէնի:

Մարդ ոք որ զայս տեսանէ, եւ այսց կենաց հաւանի, կամ ասէն իւր տուն չինէ, եւ անհոգ 'ի ներքս բնակի, ոչ հաւատամ թէ բնաւ այնպիսին մարդ է, կամ ունի միտս բանականս. անբան եւ անասուն է նա, խոտակեր եւ չորքոտանի։

Ի դիմաց Դշխոյին:

Դերի որդի Ադամայ, ընդէ՞ր դատիս զամենայն մեղօք։ Ցիշեա զահաւոր դատաստանն, եւ բաղխեա զկուրծսդ եւ լաց։

Տես զիս եւ խնդրեա քեզ հնարս, փախիր 'ի մեղաց. ապա թէ ոչ յաներեկ աւուրն, զու այրիս յանանց հուրն։

Ի դիմաց Ամիրմուսէնի:

Ով իմ պատուական դշխոյ, զու որ ողորմելի եւ աշխարելի ես, այնչափ քո անբաւ բարիք ո՞չ օգնեցին քեզ փոքր 'ի

չատէ։ Մեռար դու եւ 'ի հող դարձար, եւ թողեր զամենայն յերկրի. մարդ որ խմաստուն է քեւ խրատեցի։

Իբրեւ լուեցին 'ի խօսելոյ՝ ասաց Տալիպըն ցԱմիրմուսէն թէ՝ Ցորժամ այնպիսի մեծ մարդոյ զաւակ մեռանի, մնդիկ դնեն յաչսըն, զի մի եւաւցէ, եւ զմարմինն զմեռեալն զի փափուկ մնայցէ եւ մի փտիցի։

Եւ կային առաջի Դշխոյին արք երկու կանգնեալք, մին՝ սեաւ եւ միւսն սպիտակ. այրն սպիտակ ունէր 'ի ձեռին տուսեր մերկ, եւ 'ի ձեռին առնն սեւոյ էր լախտ (թօփուզ)։ Եւ 'ի գիրկս դշխոյին էր տախտակ մի գրեալ կապուտակաւ. ընթերցաւ զայն ծերունին եւ էր գրեալ այսպէս։

Անուն Աստուծոյ օրհնեալ լիցի, որ միշտ կենդանի է. եւ ինքն է իշխան երկնի եւ երկրի, արարիչ Աստուած ամենայնի։ Հողածին մարդ՝ անմահ ոչ լինի, բայց միայն որ արարն զամենայն. անպիտան են փառքն աշխարհի, քան զերազ եւ զմութ գիշերոյ։ Ես մեծ տիկին էի, դուստր հրզօր թագաւորի. ունէի իշխանութիւն, զոր այլ ոք ոչ ունէր 'ի վերայ երկրի։ Բայց իբրեւ մահ առ իս եկն, զամենայն իրս ես ատեցի. զայս տեսեալ խրատեցարուք, յամենայն չարեաց փախերուք։

Եւ գրեալ էր խրատս թէ՝ Որ զինն տեսանէ, թող անձին իւրում ողորմեսցի

եւ խրատեսցի. եօթն եւ տասն ամաց էի ես, յորժամ մեռայ։ Մահ ո՛չ 'ի թագաւորէ երկնչի, եւ ո՛չ աղքատին ողորմի։ Ո՞ւր է Ադամ զոր Աստուած իւրովք ձեռօք ստեղծ. կամ ո՞ւր է Սողոմոն արքայ, կամ Աղէքսանդր թագաւոր, նա որ տիրեաց երից կողմանց աշխարհի. բայց զայս քաղաք ո՛չ կարաց առնուլ։ Ինձ այն մընաց՝ զոր իմով ձեռամբ եռու աղքատաց։ Դուք որ կենդանի էք՝ մի՛ թողուք ըզ ձեր ինչս այլոց, որպէս մեք թողաք. այլ ձերովք ձեռօք մինչդեռ յայս կեանս էք՝ տուք ողորմութիւն, եւ զանտի կեանս գընեցէք։

Եւ գրեալ էր ողբս այս։

Մարդ որ իմաստուն է, նա յիւրոց գործոց անտի ճանաչի. որ զամենայն բարուք գործէ. եւ 'ի չարէ 'ի բաց փախչի։ Զի այս մեծութիւնս սուտ է, եւ փառքն վաղ անցանեն. որպէս թագաւորքն եղեն, զորոց կանխաւ զանուանն ասացի։

Ես Զիրուխատ թագաւորի դուստր եմ. մերոյ դարպասին բրգունքն համակ ոսկի եւ արծաթ էին։ Եւ 'ի մեր լերինս բազում ոսկեհանք գոյին. ակնձեւ մարգարիտն 'ի մերմէ ծովէս ելանէր։ Նախ՝ մեռաւ իմ մայրն, եւ ես եօթն ամաց մնացի. 'ի տասն ամաց հետէ՝ կալայ զաթոռ թագաւորու-

թեան եւ եօթն ամ վարեցի, յայնժամ ե-
հաս ինձ մահ։ Եւ յորժամ ընթերցաւ ծերն
Ամիրմուսէն ելաց։

Եւ ասաց զողբս այս։

Ատի կենաց բարութիւնք չեն ումեք
երբեք մնացական, այլ իմաստուն է այր՝
որ ձրի բաշխէ զամենայն։ Մարդիկ իբրեւ
ղծաղիկս գարնայնոյ փթթին եւ վաղվա-
ղակի ցամաքին. բիւր անգամ երանի ար-
դարոց յաւուրն յարութեան։ Ո՞ւր են թա-
գաւորք երկրի որ երբեմն աշխարհաշէնք
եղեն. ո՛րչափ քաղաքս, քանիո՛ն բերդս
շինեցին, ո՞չ զամենայն թողին եւ մեկնե-
ցան։ Իբրեւ եկն մահ 'ի վերայ, յամենայ-
նէ կացին մնացին դատարկք, եւ յանբաւ
գանձուց անտի իւրեանց փող մի անգամ
ընդ իւրեանս ոչ տարան։

Եւ գրեալ էր թէ ութ ամ անձրեւ եկն
յաշխարհի մերում, եւ հատաւ ամենայն
ինչ դալար եւ կերակուր։ Յայնժամ բազում
գանձս, եւ պատուական ականս, եւ ազգի
ազգի կերպասս յուզարկեցաք յամենայն եր-
կիր. եւ նոքօք չուրջ եկին, եւ ոչ գտին
կերակուր, եւ դարձան դատարկ յետս։
Տանէին զոսկին ընդ հացի տային եւ ոչ
գտանէին. ոչ գնով եւ ոչ անգին։ Իբրեւ
ամենայն կերակուր հատաւ, մարդ որ
հզօր էր՝ կերաւ զտկարն։ Տէրն զծառայն

ուտէր, եւ աղքատքն զմիմեանս։ Իբրեւ ամենայն հնարք հատան, գիտացաք եթէ յԱստուծոյ էր բարկութիւնն 'ի վերայ մերյանձն արարաք զմեր հոգիս Աստուծոյ։

Եւ գրեալ էր խրատս այս։

Խրատս յինէն մի լսեր, ով յիմար դումսոօք եւ անմիտ. գիտեմ զի մեռանիլ հարկ է, զի չիք քեզ հնար յաշխարհի աստ։ Զսիրտ քո արա ողորմած, զի պիտոյ է քեզ յօտար ազգի անդ. 'ի պահս եւ յաղօթքս կաց, քանզի գերեզմանն մթին եւ խաւարին է։

Եւ գրեալ էր թէ Քաղաքս երկնաշաւիւ աստղօք էր շինեալ։ Քան զայս այլ ամուր քաղաք չգոյր 'ի վերայ երկրի։ Որ միանգամ Աստուծոյ հրամանաւն յայս քաղաք մտանէ՝ ոսկի եւ արծաթ առնու որչափ եւ պիտոյ լցէ. բայց զայն որ յիմ վերայ կայ՝ մի առնուցու՝ 'ի սէր Աստուծոյն ձերոյ։ Այսչափ ինչ որ յիմ վերայ է՝ ինձ թողէք. յամենայն թագաւորութենէ իմմէ զայս եմ առեալ ինձ բաժին։ Երդմնեցուցանեմ զձեզ յԱստուած կենդանի, զի մի ինչ 'ի մարմնոյ իմմէ առեալ հանիցէք. եւ կամ զիս տագնապեցուցեալ խռովիցէք։ Որ ոք լուիցէ աղաչանաց իմոց, ողորմութիւն գտցէ յԱստուծոյ. ապա թէ ոչ մի՛ համբերեսցէ Աստուած ամբարիշտ եւ անօրէն գործոցն։

Լուաւ ամիրմուսէն եւ ելաց յոյժ։

Եւ ասաց զբանս զայս 'ի դիմաց Դշխոյին։

Քարոզն զոր դու գրեցեր, իմաստուն ճարտար դշխոյ, կարի ցաւագին թուեցաւ ինձ. լուա ես զդանդատել քո։ Բայց չէ պարտմեզ յայսչափ 'ի դանձուց աստի դատարկ գնալ. սակաւ ինչ առցուք մեզ 'ի վայելել, եւ զայլսն թողցուք ուր եւ պիտոյ է։ Ցայնժամ հրամայեաց հեծելոյն եւ ասէ. Առէք այսր զամանաղ զոր ունիք. եւ լցէք որչափ ինչ պիտոյ են՝ ականս եւ մարգարիտ եւ ոսկի։

Ասաց Տալիպն. Ես զայն զարդսն որ 'ի վերայ դշխոյին են՝ առնում, եւ տանիմ ընծայ առ Խալիֆայն։ Ասաց Ամիրմուսէն. Եթէ այլովքն ոչ յագենամք, չիք ինչ որ զմեզ յագեցուցէ. դշխոյդ ահագին երդմունս գրեալ է ցաւագինս յոյժ։

Ասաց Տալիպն. Ասուած զինչս, զոսկի եւ զարծաթ եւ զպարգեւս եւ զամենայն կեանս՝ կենդանեաց տուեալ է եւ ոչ մեռելոց։ Դմա պատանքն բաւական են. հող է եւ 'ի հող դառնայ։ Առնում զայն ականսն եւ տանիմ տամ ընծայս առ Խալիֆայն։

Եւ ասաց Ասիրմուսէն զայս խրատ։

Մարդ որ ագահ է, փութով կորանայ.

իմ խրատս քեզ այս է, մի՛ առնուր, ով սի-
րելի։ Անպարտ եմ 'ի բանէդ յայդմանէ. մի՛
առնուր դու բան խոտելի զի մի աղօթք
դշխոյին 'ի վերայ քո կատարեսցին։

Ասաց Ամիրմուսէն՝ Իմ բանիս մի՛ առ-
նուր զայն 'ի նմանէ. ես անպարտ եմ յերդ-
մանէն, զոր դշխոյին գրեալ է։ Ոչ լուաւ
Տալիպն զխրատն, այլ գնաց յառաջ՝ եւ
կամեցաւ առնուլ զթագն 'ի գլխոյ դշխոյին։
Իսկ այրն այն սեաւ որ զլսխան ունէր՝ ե-
հար 'ի վերայ թիկանցն եւ ընկէց զՏալիպն.
եւ ապիտակ այրն որ զթուրն ունէր՝ եհար
զգլուխն եւ եհատ։

Իսկ Ամիրմուսէն զարմացեալ փախեաւ
'ի բաց. եւ ողբաց զՏալիպն որ կորեաւ իւ-
րով յիմարութեամբն, եւ ոչ անսաց խրա-
տու նորա։

Եւ վասն այնորիկ ասաց Ամիրմուսէն
զողբս զայս 'ի վերայ Տալիպին։

Զխրատն զոր ետուս ես քեզ, ոչ լուար,
այլ իմ սիրելի. որ ոչն ողորմի դմա, նը-
մանն է սատանայի։ Որ բաղում գանձ ժո-
ղովել կամի, նա եւ զիւրն զամենայն կո-
րուսանէ. ինքն մնայ կարօտեալ 'ի գանձու-
ցին զոր ունի։

Յայնժամ եկ Ամիրմուսէն 'ի գմբէթին
արտաքս։ Եւ բարձին ամենեքեան որ-
չափ ինչ կարացին, ականս եւ մարգարիտ,
յակինթ եւ չափիղայ. այլ եւ գտին լի տամբք

ձոյլ ոսկի։ Եւ իբրեւ բարձին ամենեքեան զամենայն ինչս, եւ զոսկին որ 'ի դանձուն էր ոչ կարացին բառնալ, ասացին թէ՝ Եթէ ամենայն մարդիկ որ կան 'ի Բաբելոն, եւ զբաստաք եւ կառք բառնայցեն զամենայն զդանձս զայս, ոչ բաւեն հանել 'ի քաղաքէս։

Եւ փակեցին զդրունսն եւ գնացին ըզ ծուլեղերքն զքառասուն օր։ Եւ տեսին բըլուր մի բարձր, եւ 'ի վերայ բլրոյն մարդիկ սեաւս եւ այլադէմս։ Եւ 'ի ներքոյ բլրոյն էր քարափոր, էջ Ամիրմուսէն անդըր, եւ փախեան սեաւ մարդիկն. բազումք մտին 'ի քարափորն 'ի ներքս, եւ այլք թաքեան 'ի լերինսն։ Իբրեւ պահ մի կացին, անդրէն եկին սեաւ մարդիկն եւ հայէին ընդ հեծեալսն։ Գնաց ծերունին, ձայն ետ եւ խօսեցաւ ընդ նոսա։

Եւ սեաւքն գնացին բերին զթագաւորն իւրեանց առ Ամիրմուսէն։ Եւ հանդերձ իւրեանց սեաւ էր եւ մազեղէն։ Նստան կերան եւ արբին եւ ուրախ եղեն։ Ասաց Ամիրմուսէն ցծերն՝ Հարցանել զթագաւորն, եթէ մարմնաւո՞ր ի՞նչ ի՞ցեն թէ անմարմի՞ն։ Իբրեւ հարցաւ՝ ասաց թագաւորն. Մե՛ք մարմնաւոր եմ՝ յԱբիրայի որդւոցն։ Ասաց Ամիրմուսէն. Զի՞նչ հաւատս պաշտէ՛ք։ Ասաց մի ոմն 'ի սեւոցն նշանաւորաց թէ՝ Երեւեցաւ յայսմ ծուլուս մարդ լուսեղէն.

որոյ բովանդակ անձն լոյս տայր, եւ լուսաւորէր զերկինս եւ զերկիր։ Եւ ասաց մեզ. Լուարուք ցեարք որդիք՝ եւ 'ի միտ առէք. հաւատացէք յԱրարիչն երկնի եւ երկրի, ծովու եւ ցամաքի. սարսեցէք 'ի նմանէ, զի նա զամենայն տեսանէ. եւ նա միայն է Աստուած կենդանի. աղօթս մատուցէք նմա հանապազ. եւ տուք ողորմութիւն աղքատաց։ Նա խրատեաց զմեզ եւ ուսոյց զմի Աստուած պաշտել. եւ ինքքն վերացաւ լուսեղէն ամպօք յերկինս։ Եւ մեք զամենայն օր եօթն անգամ աղօթս մատուցանեմք. եւ զԱստուած փառաւորեմք, եւ գոհանամք զնմանէ։

Եւ ասաց Ամիրմուսեն զայս բանս։

Փառք քեզ արարիչ Աստուած, որ ամենայն ուրեք փառաւորիս, եւ բանիւ դու բարձեալ ունիս զամենայն երկիր եւ զերկինս։ Այլ եւ կամիս զզատեն 'ի չարեաց որդւոցն Ադամայ, զի յառանց երեկոյի աւուրն լուիցեն նոքա զՆկայքն առիս։

Յայնժամ եհարց զթագաւորն սեաւ թէ՝ Գառանիցի՞ ասա 'ի կժոցն զորս Սողոմոն ընկէց 'ի ծով յորժամ բարկացաւ նա դիւաց եւ 'ի պղնձէ կուժ արկ զնոսա։ Ասաց նա թէ՝ Որչափ պիտոյ է տեսանել վասն բերեն որսորդքն, բանամք՝ եւ տեսանեմք։ Ասաց Ամիրմուսէն՝ Մեք վասն սարիորոյն այնոցիկ

եմք եկեալ այսքան ճանապարհ։ Յայնժամ հրամայեաց սեաւ թագաւորն սրսորդացն, որ բերին երկոտասանկուժ առաջի Ամիրմուսէնին։ Յայնժամ չատ ուրախ եղեւ Ամիրմուսէն, եւ յոսկի արկղ եդ զսափորսն։ Եւ յոյժ պատիւ արար սեաւ թագաւորին. ըզգեցոյց նմա պատմուճան եւ եառ նմա բազում ոսկի. ականս պատուական եւ անարի ձիան։ Շնորհակալ եղեւ սեաւ թագաւորն եւ չէառ. եւ ասաց թէ՝ Այդ մեզ չէ պիտոյ. ոչ վաճառեմք եւ ոչ հեծնումք. մերն այն է զի որս առնեմք եւ զմիսն ուտեմք, եւ զմորթն զգենումք եւ զԱստուած փառաւորեմք։ Յայնժամ յորս ել սեաւ թագաւորն իւրովք հեծելովքն. կէս հեծելոյն 'ի ծուլ, եւ կէսն 'ի ցամաք, եւ որսացան ու դիզեցին։ Եւ այլ բազում հրեղէն ձի հանին 'ի ծովէ, եւ մարդադէմ դազանս եւ անասունս՝ որ ոչ լինին յայլում երկրի, եւ բերեալ եառն առ Ամիրմուսէն։ Այլ յամենայն ուրբաթու դիշերին դայր 'ի ծովէն 'ի դուրս ահեղագոչ ձայն մի բարձր՝ որ ասէր. Փա՛ռք Աստուծոյ այնմ որ արար զերկինս եւ զերկիր. եւ փա՛ռք նորա մեծութեանն՝ որոյ զամենայն կենդանի մահկանացու արարեալ է, եւ ինքն միայն է անմահ։ Լուաւ Ամիրմուսէն եւ եհարց զսեաւ թագաւորն. Ո՞վ է այն՝ որ յամենայն յուրբաթու 'ի դիշերի փառաւորէ

զԱստուած։ Ասաց Թագաւորն. մեք ոչ ինչ տեսանեմք բայց զձայնն լսեմք։

Եւ ասաց Ամիրմուսէն զօրհնութիւնս զայս։

Աստուած արարիչ բարի, քո անուանդ միշտ փառաւորեալ է. տէր եւ դու երկնի եւ երկրի, անակիզն եւ անհաս։ Վերին զօրքն զքեզ օրհնեն, անդադար եւ առանց լռելոյ. այլ եւ երկրածինքս ամենայն խոնարհեալ քեզ երկրպագեն։

Ցայնժամ սեաւ Թագաւորն երկու լաւ մարդ եդ ընդ Ամիրմուսէնին։ Եւ Ամիրմուսէն չնորհակալ եղեւ, եւ ողջոյն եառն միմեանց։ Եւ տարան զԱմիրմուսէն ընդ կարճ ճանապարհ յերկիրն Ականացւոց։

Ցայնժամ Ամիրմուսէն եառ ոսկի եւ արծաթ բազում, եւ ականս պատուականս եւ յուղարկեաց զթագաւորն։ Եւ Թագաւորն չէառ. ասաց թէ՝ Տուր ինձ զսափորսն, զոր տեսանեմ։ Ապա Ամիրմուսէն սափորս երկուս եառ Թագաւորին։ Եւ Թագաւորն եբաց զբերան սափորոցն. եկ սեաւ մուխ եւ բարձրացաւ յօդս. եւ եղեւ 'ի կերպարանս գիշատեսիլ մարդկան։ Աղաղակեաց եւ ասէ. Սողոմոն, Սողոմոն որդի Դաւթի մարգարէի, այլ ոչ գործեմ զոր գործեցիս, այլ կամ 'ի հրամանս քո. զի գիտաց զեն թէ դեռեւս Սողոմոն կենդանի է։ Եւ յոյժ զարմացաւ Թագաւորն։

Ապա տարաւ Ամիրմուսէն զծերն առաջի թագաւորին եւ ասաց, Ո՛վ մեծ թագաւոր, որ զայս խնամատուն ծերս ընդ մեզ եառուր, սա տարաւ զմեզ եւ եբեր։ Եւ հօթըն ուղտ ոսկի եւ արծաթ ետ ծերոյն Ամիրմուսէն. եւ թագաւորն եւս զգեցոյց պատմուճան ծերոյն։ Իսկ զԱմիրմուսէն առաւել մեծարեաց եւ ետ նմա անարի ձիան եւ յուղարկեաց զնա յԵգիպառս։ Լուաւ Տէրն Եգիպտոսի եւ յուղարկեաց մարդ առ Ամիրմուսէն. եբեր եւ յոյժ պատուեաց զնոսա։ Ապա ելին անտի եւ գնացին յերկիրն իւրեանց, եւ հասին 'ի Բաբիլոն։

Խալիֆայն ել ընդ առաջ նոցա ուրախութեամբ, եւ արարին ուրախութիւն մեծ։ Եւ բաշխեաց Խալիֆայն աղքատաց ողորմութիւն բազում վասն գալոյ նոցա. զի երեք ամք էին, յորմէ հետէ գնացեալ էին։ Ապա Խալիֆայն եհարց զԱմիրմուսէն։ Եւ Ամիրմուսէն սկսաւ խօսիլ կարգաւ թագաւորին։ Զ Սողոմոնի կուռէն՝ զոր քաջն ասաց, այլ եւ զքաղաքին։

Ու զդշխոյին գիրն ընթերցան առաջի Խալիֆային։ Ապա յոյժ ուրախ եղեւ Խալիֆայն ընդ նոցա գնալն եւ ընդ գալն. եւ եհարց եթէ Ո՞ր իցէ Տալիպն։ Ապա Ամիրմուսէն պատմեաց զմահ Տալիպին։ Իբրեւ լուաւ Խալիֆայն՝ ասաց Վա՛յ նմա, զի իւրով յիմարութեամբն կորեաւ։

Եւ ասաց զողբս զայս 'ի վերայ նորա:

Ով իմ բղեաչխ հէք եւ տգէտ, ընդէր կորեար ընդ վայր եւ 'ի նանիր. զդէմս նորա տեսեր դու, եւ զգանգատն լուար: Միթէ դու անմա՞հ էիր, զի զնորա թագն կամեցար խլել. Մուսէն քեզ խրատ ետ, ոչ անսացեր նմա, եւ անձամբ զանձն կորուսեր:

Յայնժամ հրամայեաց Խալիֆայն թէ Բերէք զսափորան զի տեսից: Բերին ըզ սափորան եւ բացին առաջի նորա. եւ անդէն եկ 'ի սափորոյն մուխ սեւագոյն քան զառաջինն: Եւ իբրեւ ետես զայն Խալիֆայն՝ զարմանք կալան զնա: Եւ ետփառըս Աստուծոյ, զի մեծ պատիւ էր այն Սողոմոնի, որ իւրով իմաստութեամբն յայն նեղութիւն եւ 'ի բանտ արկեալ էր զդեւսըն. այնպիսի չնորհս մարդոյ հողեղինի չէ տուեալ Աստուծոյ բայց միայն Սողոմոնի: Եւ ապա հրամայեաց եւ բերին զամենայն ոսկին եւ զարծաթն. զկերպասն եւ զականսըն պատուականս եւ զմարգարիտն առաջի նորա: Եւ տեսեալ զնոսա զամենայն, շատ եղաց:

Եւ ասաց զողբս զայս:

Եղուկ տամհազար անգամ տեսառն քում. որ յայնչափ անհուն զանձուց, պատանամի

միայն տարեալ է։ Երթամ աղաչեմզԱստուած, որ տայ ինձ իմաստութիւն. զատ տամ եւ անդ առնում, եւ այնպէս ինչ ոչ թողում յերկրի։

Եւ ապա հրաման ետ բաշխել աղքատաց զամենայն ինչս եւ զկերպասն զորս բերեալ էր նոցա. եւ ասաց թող Աստուած զայս ամենայն համարեսցի հոգւոյ տեառն նոցա։

Ապա ետ բերել եւ ինքն զիւր ինչս եւ զարծաթ եւ զոսկի եւ զամենայն մեծութիւն, եւ ետ բաշխել աղքատաց։ Միայն կտաւ մի առ վասն իւր, եւ ասաց թէ՝ Խրատու դշխոյին անսամ. զատ տամ, եւ անդէն զտանեմ յԱստուծոյ։ Զորս 'ի բանտին էին՝ արձակեաց. զծառայսն ազատեաց. եւ զհարկն վերացոյց յաշխարհէն։ Եւ զոմն ի նշանաւորաց եղ յիւր տեղի. եւ ինքն չինել ետ սենեակ մի աղօթանոց. եւ եմուտ 'ի ներքս, եւ եօթնամ աղօթս արար. եւ ապա փոխեցաւ յաշխարհէս։

Եւ Ամիրմուսէն եւս ետ զիշխանութիւնն իւրում որդւոյ. եւ բաշխեաց զիւր ինչս եւ զոսկին եւ զմեծութիւնսն ամենայն աղքատաց։ Զզեցաւ մաղեղէն եւ մաշկեղէն, եւ գնաց 'ի լեառն բնակեցաւ ապաշխարութեամբ մինչեւ 'ի մահ։ Այսպէս փոխեցան 'ի սուտ եւ 'ի փուտ յաշխարհէս, եւ հասին յաւիտենական կենացն յերկնաւոր ուրախութիւնն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ

ՓԱՀԼՈՒ ԹԱԴԱՒՈՐԻՆ

Իր սա մեծ թագաւոր եւ տէր յարեւելեան աշխարհին. եւ էր իմաստուն եւ առաքինի։

Սիրէր զաղքատութիւն, եւ ատեայր զայս կեանս եւ ասէր. Փա՛ռք Աստուծոյ կենդանւոյն՝ որ կայ եւ մնայ յաւիտեան։

Եւ ասաց ընդ իւր անձինն զերգս զայս։

Եւ ոչ մի ինչ ատի կենաց արժէ զմէն մի մաղ անտի կենացն. իբրեւ բաժանի հոգին՝ բազմաց 'ի մարդկանէ կայ մնայ կրեալ պատուհաս։ Ընդէր կամիս սիրել զայն ինչ որ զոյգ ընդ կենաց քոց անցանէ. ժողովեա դու զանանց բարին, եւ արա անտի քեզ դարմանս։ Բարիս գործեա, եւ բաշխեա զինչս քո աղքատաց, զի մի յաւուր մահուան քո հոգի եւ մարմին քո տագ-

նապեսցին։

Եւ 'ի ժամու աղօթիցն հանէր զամենեսեսին արտաքս. եւ ինքն միայն մնայր. եւ աղօթս առնէր 'ի վերայ ոսկի աթոռոյ։

Եւ դարձեալ ասէր առանձին զերգս զայս։

Մի՛ լինիր ծոյլ յաղօթել, կա՛լ յանձին եւ զսէրն Աստուծոյ. յիշեա զահաւոր անուն նորա, զի փրկեսցիս որպէս Դաւիթն էր։ Ի ձեռս նորա են երկինք եւ երկիր. նա արարիչ է ամենայնի. Ջանա դու ըզբարիս խնդրել, զի ապրեսցիս 'ի հրոյն գեհենի։

Զամենայն օր զսովորական աղօթս իւր առնէր. եւ յաւուր միում հայեցաւ ընդ ապարանսն 'ի վեր եւ ետես զոմն 'ի կերպարանս ուղտապանին իւրոյ, եւ ասաց. Ո՞վ ետ քեզ հրաման ելանել այդր։ Ասաց այրն, Ես ուղտապան եմ, եւ կորուսի զուղտն իմ, ասա կամիմ գտանել զնոսա։ Ասէ թագաւորն. Միթէ բնակիցի՞ ուղտապարանս, զի ասես թէ անդ կամիս գտանել զնա։ Ասէ ուղտապանն. Եւ դու զի՞ արդ խորհիս գտանել զԱստուած 'ի վերայ ոսկի աթոռոյ, 'ի վերայ փեսրալից բարձի, եւ 'ի վերայ մարգարտայեռ գահու։

Այդ աղօթք չեն ընդունելի Աստուծոյ. այլ արի՛, է՛ Ջ յաթոռոյդ, եւ եկ 'ի վերայ

մոխրոյ, եւ այնպէս երկրպագեա Աստուծոյ. եւ ապա գտանես զողորմութիւն։ Եւ ասաց ուղտապանն՝ որ 'ի կերպարանս մարդոյ երեւեցաւ։

Զերգս զայս։

Երկրպագեա անմահ բանին, թաւալեցո զերեսս քո 'ի վերայ հողոյ. զի 'ի հողոյ անտի արար զքեզ, եւ 'ինմանութիւն պատկերի իւրոյ արար զքեզ։ Ցորչափ սիրես դու զկեանս զայս, անդարման գնաս աստի 'ի հող, մի՛ անչահ կենօք կեայր, մի՛ փոխեր զոսկին 'ի պղինձ։

Զայս ասաց եւ անյայտ եղեւ այրն այն որ 'ի կերպարանս ուղտապանի էր։ Ապա իմացաւ թագաւորն, եթէ հրեշտակ էր այրըն այն. եւ անկաւ զեղջ 'ի միտս իւր, եւ ելաց դառնապէս. եւ էջ յաթոռոյն 'ի գետին, եւ երկիր եպագ Աստուծոյ։ Եւ թէպէտ ատէր զիւր կեանս, այլ առաւել ատեաց այնուհետեւ զաշխարհս եւ զմեծութիւն։

Եւ ասաց 'ի վերայ անձին իւրոյ զերգս զայս։

Զանամ սիրել զհոգիս, այլ մարմինս խաբէ զիս. որպէս մինչ Բազէ խոյանայ, կաքաւք անկանին 'ի բուռն։ Կուտեցան առ իս մեղք բազում, նման հեղեղաց անձրեւոյ. սրով մահու խոցեալ եմ, եւ

լեալ եմ որպէս վիրաւոր։

Եւ ապա կոչեաց զիւր մեծամեծսն եւ զիշխանս. եւ եբեր զիւր որդին, եւ նըստոյց առաջի նոցա յաթոռն իւր, եւ նոքա ո՛չ կամեցան. եւ նա՝ ուժով եւ իմաստութեամբ հաւանեցոյց զիշխանսն եւ ըզ զօրսն։ Եւ ինքն զաղտաբար երեալ՝ ետ զանձն իւր յաղքատութիւն եւ ել յաշխարհէն իւրմէ, եւ եթող զթագաւորութիւնն վասն սիրոյն Աստուծոյ։

Եւ ասաց վասն անձին իւրոյ զերգս զայս։

Ցիշեա՛ զԱրարիչն Աստուած, տո՛ւր հոգւոյդ առնել պատարագ. ընդ մութն է՞ր կամիս գնալ, ե՞րբ յաստիս լիցի քեզ դարման։ Զմարմինդ մինչեւ ցե՞րբ սիրես. եւ լինիս նմա կամակից. ընկերք քո գընացին աստի. բնակեցան 'ի տունս անչափրս։ Եւ քեզ հանապազ ասեմ. հաւիր ապրագ դու նոցա. ապա թէ ոչ հէք անձնդ առաքի 'ի հուր եւ 'ի կրակ։

Ապա գնաց յաշխարհէ յաշխարհ, եհաս 'ի Բաբիլոն, եմուտ 'ի քաղաքն, եւ կամեցաւ կալ անդ 'ի կերպարանս մուրացիկ աղքատի։ Եւ մարմինն նեղէր զնա վանուտելոյ եւ ըմպելոյ եւ ագանելոյ. զիրսովոր էր 'ի սէր աշխարհիս. եւ կեցեալ 'ի տունս արքունի։ Ապա իմացաւ հնարս, եւ երթայր 'ի շուկայն, եւ լինէր սուտ յիմար։

եւ մարդիկն ծեծէին զնա. եւ աղայք ընդ նմա երթային եւ նեղէին զնա։

Վարեր եւ ասեր 'ի մէջ մարգկան զերգս զայս։

Մարդիկ, մի՛ կայք անհոգ. զաղտ մեղաց ձերոց լուացէք. ողորմեցարուք աղքատաց. եւ այնու զմեղս ձեր քաւեսջիք։ Դարձարուք 'ի ճանապարհէ մեղաց, անդ չինեցէք ձեզ տունս. զկամս մարմնոյ մի՛ կատարէք, եւ մի՛ թողուք նեղել նմա զձեզ։

Եւ հեծնայր յեղէգն, եւ ընթանայր 'ի վեր եւ 'ի վայր, եւ ասէր բանս զարմանալիս։

Ասէին մարդիկն որ ընդ նմա երթային, թէ 'ի բերանոյ դորա հեղուն մարգարիտք, եւ ոչ գիտէ զինչ ասէ. վա՜հ, յիմար մըտօք։ Եւ ապա եղին նմա անուն փահլուլ. եւ նա եղեւ ջրկիր, եւ կրէր ջուր 'ի չուկային, եւ տային նմա հաց եւ դրամ. այլ նա զամենայն տայր աղքատաց։

Եւ ասաց զերգս զայս։

Աղքատութիւն եւ պահք եւ աղօթք իրերաց են ընկերք. սիրեա զայդ երիս բարիս, զի փրկիս 'ի մեծ տանջանաց։ Մի՛ զմարմնով 'ի ձեռաղ առնուլ, զնան աւուրք 'ի ձեռաց. այս աւուրք զոր մեք

ունիմք, երթան եւ 'ի բաց մեկնին։

Յաւուր միում երթայր 'ի շուկայն 'ի վայր՝ եւ ահա ոմն խլեաց զփակեղն նորա 'ի գլխոյն՝ եւ փախեաւ։ Եւ գնաց փահլուլն 'ի գերեզմանս եւ խնդրէր զայրն որ զփակեղն էառ եւ փախեաւ։ Ետես զնա ոմն եւ ասաց. Է՛ փահլուլ՝ ասա զի՞ որոնես զայրն. գնա՛ 'ի շուկայն խնդրեա։ Ասաց փահլուլն. Ո՛վ եղբայր, ուր եւ երթայ վաղ կամ անագան այսր պարտի գալ։

Եւ ասաց զերգս զայս։

Եթէ՛ չատ զրկիցես եւ եթէ սակաւ, եւ վայելեսցես զերկիր խնդալով, քեզ չի՛ք հնար, հարկ է աստի երթալ, եւ ըզմարմինդ ծածկել ընդ հողով։ Դարձիր եւ զբարիս գործեա, զիտ վաղվաղակի բըժիշկ եւ դեղ, զի մի՛ յահաւոր ատենին մեծի ահիւ եւ ամօթով լինիցիս։

Ընտելացաւ ընդ քաղաքացիսն, եւ ճանաչէին զնա ամենեքին. յաւուր միում այր ոմն ետ նմա միս թէ՝ Տար զդա 'ի մեր տուն. նա էառ եւ տարաւ եդ 'ի գերեզմանս։ Դարձաւ եւ եկն այրն այն 'ի տուն իւր եւ ետես զի չէր բերեալ այրն զմիսն 'ի տուն։ Զոքաւ եդիտ զփահլուլն 'ի վաճառանոցին, եւ ասէ. Ո՞ւր է միսն, զի՞ արարեր։ Ասէ փահլուլն. Ի քո տուն տարայ զնա։ Ասէ այրն այն, Արի, ցոյց

ինձ զիմ տուն։ Եվ փանլուն եւ առեալ զայրն ած զնա 'ի գերեզմանն։ Ասէ այրն. Ա՞յս իցէ իմ տուն։ Ասէ փանլուն. Այո, այս է տուն քո. տունն յորում այժմ կաս, չէ մնացական. զի յետոյ ուրեմն այսր ուներս գալ։

Եւ ասաց գերգս զայս։

Աշխարհիս սահմանքն այսպէս են, մերթ ընուն, մերթ թերանան. նա որ բառնալ 'ի թիկունս կարող է թեթեւացուցանէ զիւր բեռն։ Լուարուք դուք հիւսան, որ զմեռելոց արկեղս չինէք. մին գայ եւ մին երթայ. այլ հիւսանն չմնայ անգործ։

Զարմացաւ այրն ընդ բանս փանլուլին թէ մեք զդա յիմար կարծէաք, նա մեզ վարդապետ եղեւ։ Եւ ունէր սովորութիւն փանլուն զի 'ի գերեզմանս երթայր, անդ կայր, եւ բաղում այն էր զի անդ ննջէր։ Յաւուր միում խալիֆայն եկեալ չրջէր բաղում հեծելովք. եւ յանցանելն ընդ գերեզմանս, ետես զփանլուն. եւ ասաց ցփանլուն թէ Զինչ առնես անդ։ Եւ ասէ փանլուլ. Ո՛վ տիեզերակալ խալիֆայ, զայս ամենայն մեռեալս նզովեմ։ Եւ ասէ խալիֆայն. ընդէ՞ր նզովես։

Եւ ասաց զերգս զայս:

Եթէ բազում ինչ զրկէ ոք եւ եթէ սակաւ՝ ոչ կարէ տանել ընդ իւր. մարդոյ պարտ է այնպէս ջանալ զի 'ի կեանս որ գալոց է՝ մի՛ ամաչեսցէ: Որ ասան տայ անդ առնու. եւ որ ասուէն զրկէ՝ անդէն հատուցանէ. յայն կեանս չիք հնար թէ ոք արծաթով հատուսցէ զպարտս իւր:

Զարմացաւ Խալիֆայն՝ եւ ասայ. փառք Աստուծոյ կենդանւոյն՝ որ կայ եւ մնայ յաւիտեան. յիմարն այնչափ խելօք խօսի եւ ասայ թէ Այրս այս իմաստուն է, եւ վասն մեզայ զայն առնէ. զի եթէ գայիմար էր՝ զայնպիսի բանս ոչ ասէր. եւ դարձաւ Խալիֆայն 'ի քաղաքն: Եւ օր մի այլ հեծեալ էր Խալիֆայն, եւ անցանէր ընդ գերեզմանն, զի ճանապարհն ընդ այն էր. եւ եառեալ զփանդուրն եւ ասէ ցնա. Զի՞նչ առնես 'ի գերեզմանս ասա: Եւ ասէ փանդուրն. Բազում աւուրք են զի ասա կամ եւ չափեմ զիմ գերեզման եւ զքոյն այլ քոյն աւելի չէ քան զիմն, զու Խալիֆայ ես, եւ ես աղքատ մուրացիկ եմ. եւ քո հողն եւ իմն միով չափով է:

Եւ ասաց զերգս զայս:

Է՛ մարդ մի՛ զհոգիդ դատիր. եւ զմարմնդ առներ սիրելի. դարձիր 'ի մեզայ

ճանապարհէ, զի մի՛ լինիցիս ողորմ եւ լա-
լի։ Զանա եւ զբարիս գործեա, զի չուն
ընդ քեզ նայի. յայսմ հողոյ դու այնպէս
գնա՛, զի մի հոգի քո մատնեսցի 'ի հուր։

Եւ ասաց Խալիֆայն ընդ իւր մեծա-
մեծան. Ցեսէք զիա՛րդ իմաստուն են դո-
րա խօսքն. եւ համարձակապէս խօսի.
չէ՛ պարտ զի զդա 'ի մէնջ թողցուք երթալ. եւ ապա հրամայեաց կոչել զնա յիւր ապարանս։ Եւ յաւուր միում Խալիֆայն 'ի յաթոռոյն ելեալ գնացեալ էր, եւ գընաց փահլուլնեանաւ յաթոռն Խալիֆային։

Եւ եկին ապասաւորքն՝ սկսան ծեծել զնա, եւ նա ճչեաց ուժգին։ Լուաւ Խալիֆայն՝ եկն եւ բարկացաւ ծառայից իւրոց, եւ ասէ. Է՛ փահլուլ՝ ընդէ՞ր ծեծեն զքեզ։ Ասաց փահլուլն. Է՛ տիեզերակալ Խալիֆայ, եթէ զիս զան հարկանեն՝ զի ժամ մի նստայ յաթոռդ, ապա զքեզ զի՞նչ ոչ առնիցեն 'ի դատաստանիդ։

Եւ ասաց զերգս զայս։

Մարդիկ մի՛ հարկանէք դուք զիս, ես ոչ ցանկամ փառաց աթոռոյդ. զիմն քակեցի եւ ելի, եւ ոչ ունիմ միտս չինելոյ։ Իմ կեանքս չեն յաչս իմ, եւ ոչ ունիմ պատճառս ուրախ լինելոյ, եդի զիմ մարմնոս 'ի մահ, զի չունիմ հոգի տանջելոյ։ Է՛ մարդ որ փառացդ հասեր, տէր

երկրի եղեր եւ աթոռոյ. դու այնպէս խը-
նայեցեր 'ի քեզ, որպէս չէ հնար մարդոյ։
Ոչ ունիս երկիւղ 'ի մահուանէ, եւ ոչ
պատրաստես պաշար գնալոյ. զիարուս աշ-
խարհիս այլոց թողուս, եւ լինիս դու ափ
մի հող։

Լուաւ Խալիֆայն զայն իմաստուն բա-
նըս, եւ հարցանէր բազում ինչ Փահլու-
լին. եւ նա հնարիւք տայր զպատասխա-
նին։ Եւ յաւուր միում յայլ եհարց Խալի-
ֆայն զՓահլուլն եւ ասէ. Փա՛հլուլ՝ ասա
ինձ, այսօր զի՞նչ առնէ Աստուած։ Ասէ
Փահլուլն. Հարցումնդ այդ դժուարին է.
այսօր համբերեա ինձ, վաղիւն ասեմ։ Եկն
վաղիւն, եւ հեծեալ էր 'ի սեաւ էշ մի։
Ասէ Խալիֆայն. Ասա ինձ, զի՞նչ առնէ
Աստուած։ Ասէ Փահլուլն. Հրամայեա, զի
ամենայն ծառայքդ ելցեն արտաքս, եւ
ես տամ զպատասխանին։ Եւ հրամայեաց
Խալիֆայն ծառայիցն ելանել արտաքս. եւ
մնաց ինքն Փահլուլն միայն։ Եւ ասէ Խա-
լիֆայն, Զի՞նչ առնէ Աստուած 'ի ժամուս
սատ յայսմիկ։ Ասէ Փահլուլն. Է՛ Խալի-
ֆայ՝ արի պահ մի նիստ յիմ էշն, եւ ես
'ի քո յաթոռդ նստիմ. յայնժամ ասեմ
քեզ, թէ զինչ առնէ Աստուած։ Եւ հա-
յեցաւ Խալիֆայն՝ զի մարդ ոչ երեւէր 'ի
սրահին, եւ նստաւ յէշն. եւ Փահլուլն 'ի
Խալիֆային աթոռն նստաւ, եւ ո՛չ խօսէր։

Ասէ Խալիֆայն. Է՛ր ոչ խօսիս, զի՞նչ առնէ Աստուած։ Ասէ Փահլուլն. Զի՞ պիտոյ իցէ խօսիլ, ոչ գիտես զինչ առնէ Աստուած. զքեզ որ Խալիֆայդ ես, յէշն իմ նստոյց. զիս որ Փահլուլս եմ, 'ի քո աթոռդ նստոյց. ահա զայս արար 'ի ժամուս յայսմիկ. եւ Խալիֆայն զարմացաւ, եւ ոչ կարէր խօսել։

Եւ ասաց Փահլուլն զերգս զայս։

Դու զանքնինն ընդէ՞ր քննես, այնու զի ոչ կարես նմա հասուլինել մտօք. զԱստուած ոչ կարէ տեսանել կամ իմանալ զնա մարդ կենդանի։ Դու չես տէր կենաց քոց, եւ մնաս յերկրի անչունչ. այլ նա տէր է տիեզերաց, եւ բառնայ կրէ զերկինս եւ զերկիր միանգամայն։

Ծիծաղեցաւ Խալիֆայն եւ ասէ. Փառք Աստուծոյ կենդանւոյն եւ բարձրելոյն յաւիտեան. զի այս աղդ յիմարք զարմանալի պատասխանիս տան. բայց թուի լինձ, թէ չէ՞ դա յիմար, այլ իմաստուն է. եւ գնաց Փահլուլն։ Եւ անցին աւուրք ինչ 'ի վերայ. եւ հրամայեաց Խալիֆայն կոչել զնա։ Եւ նա նստաւ յէշ մի, եւ եկն առ Խալիֆայն։ Ծիծաղեցաւ Խալիֆայն եւ ասէ. Փառք Աստուծոյ կենդանւոյն եւ բարձրելոյն յաւիտեան։

Եւ ասէ Խալիֆայն. Իրա՞ ինչ կամիմ

հարցանել քեզ, եւ դու զուղղորդն ասա։ Եւ նա ասէ՝ Հրամայեա, Խալիֆայ։ Ասէ Խալիֆայն. Քանի՞ աստեղք գոն յերկինս։ Ասէ Փահլուլն. Ես քաջ գիտեմ, զամենայն թուեալ եմ. որչափ յիշոյս վերայ մաղք գոն՝ այնչափ աստեղք են յերկինս. եթէ ոչ հաւատաս, էջ եւ թուեա։ Եւ էջ Խալիֆայն յաթոռոյն, եւ սկսաւ համարել զհերս իշոյն։ Ասէ Փահլուլն. Նախ զաղին թուեա։ Եւ սկսաւ Խալիֆայն այնպէս առնել, եւ ոչ կարէր, ծիծաղեցաւ Խալիֆայն։

Եւ ասաց Փահլուլն զերգս զայս։

Դու որ ոչ գիտես այժմ թէ որչափ են հերք գլխոյդ, զի՞ հարցանես զիս թէ աստեղք երկնից քանի են։ Զոր ինչ ոք գործէ ասա՝ ընդ ամենայնի համարս տալոց է անդ, որչափ գանձս ժողովէ նա զրկելով, զամենայն ասա թողու, տանել ոչ կարէ։

Ամաչեաց Խալիֆայն, եւ 'ի բաց եկաց 'ի համարելոյ զաղի իշոյն, եւ ել Նստաւ յաթոռն։ Եւ ասէ. Փառք Աստուծոյ՝ որ այսպէս գիտութեամբ պատուէ զսիրելիս իւր եւ տայ զիմաստութիւն ում կամի. այնպէս զի ոչ ոք կարէ տալ նմա պատասխանի 'ի բանս եւ 'ի հարցմունս նորա։ Այսպիսի վարուք կեցեալ Փահլուլն՝ եւ երանելի կենօք փոխեցաւ յանվախճան թագաւորութիւնն։

ԽՐԱՏՔ

եւ

ՅՈՐԴՈՐԱՆՔ ՕԳՏԱԿԱՐՔ

Արարեալ Զարմանազան Թագաւորին՝ զոր Նուշիրաւան ասեն։

Սա ասեն Թագ մի ունէր ոսկի եւ զարդարեալ պատուական ակամբք, եւ չինեալ էր քսան եւ երկուք անկեամբք. եւ յամենայն անկիւնան այս խրատք գրեալ էին. եւ յորժամ ելանէր արտաքս՝ կարդայր առաջի զօրացն, եւ ասէր թէ՝ Ի միտ առէք. եւ ապա դնէր 'ի գլուխն։ Եւ Թագն էր յակինթ եւ զմրուխտ ակամբք եւ անդամանդիւք եւ տպազիոն ակամբ յօրինեալ։

Ա.

Զանձնահաճ այր յինէն 'ի բաց պահեցէք։ Արժանաւորաց յիմ դանձէն բաժին տուք։ Առաջի բանգէտ մարդկան անպատահ բանս մի խօսիք։ Զանդիւան մի խընդ-

րէք։ Ի գործել ձեր, մի՛ չտապէք։ Զոր ինչ առնելոց էք, ժամէ 'ի ժամ մի՛ թողուք։

Բ.

Ի սկիզբն եւ 'ի կատարած իրաց հայեցարուք։ Յո՛ր տուն եւ մտանէք, նախ զելն իմացարուք։ Զամենայն ինչ կամ կտաւ, տասն անգամ չափեցէք, եւ ապա կտրեցէք։ Զփորձեալն կրկին մի՛ փորձէք։ Զփորձեալն անփորձի մի՛ տայք։ Զմարդ՝ զոր չէք փորձեալ, նմա մի՛ վստահ լինիք։ Զխոստումն որ 'ի ձեզ է, մինչեւ 'ի ձեր անձն մի՛ խնայէք։ Սակաւ խոստացէք, եւ բազում կատարեցէք։

Գ.

Անուանի եւ խոնարհ արուեստ ուսարուք։ Զճշմարտութիւն սիրեցէք։ Զկարողութեան արդիւնս գիտացէք։ Զայր համբերող ծաներուք։ Զայս կեանս, մի օր գիտացէք։ Զառողջութեան պատուականութիւն գիտացէք։ Զձեր կեանս անգիտութեամբ մի՛ անցուցանէք։ Ընդ այլոց տըրտմութիւն մի՛ խնդայք։ Ընդ կոտորեալ՝ ընդ գնացեալ՝ ընդ թափեալ՝ ընդ այրեալ՝ մի՛ տրտմիք։

Դ.

Ընդ մեծամեծաց յորոգայթն՝ կոծեցա-

րուք։ Մարդոց՝ վասն ամենայն իրաց համբերեցէք։ Ի տեղի ուր համբերել պարտէ, մի՛ փութայք։ Ընդ ամենայն մարդկան, ոխակալ մի՛ լինիք։ Ամենայն ոք՝ զիւր չափն թող գիտասցէ։ Զձեր զոսն՝ քան զձեր անկողինն աւելի մի՛ մեկնէք։ Ի պատերազմէ զերեսս մի՛ դարձուցանիցէք։ Զայլոց կռիւն 'ի ձեր յանձն մի՛ առնուք։

Ե.

Կռիւ թէ հանդիպի 'ի միջի ձերում, խնդրեցէք իրաւունս, այլ արագ հաշտեցարուք։ Ի սիրտս ձեր նախանձ մի՛ պահէք։ Զամենայն ինչ համբերելով արարէք։ Նախ զնորն տնկեցէք, եւ ապա զհինն խլեցէք։ Զերեւելի զդայարանս ձեր՝ պատրաստ պահեցէք։ Ցանպատեհ իրաց 'ի բաց կացէք։ Ի մէջ մարդկան վատանուն մի՛ լինիք։

Զ.

Ի գողունեաց ընչից մի՛ շահիք։ Ցեզերս թագաւորի տուն մի՛ չինէք։ Զձեր բնակութիւն մօտ 'ի խանութ մի՛ չինէք։ Ի պիղծ բնակութեանց 'ի բաց կացէք։ Որք անխրատքն են, իշխանաց ծառայութիւն մի՛ առնիցեն։ Անընկեր 'ի ճանապարհ մի՛ երթայք։ Անարժանից մի՛ խոնարհիք։ Ընդ չար կամաց մի՛ դատիք։ Ցօտար հող ծառ մի՛ տնկէք։

Է.

Յաղտաղտին տեղիս, սերմ մի՛ ցանէք։ Ընդ ամենայն ազգ մարդկան մի՛ ընդելանիք։ Ի մարդոյ՝ որոյ քսակ նոր իցէ, փոխ մի՛ առնուք։ Ընդ անարժան մարդկան մի՛ նստիք։ Ընդ ապախտաւորս սէր մի՛ դընէք։ Քսու մարդկան մի՛ հաւատայք. եւ ընդ նոսա աղ եւ հաց մի՛ ուտէք։ Ընդ ծառայի մի՛ կռուիք, զի մի՛ ամաչիցէք 'ի տեառնէ նորա. եւ 'ի տեառնէ նորա 'ի բաց կացէք։ Ընդ մարդոյ՝ զոր չիցէ ձեր տեսեալ, սէր մի՛ առնիցէք։

Ը.

Տղայ որ 'ի մօրէն ցաւոտ ծնանի՝ նմա դեղ մի՛ առնէք, զի ոչինչ օգտի։ Անչահ մարդոյ եւ խելագարի եւ արբեցելոյ խըրատ մի՛ տայք։ Դուք զձեզ մեծ մի՛ տեսանէք։ Ի լեզուանի կնոջէ զգոյշ լերուք։ Որ զխրատն սիրէ՝ այնմ տուք։ Զուտելն եւ զըմպելն միայն մի՛ սիրէք։ Հնազանդելոց ձերոց դժուարութիւն մի՛ առնէք։ Զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ մի՛ ատէք։ Որ ոք ընդ ձեզ սէր ունի, զնա անտես մի՛ առնէք։ Վասն անպատեհ պատճառի զծառայ ձեր մի հարկանէք։ Յայլոց հաց ակն մի դնէք։

Թ.

Զձեր հաց յայլոց սեղան մի՛ դնէք։

Ցորժամ զձեր հաց ուտէք, զձեր զրոյցն տեսէք։ Ընդ տղայս եւ ընդ տգէտս 'ի խորհուրդ մինոտիք։ Օտար կին եւ պառաւ 'ի ձեր տունն մի՛ թողուցուք։ Ի չար կնոջ հանդերձէ զդոյշ կացէք։ Զձեր հոգիս մարմնոյ ձերում ծառայ մի՛ առնէք։ Ընդ մահ որդւոց եւ դստերաց ձերոց մի՛ տըրտամիք։ Յօտարի բանս, յետ փորձելոյ, մի՛ լինիք վստահ։

Ժ.

Զայգին ձեր 'ի պահ օտարի մի՛ տայք։ Յայլոց ինչս իբրեւ զտէրն նոցա մի՛ լինիք վստահ։ Յօտար մարդոյ տուն տանուտէրութիւն մի՛ առնէք։ Զօտարն զոր ոչ ճանաչէք՝ 'ի ձեր տուն տանուտէր մի դնէք։ Այն մարդիկն որ զայս կեանս յոյժ սիրեն, դուք զնոսա մի՛ սիրէք։ Զայր եւ զկին, զտէր եւ զծառայ ընդ միմեանս մի արկանէք։

ԺԱ.

Առաջի թագաւորի ահիւ եւ պատրաստութեամբ կացէք։ Առաջի թագաւորի, թէպէտ նա խոնարհեսցի, դուք մի լինիք համարձակ։ Զայր իշխան սիրեցէք, մանաւանդ յորժամ 'ի բացեայ իցէ։ Յոխակալ մարդկանէ 'ի բաց կացէք։ Զամենայն մարդոյ ըզպատիւն դիտացէք։ Մի նախանձիք ընդ

այնոսիկ որ երջանիկ են եւ մեծատուն։ Ընդ իմաստունս մի հակառակիք եւ մի արհամարհէք զնոսա։ զի նոքա տէր են գրչի եւ իմաստութեան։ Մի դուշնաքեայ ինչ համարիցիք զնոսա որ դիտուն են։ թէպէտ եւ իմաստունք իցէք, զաւադն քան զձեզ մի արհամարհէք։ Ընդ հանճարեղս մի կռուիք։ Զծերս պատուեցէք եւ զաւաղան լերուք նոցա։ Ի զրպարտիչ մարդոց 'ի բաց կացէք։ Մի ծաղր առնիցէք զոք, եւ մի թշնամանիցէք։

ԺԲ.

Զծերս պատուելով սիրեցէք։ Զմեծն շատ սիրեցէք։ Զխաբուսիկն կտրեցէք 'ի միջոյ, զի անհոգ լինիցիք։ Ընդ մարդոյ ժլատի եւ դուշնաքէի մի դատիք։ Զհօր եւ զմօր եւ զազգի պատիւն մեծ համարեսջիք։ Ի մերձաւոր ազգակցաց ձերոց մի կտրիք։ Մի ումեք թողուցուք յանիրաւի կլանել զձեզ։ Ըստ ուխտ եւ ըստ երդումն մի անցանէք։ Անկոչ 'ի պատիւ մի երթայք։

ԺԳ.

Ցամենայն աւուրս ձեր խրատիւ եւ իմաստութեամբ կացէք։ Թէպէտ եւ դուք չար իցէք, սիրեցէք զբարին։ Իսկ եթէ բարի լինիք, զչարն մի բամբասէք։ Վատ մարդկան մի օգնէք։ Ի սիրելւոյ եւ 'ի

զարմէ զգուլթ մի բառնայք։ Ընդ պիղծ մեռելոյ զձեր մեռեալն մի թաղէք։ Ուսումն եւ խելս ուսարուք։ Ի խրատուէ մի ամաչէք։ Ի մէջ մարդկան քան զբարին այլ բան մի խօսիք։

ԺԴ.

Որքան զձեզ բարինէ եւ գիտուն՝ զայնպիսին մեծ համարեսջիք։ Իսկ այլ իրաց քան իմաստութեան բանից, խնդրող մի լինիք։ Թէ իմաստունքն հեռի են դուք գնացէք նոցա մօտ։ Զանցեալ ժամանակն հեչտ մի համարիք։ Զոր ինչ յաշխարհի չունիք, 'ի մարդոյ մի խնդրէք եւ մի գըգուիցէք զնոսա։ Եթէ կամիք անհոգ կալ, ուսարուք արուեստ պիտանի։ Զոր ինչ առնուք յաւանդ, հատուսջիք տեառն իւրում։ Փոխ եթէ առնուք, վճարեցէք։

ԺԵ.

Զբան որ չէ իմաստուն մի խօսիք։ Զբան զոր չէ պարտ ասել՝ մի ասէք։ Զձեզու ձեր մի ուսուցանէք 'ի չարախօսել։ Անպատեհ խօսից ունկն մի դնէք։ Պիղծ խօսից պատասխանի մի առնէք։ Ի թագաւորս յոյս մի դնէք։ Ամենայն ոք թող զիւր արուեստն գործիցէ։ Մինչչեւ լուեալ զպատասխանին, մի փութայք 'ի դատել։ Զոր ինչ ոչ գիտէք, մի ասէք։ Որ ինչ ոչ է 'ի

արտի ձերում զայն լեղուաւ մի խօսիք ։

ԺԶ.

Ամենայն մարդոյ խօսից մի վստահանայք ։ Զբարի խօսս յամենայն մարդոյ ընկալարուք ։ Ոչ իրաւ եւ ոչ սուտ մի երդուիք ։ Զայն կեանս ընդ այս կենցաղոյս մի փոխէք ։ Ամենայն մարդոյ զայն կամեցարուք՝ զոր անձին ձերում կամիք ։ Ընչից որբոց խնայեցէք ։ Երկայն ճանապարհի, պաշար պատրաստեցէք ։ Այրեաց հանապազ ողորմեցարուք ։ Ի ժամանակի երիտասարդութեան զծերութիւն յիշեցէք ։ Ըզ պէտս ծերութեան հոգասջիք 'ի ժամանակի երիտասարդութեան ։

ԺԷ.

Ի ժլատութենէ փախերուք ։ Առատութեան արուեստ ուսարուք ։ Զսկիզբն առատութեան յարդար վաստակոյ ձերոց արարէք ։ Զօրէնս մարդկութեան ծաներ-ուք ։ Զիրս կարեւորս սիրեցէք ։ Ի ցածէն եւ յանդիտէն խնդիր մի խնդրէք ։ Ընդ ամենայն մարդոյ սէր եւ բարեկամութիւն ըստ ժամանակին արարէք։ Զպատուականն պինդ կալարուք։

ԺԸ.

Զպաշար ձմեռան, ամարայնի հոգասջիք։

Զայսր աւուր իրս 'ի վաղիւ մի առնէք։ Զինչ որ չէ լեալ, մի իբրեւ զեղեալ ձեւիցէք։ Զդեղյառողջութեան ժամուն արբէք։ Զերբակ հատանեն եւ զարիւնհանեն, յորժամ պիտոյն է։ Ի ծերութեան՝ երիտասարդութեան մի ցանկայք։ Զայր բանդէտ կացուցէք 'ի վերայ գործոյ։ Զտգէտ եւ զերկչոտ 'ի վերայ մեծութեան մի դնէք։ Փախերուք 'ի մեծամեծաց որ ոխս պահեն։ Մի վաղվաղակի հաւատայք ամենայն իրաց։ Զընտանիս ձեր սիրեցէք։

ԺԹ.

Ընդ ուղղորդ սիրելեաց քիթ 'ի վեր մի կայք։ Զաղդականս ձեր մի վիրաւորէք։ Մի թողուք զձերն եւ յօտարն ակն դնէք։ Զձեր հին սիրելին մի մոռանայք։ Զձեր թշնամին մի կարի արհամարհէք։ Ցիմաստուն թշնամւոյ մի յոյժ երկնչիցիք։ Զանգէտ սիրելին մի մեծ ինչ համարեսջիք։ Ի թշնամութեան՝ սիրոյ տեղի պահեցէք։ Ի սիրելութեան ժամու՝ զթշնամութիւն յիշեցէք։ Ծուլութեան արուեստ մի ուսանիք։ Զձեր սիրելին յաղքատութեան ժամանակի խնդրեցէք։

Ի.

Ընդ գիշաւորին մի գիշանայք։ Ամենայն մարդ թող զիւր չափն վայելէ։ Աշ-

խարհս ձեզ խաղաղ մի թուեցի։ Զհոգւոյ բաժինն 'ի մարմնաւորս մի մոռանայք։ Որդւոց ձերոց խնամով արուեստ ուսուցէք։ Զձեր կերպարանս 'ի սիրելեաց եւ 'ի թըշնամեաց ծածուկ պահեցէք։ Զձեր խորհուրդն ամենայն մարդոյ մի ասէք։ Ի տեղի ուրուք ականջ մի դնէք։

ԻԱ.

Զձեր խորհրդակիցն 'ի ժամանակի բարկութեան փորձեցէք։ Զկին եւ զորդիս 'ի ժամանակի աղքատութեան մի ուրանայք։ Առ մեծամեծս աչս 'ի բաց կացէք։ Ցամենայնի զչափն սիրեցէք, Զհպարտութիւն քան զմահ դառն իմացէք։ Զանհոգութիւն 'ի ձեզ անկենդանութիւն գիտացէք։ Ընկեր զայն սիրեցէք՝ յորմէ չունիցիք ինչ չահել։

ԻԲ.

Ի ժամանակի յաջողութեան պատրաստագոյն կացէք քան 'ի ժամանակի նեղութեան։ Զամենայն ինչ յառաւոտութեան ժամանակի հոգացէք։ Ի դիւրագին աւուրս զթանկութիւն յիշեցէք։ Ցորժամ առողջ իցէք զհիւանդութիւն զմտաւ ածէք։ Զաղջիկ կամ զկին 'ի ծանօթ տեղեաց առէք։ Մի յարիք 'ի մարդ զոր միանգամ տեսեալ է ձեր։ Ցանչահ սիրելեաց 'ի բաց կացէք։

ԽՐԱՏՔ

ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ

ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է

ԽԻԿԱՐԱՑ ԻՄԱՍՏՆՈՑ

Եւ Խիկարս դպիր էի Սենեքերիմայ արքային Ասորեստանեայց. եւ արարի վաթսուն կանայս՝ եւ չինեցի վաթսուն ապարանս. եւ ես Խիկարս եղէ վաթսուն ամաց, եւ ոչ եղեւ ինձ որդի։ Յայնժամ մտի առ կուռսն բազում ընծայիւք. եւ վառեցի հուր, եւ արկի խունկս անուշահոտս 'ի վերայ նոցա. մատուցի ընծայս, եւ զոհեցի զոհս վասն ծննդեան։ Եւ աղաչեցի ասելով, Ով տեարք իմ եւ Աստուածք Բէլշիմ եւ Շահմիմ, հրամայեցէք եւ տուք ինձ արու զաւակ. քանզի ահա Խիկարս կենդանւոյն մեռանի։ Եւ զինչ ասեն մարդիկ, թէ Խիկար իմաստուն էր եւ ճարտար, մեռաւ եւ ոչ դոյր նորա որդի որ թաղէր զնա. եւ ոչ դուստր՝ որ լայր զնա. զինչ ասեմ, չունիմ ժառանգ յետ

մահուան իմոյ։ Եւ եթէ որդին իմ յաւուրքն տասն քանքարս ծախեսցէ, ոչ կարէ ապառել զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող ձեռօք իւրովք 'ի վերայ իմ. եւ զի մի մնացից անյիշատակ։

Յայնժամ ձայն եղեւ յաստուածոց իմոց եւ ասէ. Խիկար, ոչ հրամայեալ է լինել քեզ զաւակ. բայց եթէ առցես զՆաթան քեռորդին քոյ, եւ սնուցես զնա որդի քեզ եւ նա հատուսցէ քեզ զանուն քո։

Եւ ապա առի զՆաթան քեռորդին իմ առ իս, որ էր միամեայ. եւ ագուցի նմա բեհեզս եւ ծիրանիս. եւ եդի մանեակ ոսկի 'ի պարանոց նորա, որպէս որդի թագաւորի գեղաչուք զարդարեցի զնա. եւ արբուցի նմա կաթն եւ մեղր. եւ ննջեցուցանէի զնա 'ի վերայ արծուեաց եւ աղաւնեաց իմոց, մինչեւ եղեւ եօթն ամաց։ Եւ ապա սկսայ ուսուցանել նմա զդպրութիւն եւ զիմաստութիւն եւ զհանճարգիտութիւն, եւ զպատասխանիս հրովարտակաց, եւ զդարձուածս հակառակ խօսից. եւ 'ի տուէ եւ 'ի դիշերի ոչ դադարէի ուսուցանելոյ. եւ յագեցուցի զնա ուսմամբ իբր հացիւ եւ ջրով։

Ապա առէ Արքայն ցիս. Դպիր եւ իմաստուն Խիկար, գիտեմ, զի ծերացեալ ես. եւ յետ վախճանի քոյ ո՞վ է, որ կատարէ ճարտարութեամբ եւ իմաստու-

թեամբ զգործս արքունեաց մերոց. եւ ես հանապազ տրտում եմ վասն այդր խորհրդի։

Պատասխանի եառու նմա եւ ասացի. Արքայ՝ յաւիտեան կաց. է իմ որդի՝ որ առաւել հանճարեղ եւ իմաստուն է քան զիս։ Ասէ թագաւորն. Ասուած՝ դայ առ իս՝ զի տեսից զնա։ Եւ իբրեւ ածի զնա՝ կացուցի զնա առաջի թագաւորին։ Յորժամ հատեա թագաւորն, ուրախ եղեւ եւ ասէ. Այս օրս օրհնեալ եղիցի. քանզի Խիկար 'ի կենդանութեան իւրում ած եւ կացոյց զորդին իւր առաջի իմ, եւ ինքն 'ի հանգստեան եղիցի։ Եւ ես երկրպագի արքային իսուսմ, եւ առեալ տարայ զնաթան յապարանս իմ. եւ այսպէս ասէի 'ի խրատելն իսուսմ։

Խրատ Խիկարայ՝ զոր ետ որդւոյ իւրում Նաթանայ։

Ո՛րդեակ՝ եթէ լսես բանս 'ի դրան թագաւորաց եւ իշխանաց եւ մեծամեծաց, պահեա եւ մեռո զնա 'ի սրտի քում. եւ մի ասեր մարդոյ, մինչեւ այլք ասեն ցքեզ։

Ո՛րդեակ՝ զմարդոյ կապեալն եւ զկընքեալ մի արձակեր. եւ զարձակեալն մի կապեր։

Ո՛րդեակ՝ լաւ է ընդ իմաստուն մարդոյ քար կրել քան ընդ տգիտի ուտել եւ ըմպել։

Ո՛րդեակ՝ մի լիցի զի առաքեսցեն ըզքեզ 'ի գործ, եւ դու ոչ իմասցիս զբանն եւ երթիցես. յետոյ զայլ ոք յուղարկիցեն՝ որ երթիցէ եւ դու ծաղր լինիցիս։

Ո՛րդեակ՝ մի լիցի զի երթիցես 'ի տեղի ուրեք, եւ իցէ անդ մեծ ոմն քան զքեզ, եւ նստիցիս 'ի վերոյ քան զնա. եւ ասիցեն քեզ թէ Եկ 'ի վայր, եւ յամօթ լիցիս։ Այլ երթ նիստ 'ի խոնարհ զի ասիցեն ցքեզ, Ի վեր մատիր։

Ո՛րդեակ՝ եթէ ընկեր քո հիւանդ է, մի ասեր 'ի միտս քո, թէ տանձ կամ խընձոր գտանեմ, եւ ապա երթամ 'ի տես. երթ ոտիւք՝ եւ տես աչօք. զի զհիւանդըն դատարկ տեսանել լաւ է՝ քան զբազում համադամս ուտելոյ։

Ո՛րդեակ՝ մի հեղուր զարիւն մարդոյ, զի մի այլքն հեղցեն զարիւն քո։

Ո՛րդեակ՝ մի չնար ընդ կանայս այլոց, զի մի այլք չնասցեն ընդ կնոջ քում։

Ո՛րդեակ՝ լաւ է ծառայի միամտութեամբ տալ պատասխանի տեառն իւրում, քան խըրատելով խօսել, եւ ածել 'ի բարկութիւն։

Ո՛րդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս քո, զի մի համարձակեսցի եւ կոխեսցէ զպարանոց քո։

Ո՛րդեակ մի՛ լինիր քաղցր զի մի կլանիցեն զքեզ. եւ մի՛ լինիր լեղի զի մի թըքանիցեն զքեզ։

Ո՛րդեակ՝ լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք. զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ եւ եկ ճանապարհին. եւ մտօք կոյրն՝ հանապազ գնայ կամակոր։

Ո՛րդեակ՝ լաւ է աղջիկ՝ որ ծնանի եւ վաղ մեռանի, քան թէ կենդանի մնայ, եւ Աղգին իւրում նախատինս բերէ։

Ո՛րդեակ՝ լաւ է կողմ 'ի ձեռին քում, քան թէ չարիք յայլոց ձեռս։

Ո՛րդեակ՝ լաւ է ուլ մի 'ի տան քում զենեալ, քան եղն մի 'ի տունս այլոց։

Ո՛րդեակ՝ յապարանս թագաւորաց մի՛ մտաներ. եւ ընդ կնոջ դատաւորի մի՛ խօսիր։

Ո՛րդեակ՝ աչք մարդոյ ագահ է, ոչ յագի գանձով մինչեւ լնու հողով։

Ո՛րդեակ՝ մի՛ լինիր միջնորդ առն վասն կնոջ, զի եթէ չար լինիցի՝ անիծանիցեն զքեզ. եւ եթէ բարի լինիցի՝ ոչ յիշեսցեն զքեզ։

Ո՛րդեակ՝ յորժամ 'ի դատաստան երթաս, մի՛ շատախօս լինիր. եւ մի՛ թիւր խօսիր, զի մի սուտ հանցեն զքեզ՝ եւ մըտցես 'ի բանտ։

Ո՛րդեակ՝ նախ խորհեաց 'ի միտս քո զոր ասելոցն ես, եթէ սուտ ես՝ մեղայ ասա. զի մի դատաւորն արկցէ 'ի բանտ, եւ տուժեսցիս զինչս քո։

Ո՛րդեակ՝ մարդոյ զոր 'ի կախել տանին

մի՛ յառաջ ընթանար, զի մի՛ մատնեսցէ զքեզ եւ ասիցէ, թէ Սա եւս իմ ընկերէ։

Ո՛րդեակ՝ յորժամ երթաս 'ի հարսանիս կամ 'ի տուն մեռելոյ նախ հաց կեր 'ի տան քում, եւ ապա գնա. զի թէ հարսանիքեն 'ի շատ խնդութենէ անփոյթ առնեն զքեզ. եթէ տուն մեռելոյ է՝ 'ի շատ տրտմութենէն մոռանան զքեզ, եւ դու մնաս նօթի։

Ո՛րդեակ՝ հեռագոյն երթալ եւ անցանել ընդ կամուրջ լաւ է, քան մտանել 'ի ջուր մօտաւոր։

Ո՛րդեակ՝ նոր դատաստան մի՛ սահմաներ անիրաւութեամբ. թէպէտ եւ իշխան իցես մի՛ ելաներ ըստ սահման։

Ո՛րդեակ՝ մի՛ բանար զաչս քո եւ տեսաներ զկին գեղեցիկ. զի դեղեալ է զերեսան եւ ծարուրեալ է զաչսն. եւ եթէ վատնես զամենայն ինչս քո 'ի սէր նորա՝ ոչ ինչ առաւել գտանես քան զկին քո. բայց միայն զմեղս եւ զամօթ նախատանաց։

Ո՛րդեակ՝ եթէ տեսանես զերիտասարդայր թռուցեալ յօդս մի՛ հաւատար գործոց նորա. զի բան ծերոց հաստատուն է. բայց վասն երիտասարդ որդւոյ ոչ ապաքէն ասացեալ է, թէ Բերան առիւծու է, ո՛ ապրեցուսցէ 'ինմանէ։

Ո՛րդեակ՝ թէպէտ եւ որդի քո իմաս-

տուն իցէ յառաջագոյն փորձեա զնա, եւ ապա տուր զինչս քո 'ի ձեռս նորա։

Ո՛րդեակ՝ 'ի կնոջէ յօտարէ եւ յառնակնոջէ քան զընկերս քո կանխաւ ել եւ զնա. եւ այլ մի՛ դառնար զի պատուական լինիցիս. ապա եթէ դառնաս՝ փոխանակ պատուոյ առնուս անարգութիւն։

Ո՛րդեակ՝ որքան զքեզ պինդ իցէ երեսօք, մի՛ հակառակիր ընդ նմա։

Ո՛րդեակ՝ եթէ բարձր են սիւնք. տան քո առաւել քան կանգունս լինն, իբրեւ մը-տանես, խոնարհեցո զգլուխս քո։

Ո՛րդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ եւ ծախէր փոքր, եւ ասէր 'ի սրտի քում թէ շահեցայ. եւ ոչ գիտես՝ զի փոխանակ շահու փոքու, բարկանայ Աստուած. եւ զոր ունիսդ առնու 'ի ձեռաց քոց, եւ տայ այլոց։

Ո՛րդեակ՝ մի՛ երդնուր եւ մի՛ ասեր սուտ. զի սուտ երդումն եւ սուտ ասելն մարդոյ կենաց պակասութիւն բերէ։

Ո՛րդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս ինչ յԱստուծոյ՝ 'ի կամաց նորա մի՛ հեռանար. եւ զոր խնդրես տացէ քեզ։

Որդեակ՝ զայն ինչ որ քեզ չար թուի՝ ընկերին քում մի՛ առներ. եւ որ ինչ բարին է զայն կատարեա, եւ արասցես քեզ բարեկամ. եւ դու յամենեցունց բարիս դտցես։

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս 'ի մէջ մարդկան՝ մի՛ յայտներ զպարտս եւ զպակասութիւնս քո. զի 'ի նոցանէ շահ ոչ լինի քեզ եւ դու արհամարհիս 'ի մէջ նոցա։

Ո՛րդեակ՝ սիրեա զկին քո, զի մարմին քո է. եւ աշխատանօք սնուցանէ զորդիս քո, եւ կցորդ կենաց քոց է։

Ո՛րդեակ՝ սիրեա զեղբայր քո հաւասար քեզ. զի 'ի հասանել որդւոց քոց՝ խընդասցեն։

Ո՛րդեակ՝ ուսո զորդի քո 'ի քաղց եւ 'ի ծարաւ, զի ուսանիցին համբերել նեղութեան. եւ յորժամ հանդիպի ժամանակ սովոյ կարասցեն ժուժկալել։

Ո՛րդեակ՝ մարդ որոյ գործք չեն բարի, եւ չունի անուն բարի յաշխարհի, մեռեալ է եւ ոչ կենդանի։

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս յայլոց տան հիւր՝ եթէ օձ եւ կարիճ բերեն առաջի քոյ մի՛ արհամարհեր, եւ մի՛ գանգատիր։

Ո՛րդեակ՝ մի՛ ասեր չար բարեկամին քում. այլ ծիծաղեաց ընդ երեսս նորա. եւ դու ուրախ լինիս 'ի մէջ ընկերաց քոց։

Ո՛րդեակ՝ զամենայն բարութիւն կնոջ քում արա. բայց զխորհուրդ սրտի քոյ մի՛ յայտներ նմա. զի կին բնութեամբ տկար է, եւ ոչ կարէ պահել զբան քո. այլ յայտնէ դրացեաց քոց, եւ դու անկանիս 'ի փորձանս եւ 'ի նեղութիւն։

Ո՛րդեակ՝ զինչ որ ոչ է քո, մի՛ առ-
նուր եւ տար այլոց։

Ո՛րդեակ՝ խորհեա վասն ամենայն բա-
նի 'ի սրտի քում, ընտրեա զպիտանին,
եւ ապա բեր 'ի լեզուդ եւ խօսեաց. եթէ
որ զինչ եւ դայ'ի բերան քո խօսիս, ծաղր
լինիս։

Ո՛րդեակ՝ մի՛ անկանիր ընդ մէջ երկուց
մարդոց որ կռուիցին եւ հարկանիցեն
զիրեարս, զի մի՛ 'ի զուր մեռանիցիս։

Ո՛րդեակ՝ մի՛ դատարկաբանութիւն խօ-
սիր եւ ծիծաղիր. զի 'ի ծաղուէ կռիւ լի-
նի. եւ 'ի կռուոյ սպանութիւն։

Ո՛րդեակ՝ եթէ կամիս իմաստուն լինել,
պահեա զլեզու քո 'ի չար խօսից։

Ո՛րդեակ՝ եթէ աղաղակ բառնալով մարդ
տուն չինէր, էշ յաւուրն ութ դարպաս չի-
նէր. եւ եթէ 'ի սաստիկ զօրութենէ ե-
զին վարի լուծ՝ նա 'ի պարանոցէն ոչ ելա-
նէր։

Ո՛րդեակ՝ եթէ աղքատ ես, զամենայն
աւուրս 'ի պատարագաց Աստուծոյ մի՛ հե-
ռանար։

Ո՛րդեակ՝ մի՛ տացես վաճառս առանց
գնոց եւ վկայի. զի բազում խօսք լինին
եւ 'ի բուն բարեկամէ քակտիս։

Ո՛րդեակ՝ պատուեա զհայր քո եւ զմ-
մայր. զի 'ի հասանել որդւոց քոց, առցես
եւ դու զնոյն։

Ո՛րդեակ՝ բարձայ յուս կապար եւ երկաթ, չէր ծանր քան զպարտս. թէպէտ ուտէի եւ ըմպէի, ոչ կարէի հանգչել մինչեւ վճարէի։

Ո՛րդեակ՝ մեծատան որդի թէ օձ ուտէ, ասեն թէ վասն բժշկութեան կերաւ. եւ եթէ աղքատն ուտէ, ասեն թէ առ սովալը-լուկ մեռանելոյն կերաւ։

Ո՛րդեակ՝ լաւ է գողոց տալ զամենայն ինչս քո, քան թէ այլք գտանիցեն մի գողութիւն 'ի քեզ։

Ո՛րդեակ՝ ընդ թշնամւոյն կորուստ մի՛ խնդար. զի առաջի քո մահ կայ։

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զծերն, յոտն կաց եւ պատուեա զնա. զի եւ այլք զնոյն արասցեն քեզ։

Ո՛րդեակ՝ եթէ դադարի դեան'ի գնացից, կամ քաղցրանայ որպէս զմեղր, եւ կամ սպիտականայ ագռաւն որպէս զաղաւնի, ապա եւ անզգամն թողու զանզգամութիւն իւր, կամ անմիտն լինիլ իմաստուն։

Ո՛րդեակ՝ մի՛ յաճախեր 'ի տուն բարեկամի քոյ, զի մի յագեալ ատիցեն զքեզ։

Ո՛րդեակ՝ օրինաց Աստուծոյ ունկնդիր լեր. զի պատուիրանն Աստուծոյ ամուր պարիսպ է մարդոյ։

Ո՛րդեակ՝ սովորեցո զլեզուն քո զբարիս խօսել 'ի մէջ ընկերաց քոց։

Ո՛րդեակ՝ եթէ խրատ բարի գտցես,

դա խնամատուն կոչիս. զի չարն հանապազ 'ի չար մարդոյ ծնանի։

Ո՛ղեակ՝ եթէ կամիս զգործս ինչ բարիս գործել, մի նախ պարծիր. թերեւս լիցի կամ ոչ լիցի, թերեւս չկարիցես գործել, եւ ծաղր լինիցիս։

Ո՛ղեակ՝ մի՛ ցանկանար մարդոյ արեան. եւ մի՛ սիրեր զկռիւ. այլ սիրեա զբանս կակուղս եւ զխօսս, որ չիջուցանեն զհրաբորբոք դաղանացեալ սիրտ մարդոյ։

Ո՛ղեակ՝ յորժամ ըմպես գինի մի՛ շատախօս լինիր. զի 'ի շատ խօսից կռիւ ծնանի եւ յետոյ խռովութիւն եւ սպանութիւն։

Ո՛ղեակ՝ խաղաղութիւնն մայր է ամենայն բնական ողջունի խոնարհութեան։

Ո՛ղեակ՝ մինչ կոշիկ քո յոտս քո է, կոխեա զփուշն. եւ արա ճանապարհ ընկերի քում, որ ընդ քեզ է գալոց։

Ո՛ղեակ՝ ջանա շահել անուն բարի. զի լաւ է մարդոյ անուն բարի, քան ըզդեղ դովելի. զի գեղեցկութիւնն հիւանդութեամբ եւ մահուամբ ապականի. եւ անուն բարի յաւիտեան մնայ։

Ո՛ղեակ՝ եթէ հանդիպիս կնոջ անզգամի, հնազանդ լեր նմա, եւ կամ փախիր 'ի նմանէ։

Ո՛ղեակ՝ 'ի լեզուէ քումմէ երկիր քան յօտար թշնամւոյ. զի այլ ոք ոչ կարէ հար-

կանել զքեզ, եթէ ոչ նա։

Ո՛րդեակ՝ լաւագոյն է քեզ թշնամութիւն առն իմաստնոյ, քան թէ սէր առ անմտի։

Ո՛րդեակ՝ զայր անմիտ եւ արբեցող մի՛ զրկեր. այլ յուղարկեա զնա զի մի բազում չարիս ածիցէ 'ի վերայ քո։

Ո՛րդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալ այնպէս է, որպէս թէ ոք փոշի ցանէ 'ի գնացս գետոյ։

Ո՛րդեակ՝ զչար եւ զանմիտ եւ զլեղուանի եւ զամբարհաւաճ մարդ 'ի քո տուն մի՛ մուծաներ, զի մի՛ 'ի գործոցնորա ամօթ կրիցես։

Ո՛րդեակ՝ եթէ լինիս տէր աշխարհի, ըզմահ քո մի՛ մոռանար։

Ո՛րդեակ՝ արբ զգինի վասն ուրախութեան. բայց տես, մի լիցի թէ ըմպցէ զգինին զքեզ։

Ո՛րդեակ՝ փառաւոր առնէ երբեմն գինի զմարդ. եւ երբեմն ամօթալից եւ ծաղր առնէ։

Ո՛րդեակ՝ լաւ է կռուել քեզ ընդ մարդոյ զինելոյ, քան ընդ կնոջ անզգամի։

Ո՛րդեակ՝ մարդ չարաբարոյ եւ ամբարտաւան, յորժամ տեսանէ զկռուել ընկերի իւրոյ, խնդայ եւ ուրախ լինի. եւ կարծէ 'ի մտի իւրում թէ փառք լինչ յաւելան նմա։

Ո՛րդեակ՝ յորժամ քաղցրանան աչք Աստուծոյ 'ի վերայ քո՝ առաւել երկիր 'ի նմանէ. յետոյ մեղադրիս յանձին քում։

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զքեզ յաչս տեառն Աստուծոյ քո՝ թագաւորաց փառաւորելի եղեր, եւ ամենայն մարդ սիրէ զքեզ. եւ յորժամ արհամարհիս յԱստուծոյ՝ յայնժամ թագաւորք եւ իշխանք եւ ամենայն սիրելիք քո ատեն զքեզ։

Ո՛րդեակ՝ մի ասեր աղքատին, թէ դու ինձ չար ոչ կարես առնել. տես, զի բազում չարիք եւ անարդանք 'ի դուզնաքեայ եւ յանպատիւ մարդոց ելանեն։

Ո՛րդեակ՝ կին օտար որ սիրէ զքեզ, եւ ասէ թէ Դու լաւ ես քան զիմ այրն՝ մի հաւատար նմա. զի կին պոռնիկ նման է չան՝ որ խառնակի ընդ ամենայն շանց։

Ո՛րդեակ՝ մի հաւատար զսիրտ քո սիրելւոյ որ նոր իցէ, մինչչեւ քանի մի ինչ անգամ փորձեալ զնա չարեօք եւ բարեօք։

Ո՛րդեակ՝ կին պոռնիկ նման է գերեզմանի բռելոյ, որ 'ի ներքոյ լի է գարշահոտութեամբ։

Ո՛րդեակ՝ մի լրբալեզու լինիր 'ի մէջ ընկերաց, եւ մի կարծեր թէ սիրելի ես նոցա. այլ յորժամ յանդիմանեն զքեզ՝ լինի բան քո ամօթալից։

Ո՛րդեակ՝ որ պայծառ է մտօք՝ իբրեւ զարեգակն լուսաւոր է. եւ որ պիղծ է սրտիւ եւ նենգաւոր մտօք եւ խաւարին խորհրդով, կամ ագահ մտօք՝ այնպիսին թէպէտ եւ ունիցի ինչս բազումս, ընդունայն է եւ կենդանւոյն մեռեալ։

Ո՛րդեակ՝ յաւուր տրոց քոց առատ կալ զձեռս քո, զի աչք մարդոյ 'ի ձեռս քո մի մնասցեն. քանզի ոչ հաճի Աստուած եւ դու 'ի մարդկանէ անարդիս։

Ո՛րդեակ՝ 'ի ձի՝ որ քո չէ՝ մի հեծնուր. եւ եթէ յոյժ քաղցեալ իցես՝ հաց՝ որ քո չէ՝ մի ուտեր։

Ո՛րդեակ՝ յայտնեա զխորհուրդ քո բարեկամին քում. եւ յետ քանի մի աւուրց փորձեա զնա, եւ սակաւիկ մի գժտեսջիր ընդ նմա. եթէ պահէ զբան քո 'ի սրտի իւրում, եւ ոչ յայտնէ, նա սիրելի բարեկամ քո է, զնա սիրեա յոյժ. եւ եթէ 'ի գժտելն յայտնէ զբան քո՝ այնպիսին չէ սիրելի եւ բարեկամ, փախիր 'ի նմանէ։

Ո՛րդեակ ագահութիւնն մայր է ամենայն չարեաց եւ ծնուցիչ ամենայն մեղաց. բայց ողորմութիւն ձեռնտու է ամենայն բարեաց։

Ո՛րդեակ՝ որ սիրես զխաղաղութիւն, 'ի դատաստանէ 'ի բաց կաց. զի որ հանապազ յօժարի 'ի դատաստան՝ նա մայր է ամենայն մեղաց եւ չարեաց. յիմարեալ է

եւ ոչ գիտէ զինչ առնէ ։

Ո՛րդեակ՝ չարախօսութիւն զումեքէ մի՛ առեր եւ մի՛ լսեր . զի կարի խոցէ զսիրտ մարդոյ , եւ ապականէ զփառս մարդոյն , զի մեծ նախատինք են։

Ո՛րդեակ՝ թէ կամիս մարդոյ զինչս տալ՝ յառաջ մի՛ պարծենար եւ մի՛ խոստանար . եւ թէ պարծենաս եւ չտաս՝ ընդ բարեկամին թշնամի լինիս ։

Ո՛րդեակ՝ այր ամբարտաւան հեռի է եւ օտար յընտանեաց եւ 'ի բարեկամաց իւրոց . եւ թէ բաղում անդամ ջանայ սիրով՝ նա առնու անարգանս անձին իւրում. եւ հեռանայ յընկերացն ։

Ո՛րդեակ՝ լաւ է ստանալ ձի զգօն եւ էշ հլու, քան ծառայ փախչող եւ ստասաց։

Ո՛րդեակ՝ մի՛ երաշխաւոր լինիր բարեկամին քում . զի բազում վիշտս կրես մինչեւ վճարիցես զպարտս նորա ։

Ո՛րդեակ՝ մարդ չարախորհուրդ եւ նախանձոտ , ոչ թէ միայն ատելեաց իւրոց առնէ չարութիւն . այլ բնութեամբ ամենեցուն հակառակ կայ ։

Ո՛րդեակ՝ լերինք չտեսմարանք են սառնամանեաց , եւ նենդաւորք՝ բնակարան չարեաց են ։

Ո՛րդեակ՝ մի՛ այլոց կանանց կատարէր ղգանկութիւն քո . զի օտար կին նման է աղի ջրոյ զոր որքան ըմպես՝ այնքան ծա-

բաւիս. եւ զանուն վատ ժառանգես։

Ո՛րդեակ՝ որ իմաստունն է՝ նման է հը-
ւոյ որ տայ լոյս եւ ջերմութիւն. եւ որ-
պէս զարեգակն է որ 'ի ճառագայթից ե-
ռեւի եւ լուսաւորէ զարարածս. եւ կամ
որպէս զառիւծ որ առ ուժգնութեան գովի.
եւ որպէս բազէ սրընթաց առ 'ի չաչելոյ
թեւոցն գովի. նա՝ եւս առաւել մեծարի
յաչս թագաւորաց եւ մեծամեծաց։

Ո՛րդեակ՝ առն խոզամտի ոչ գոյ սիրե-
ի երբէք. զի ասէ 'ի սրտի իւրում թէ՝
Կեանք իմ ոչ անցանեն, եւ ինչք իմ ոչ
պակասին, եւ ոչ գիտէ թէ Աստուած տայ
այնպիսեաց մահ. եւ զինչս նոցա այլոց
տայ. եւ ոչ ունի անուն բարի 'ի մէջ մարդ-
կան զի յիշեսցեն զնա։

Ո՛րդեակ՝ այր անմիտ յորժամ արբենայ,
յօժարի 'ի կռիւ. եւ կարծէ 'ի միտս իւր
թէ, Չկայ մեծ քան զիս. եւ ոչ գիտէ,
թէ յորժամ հանդիպի քաջի ումեք՝ սպա-
նանէ զնա։

Ո՛րդեակ՝ որպէս հող մայր է ամենայն
տնկոց, նոյնպէս եւ արբեցութիւն մայր
է ամենայն չարեաց։

Ո՛րդեակ՝ եթէ իշխան ես աշխարհի
եւ մարդկան՝ պահեա զանձն քո 'ի զեղ-
խութենէ. զի 'ի քեզ են հոգք երկրաւո-
րաց ամենայն։

Ո՛րդեակ՝ տեսի զդաղան կատաղեալ՝ որ

արձակեցաւ 'ի վերայ իմ՝ եւ ոչ երկեայ 'ի նմանէ. հանդիպեցայ թշնամւոյ իմում՝ եւ ոչ յաղթեաց ինձ. հանդիպեցայ կնոջ լեզուանուոյ՝ եւ յաղթեցայ 'ի նմանէ։

Ո՛րդեակ՝ մի լինիր փոյթ իբրեւ ըզ նչենի՝ որ նախ ծաղկի եւ ապա ուտի, այլ լեր հնազանդ՝ եւ պտղաբերեա զհեզութիւն։

Ո՛րդեակ՝ անկանի անօրէնն վասն չար գործոց իւրոց, եւ կանգնի արդարն վասն բարի գործոց իւրոց։

Ո՛րդեակ իմ Նաթան՝ զայս ամենայն զոր ուսուցի քեզ՝ 'ի միտ առ եւ կատարեա զամենայն. եւ լինիցիս իմաստուն 'ի մէջ ընկերաց քոց եւ յաչս թագաւորաց երեւելի լիցիս։

Ա՛յս է խրատն զոր ուսուցի որդւոյ իմում Նաթանայ. եւ ես Խիկարս գիտէի թէ՝ զամենայն խրատս իմ պահէր 'ի սրտի իւրում. այլ նա որպէս զփոշի զոր ընուս 'ի վերայ գետոյ եւ կորնչի՝ այնպէս արար զխրատս իմ։ Եւ ես նմա զտունս իմ, եւ զծառայս իմ. զինչս եւ զապարանս եւ զիշխանութիւն իմ. եւ արարի ատենադպիր Սենեքերիմ արքային իմոյ։ Եւ նա մոռացաւ վաղվաղակի զխրատս իմ. եւ սկսաւ չարիս գործել եւ առնել անիրաւութիւն. ծառայից իմոց ոչ խնայէր, եւ զինչս իմ վատնէր. եւ զբազում խրատս իմ անտես արար։

Եւ ես Խիկարս յորժամ տեսի զչարութիւն Նաթանայ՝ գնացի առ թագաւորն իմ Սենեքերիմ, եւ պատմեցի նմա մի ըստ միոջէ զչարութիւն Նաթանայ. եւ խընդրեցի թուղթ 'ի թագաւորէն, զի մի իշխեսցէ Նաթան մերձենալ ընչից իմոց։ Եւ հրամայեաց թագաւորն՝ եւ բերին զՆաթան. եւ ետ պատուէր նմա ոչ մերձենալ ընչից իմոց։ Եւ ես Խիկարս ելեալ գնացի 'ի տունս իմ։

Եւ Նաթան սկսաւ մտօք չարիս գործել վասն իմ 'ի դրան թագաւորին. եւ խորհեալ չինեաց կնիք մի՝ ըստ նմանութեան իմոյ կնքոյ. քանզի յառաջագոյն գիտէր զկերպարանս կնքոյն. եւ փորեաց զիմ անուն, եւ կնքեաց 'ի քարտէս. եւ գրեալ յանուն իմ առ Փարաւոն արքայն Եգիպտացւոց, որ չարկամ էր ընդ թագաւորին իմում Սենեքերիմայ։

Եւ էր գրեալ այսպէս։

«Ի Խիկարայ իմաստնոյ ողջոյն քեզ՝ Փարաւոն արքայ. յորժամ գիրս առ քեզ հասանէ՝ փութով ժողովեա զզօրս քո, եւ եկ 'ի դաշտն Արծրունեաց, 'ի քսան եւ եօթներորդումն ամսոյն հրոտից. եւ առցես զՍենեքերիմ թագաւորն առանց պատերազմի»։

Եւ յորժամ գրեաց Նաթան այսպէս՝ խոր-

հեցաւ եւ գրեաց թուղթ մի այլ նմանապէս մին առ իս յանուն արքային իմոյ Սենեքերիմայ։

Եւ էր գրեալ այսպէս։

«Ի Սենեքերիմ արքայէ ողջոյն քեզ սիրելի եւ իմաստուն Խիկար. յորժամ գիրս առ քեզ հասանէ՝ փութով ժողովեա զոր բազում, եւ եկ 'ի դաշտն Արծրունեաց, 'ի քսան եւ եօթներորդում ամսոյն հրոտից. զի պատերազմեսցիս ընդ զօրսն Փարաւոնի. քանզի դեսպանք Փարաւոնի եկեալ են առիս։ Եւ յորժամ գրեաց այսպէս՝ զաղտ տարեալ ետ հաւատարիմ մարդոյ, զի բերեալ հասուցէ 'ի ձեռս իմ։ Եւ ես Խիկարս յորժամ առի զթուղթն՝ բացի եւ ընթերցայ՝ զոր գրեալն էր. եւ վաղվաղակի ժողովեցի զօրս. եւ կատարեցի զհրամայեալն 'ի թագաւորէն անմեղութեամբ եւ ոչ գիտացի զչարութիւն Նաթանայ՝ որ առ իս։ Եւ զմիւս թուղթն՝ զոր գրեալ էր յանուն իմ առ Փարաւոն արքայ, զայն տարեալ ընկէց կնքեալ եւ գաղտ 'ի դուռն դարպասի թագաւորին։ Եւ գտեալ ըզմի ոմն 'ի ծառայից զթուղթն տարեալ ետ Սենեքերիմայ արքային իմում։ Եւ իբրեւ բացեալ ընթերցան զթուղթն առաջի թագաւորին՝ զահի հարեալ լի եղեւ տրտմութեամբ, եւ ոչ գիտէր զինչ առնիցէ Խիկարիս։

Յայնժամ Նաթան՝ որ դպիր էր թագաւորին՝ եմուտ առ թագաւորն եւ երկիր եպագ նմա եւ ասէ. Ո՛ղջ լեր արքայ եւ տէր իմ. հայր իմ Խիկար ոչ գիտաց զերախտիս քո, եւ կամի խափանել զթագաւորութիւն քո. եւ եթէ ոչ հաւատաս բանիս՝ կացցուք մինչեւ 'ի քսան եւ եօթներորդն հրոտից. եւ ելցուք եւ գնասցուք 'ի դաշտն Արծրունեաց. եւ տեսցուք աչօք մերովք զերախտամոռացութիւն Խիկարայ՝ որ առ քեզ։

Յայնժամ Սենեքերիմ թագաւորն երկմտեալ կայր տրտմութեամբ՝ մինչեւ եղեւ քսան եւ եօթներորդն ամսոյն հրոտից։ Եւ ես Խիկարս առի զզօրսիմ. եւ եկեալ բանակեցայ 'ի դաշտին Արծրունեաց։ Եւ ելեալ թագաւորն Սենեքերիմ դայր 'ի դաշտն Արծրունեաց փորձել զիս։ Եւ ես Խիկարս յորժամ տեսի զզօրսն Սենեքերիմայ՝ ռազմ արարեալ խաղացի 'ի մէջ դաշտին, դէմ յանդիման պատերազմել ընդ զօրս նորա. քանզի կարծէի, թէ զօրք փարաւոնի են։

Յայնժամ տեսեալ Սենեքերիմայ զզօրսն իմ, փախստական եղեւ. եւ ես մտի զօրօք փոքր ինչ զհետ նորա՝ եւ ոչ գտի. դարձայ եւ եկի յօթեւանս իմ. եւ ուրախ լինէի մտօք իմովք՝ թէ փախուցի զփարաւոն զօրօք իւրովք։ Եւ յորժամ գնաց Սենեքերիմ փախստական յապարանս իւր խելա-

գարեալ լի տրտմութեամբ, եւ ոչ գիտէր թէ զինչ գործիցէ զի կալցէ զիս։

Յայնժամ եմուտ Նաթան առ թագաւորն՝ ողջունեաց եւ ասէ. Ահա տեսեր աչօք քովք զերախտամոռացութիւն Խիկարայ. այժմ մի՛ տրտմիր, զի ես ածեմ ըզ հայրն իմ Խիկար առաջի քո։ Եւ ասէ Սենեքերիմ ցՆաթան, եթէ դու բերես ըզ Խիկար, եւ տաս 'ի ձեռս իմ, զոր ինչ խնդրեսցես՝ տացս քեզ։ Եւ երկրպագեալ Նաթան՝ ել արտաքս եւ գնաց։ Եւ գըրեաց թուղթ մի յանուն թագաւորին. եւ ետ ցհաւատարիմ ոք ասելով թէ՝ Տարեալ տացես զայս Խիկարայ, եւ էր գրեալ այսպէս։

«Ի Սենեքերիմ արքայէ ողջոյն քեզ սիրելի եւ իմաստուն իմ Խիկար. քանզի յոյժ հաճոյ թուեցաւ թագաւորիս Սենեքերիմայ երախտիքն քո. եւ զի փախեան զօրք Փարաւոնի յերեսաց քոց. այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ խաղաղութեամբ 'ի տունս իւրեանց. եւ դու ել եւ եկ, զի ուրախ եղէց ընդ քեզ»։

Եւ ես Խիկարս յորժամ ընթերցայ՝ ուրախ եղէ յոյժ. եւ ետու հրաման զօրաց իմոց գնալ յօթեւանս իւրեանց։ Եւ ես ելեալ գնացի տեսանել, եւ ուրախ լինել ընդ թագաւորին իմում։ Եւ յորժամ հասի միամտութեամբ 'ի դուռն թագաւորին, տեսեալ զիս զինուորացն՝ կալեալ ածին

առաջի թագաւորին։

Եւ յորժամ եառեալ թագաւորն զիս՝ ի եղեալ սրամտութեամբ. եւ հրամայեաց զի տացեն զայն թուղթ 'ի ձեռս իմ։ Եւ ես իբրեւ բացեալ ընթերցայ, կապեցաւ լեզու իմ եւ գնաց իմաստութիւն իմ, եւ ոչ գիտէի թէ զինչ պատասխանի տայց Սենեքերիմայ։ Այլ ողոքանօք ասացի. Արքայ եւ տէր իմ, մի 'ի զուր դատիր զիս, զի ես ինչ ոչ գիտեմ 'ի բանէդ յայդմանէ, այլ անպարտ եմ։ Եւ ոչ եդ ունկն աղաչանաց իմոց. այլ հրամայեաց սպանանել զիս։

Յայնժամ Նաթան քեռորդին իմ կապեաց զիս ձեռս յետս փոխանակ բարի խրատոյն իմոյ՝ զոր կանխաւ ետու նմա թէ Որդեակ՝ զարձակեալն մի կապեցես. նա նախ զիս կապեաց։ Եւ ես դարձեալ աղաչեցի զթագաւորն թէ՝ Տուր զիս 'ի ձեռս Աբուսմաքայ զօրապետին. եւ նա տարեալ զիս 'ի տուն իմ՝ եւ 'ի վերայ սեմոյ իմոյ կատարեսցէ զհրամանս քո, եւ զիս գլխատեսցէ. եւ զդլուխն իմ հարիւր կանգուն հեռի թաղեսցէ 'ի մարմնոյս։ Եւ հրամայեաց թագաւորն Աբուսմաքայ կատարել այնպէս՝ որպէս խնդրեցի։ Եւ կալեալ զիս Աբուսմաքայ տանել 'ի սպանումն. եւ ես Խիկարս յղեցի դաղտ լուր առ Աբեսան կին իմ, թէ Պատրաստեա աղջկունդ հազար, եւ արա կերակուրս ազգի աղ-

զի։ եւ յորժամ եկեսցեն 'ի սպանումն իմ, սրա ընթրիս, եւ բեր զայն հազար կոյս աղջկունս, զի լայցեն զմահ իմ։ եւ կինն իմ վաղվաղակի կատարեաց զհրամանս իմ։ Եւ յորժամ գնացաք հասաք 'ի տուն իմ, ինդրեցի աղաչանօք յԱբուսմաքայ զօրապետէն եւ ասացի։ Ցուր ինձ հրաման, առնել ընթրիս սիրեաց իմոց եւ բարեկամաց։ քանզի այլ ոչ մնամ կենդանի։ Եւ ասաց Աբուսմաք՝ Արա որպէս եւ կամիս։ եւ արարի ընթրիս մեծ սիրելեաց իմոց, որք եկեալ էին 'ի սպանումն իմ։ եւ բերի կերակուրս ազգի ազգի, եւ գինիս անապակս, նաեւ զհազար աղջկունսն՝ որք լայցեն առաջի նոցա զմահ իմ։

Եւ նոքա 'ի սաստիկ տրտմութենէ եւ արբեալ 'ի գինւոյն՝ արբեցան ամենեքեան, եւ անկեալ ննջեցին։ Եւ ես Խիկարը կայի կապեալ երկաթեօք։ եւ գընացեալ զարթուցի զԱբուսմաք զօրապետն, եւ ողոքանօք ասացի նմա։ Գիտես եղբայր՝ զի 'ի ժամանակին յորում բարկացաւ թագաւորն 'ի վերայ քո, եւ ետ 'ի ձեռս իմ, թէ տար սպան զԱբուսմաք, եւ ես առեալ տարայ զքեզ, եւ ոչ սպանի, այլ՝ պահեցի զաղտ։ եւ եկեալ ասացի թագաւորին թէ սպանի զԱբուսմաք։ Եւ յորժամ անց փոքր մի ժամանակ 'ի վերայ, գընաց բարկութիւն թագաւորին, եւ ստր-

ջացաւ զի ետ հրաման սպանանել զքեզ։ Եւ ասաց՝ Եղուկ քեզ Աբուամաք, զի դու կենդանի պարտ էիր լինել։ Եւ ես իբրեւ լուայ զայս 'ի թագաւորէն՝ եկեալ հանի զքեզ, եւ տարայ առաջի թագաւորին, եւ բազում պարգեւս ընկալայ։ Այժմ աղաչեմ զքեզ, արասցես զփոխարէնն առ իս։ Եւ կայ 'ի ներքոյ սեմոց իմոց հոր մի մեծ։ արկ զիս 'ի հորն գաղտ, եւ ես ունիմ ծառայ մի մահապարտ, քանզի է մարդասպան։ Եւ ահա կապեալ կայ 'ի բանտի, եւ ունի զնմանութիւն իմ՝ զգեցո նըմա զհանդերձս իմ, եւ զարթո զժողովուրդ իմ։ Եւ վաղվաղակի հատ զգլուխն նորա, եւ տար թաղեա զգլուխն հարիւր կանգուն հեռի 'ի մարմնոյն։ Եւ եղեւ ունկնդիր Աբուամաք խնդրուածոց Խիկարիս, եւ արար այնպէս։ Եւ գնաց առ թագաւորն թէ՝ սպանի զԽիկար։ Եւ յոյժ ուրախ եղեւ թագաւորն ընդ սպանումն իմ։

Եւ ապա գնաց Նաթան խնդրել 'ի թագաւորէն զստացուածս իմ։ Եւ թագաւորն հրամայեաց տալ Նաթանայ զամենայն ինչս իմ։ Եւ գայր Նաթան 'ի տուն իմ հանապազ, ուտէր եւ ըմպէր եւ անկանէր ընդ ծառայս եւ ընդ աղախնեայս իմ։ Եւ կամէր չարիս գործել ընդ կնոջ իմում, եւ կինն իմ ոչ հնազանդ էր կամաց նորա։ Եւ ես զամենայն լսէի ականջօք ի-

մով՝ զձայն դուսանացն. եւ զպագչոտիլն ընդ կնոջ իմոյ. եւ սպասէի դիպող ժամանակի։ Եւ յորժամ անց ժամանակ մի՝ լուաւ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եթէ Սենեքերիմ արքայ ետ սպանանել ըզ Խիկար, յոյժ ուրախ եղեւ։ Եւ առաքեաց Փարաւոն զիր առ Սենեքերիմ։

Եւ էր գրեալ այսպէս։

Զի Փարաւոն արքայէ ողջոյն առ Սենեքերիմ թագաւոր. քանզի կամիմ չինել դարպաս մի յօդս անսիւն եւ անդերան. առաքեա ինձ չինող մի ճարտար, որ եկեալ վաղվաղակի կատարեսցէ զհրամանս իմ. եւ եթէ ոչ առաքես զամբաղում հեծելովք, եւ աւերեմ զերկիրդ. եւ առնում՝ի քէն հարկս։ Եւ յորժամ բերեալ ետուն զթուղթն՝ի ձեռս Սենեքերիմայ՝ բացեալ ընթերցաւ զնա. եւ իսկոյն զարհուրեցաւ բոլոր անձն նորա՝ի բանից Փարաւոնի։

Եւ կոչեալ զմեծամեծս եւ զիմաստունս եւ զդպիրս ասէ՝ Քանզի սպանաք ըզ Խիկար, այլ ո՞վ կարէ տալ պատասխանի Փարաւոնի։ Եւ ասացին մեծամեծքն՝ Արքայ յաւիտեան կաց. ահա կայ որդեգիր Խիկարայ Նաթան՝ որ առաւել հանճարեղ եւ իմաստուն է քան զԽիկար, եւնա կարէ տալ պատասխանի զրոյս։

Եւ հրամայեաց թագաւորն կոչել ըզ

Նաթան. եւ իբրեւ եկին՝ եռուն նմա զթուղթն եւ ընթերցաւ։ Ասէ թագաւորն՝ Կարդող ես տալ պատասխանի փարաւոնի. եւ ասէ Նաթան՝ Այս անհնարին է 'ի մարդկանէ։ Յայնժամ տարուկուսեալ Սենեքերիմայ կոծէր զանձն իւր ասելով Եղուկ քեզ Խիկար իմաստուն իմ, զի ապանաք զքեզ. այժմ ոչ կարեմք տալ պատասխանի, եւ կրեմք վիշտ բազում 'ի նմանէ։ Եւ եթէ ոք բերէ զքեզ կենդանի առաջի իմ, Խիկար՝ տաց նմա ըստ կշռոյ քո ոսկի։

Եւ լուեալ Աբուսմաք՝ երկիր եպագ թագաւորին եւ ասէ՝ Ողջ լեր Արքայ. զի թէպէտ կոծիս 'ի վերայ ապանմանն Խիկարայ, այլ եթէ ոք բերէ զԽիկար կենդանի առաջի քո՝ մինթէ փոխանակ նորա ապանանիս զնա։ Եւ ասէ թագաւորն՝ Ոչ ապանանեմ զնա, այլ՝ տաս պարգեւս ազինս նմա։ Եւ երկրպագեալ Աբուսմաք թագաւորին՝ եկեալ վաղվաղակի եհան զիս 'ի հորէն. եւ տարեալ կացոյց առաջի Սենեքերիմայ։ Եւ յորժամ ետես թագաւորն զիս կենդանի՝ յարեաւ յաթոռոյն, եւ անկաւ զպարանոցաւ իմով, եւ համբուրեաց զիս եւ ասաց. Ով Խիկար՝ մեռեալ էիր եւ կենդանացար։ Եւ յոյժ ուրախ եղեւ թագաւորն. եւ ետ պարգեւս մեծամեծս Աբուսմաքայ զօրապետին. եւ հրամայեաց պատուել զիս աւուրս քառասուն.

եւ հետ լրման քառասուն աւուրց՝ հրամայեաց թագաւորն բերել զիս առաջի իւր. եւ ետ ընթեռնուլ ինձ զթուղթն փարաւոնի։ Եւ յորժամ ընթերցայ ես Խիկարս՝ ասացի ցթագաւորն՝ Մի տրտմիր եւ մի կոծիր, զի ես երթամ եւ տամ պատասխանի փարաւոնի, եւ առնում հարկս 'ինամանէ եւ գամ։ Եւ իբրեւ լուաւ թագաւորն իմ, յոյժ ուրախ եղեւ 'ի բանից իմոց։

Եւ ապա ես Խիկարս՝ առաքեցի պատուէր առ Աբեստան կին իմ, թէ կալ ե՛կուս ձագս արծուոյ. եւ տուրմանել պարան մի երկայն. եւ տուր բերել երկուս կաթընկեր տղայ եւ կանայս երկու որ մնուցանիցեն զմանկունսն։ Եւ ուստ տղայոցն գոչել՝ Կաւ, ծեփ, աղիւս բերէք. եւ զամենայն օր կապեա զերկոսին մանկունսն 'ի վերայ ձագուցն արծուոյ, եւ թող յօդս պարանսն, եւ իջո՛ 'ի վայր, մինչեւ կատարեալ ուսցին ելանել եւ իջանել եւ համբառնալ։ Եւ կինս իմ իմաստուն էր, եւ փութով կատարեաց զհրամայեալսն իմ։ Եւ ես առի հրաման 'ի թագաւորէն իմմէ եւ ելեալ գնացի 'ի տուն իմ։ Եւ առի զերկոսին տղայսն եւ զձագս արծուոյն՝ եւ եդի յարկղ մի, եւ ելեալ գնացի առ փարաւոն արքայն, Եւ յորժամ հաս յԵգիպտոս՝ իջեւանս արարի 'ի տան միում, եւ թողի զարկղն 'ի տանն, յոր իջեւանեալ

էի. եւ ես գնացի առաջի Փարաւոնի եւ երկրպագի նմա։ Եւ ասէ զիս Փարաւոն. Ո՞վ ես դու. կամ ուստի գաս։ Եւ ես ասացի. Արքայ յաւիտեան կաց. ահա ծառայ քոյ է, զոր առաքեաց Սենեքերիմ արքայ կատարել զհրամանս քո. եւ բերեալ եմ ընդ իս ճարտար շինող, որ շինէ դարպաս յօդս։ Եւ ասաց Փարաւոն. Զի՞նչ է անուն քո։ Եւ ես ասեմ, Ապակայ է իմ անունն։ Եհարց ցիս Փարաւոն թէ՝ Զի՞նչ պիտոյ է շինողացն 'ի պէտս դարպասին։ Եւ ես ասացի ցնա՝ Տուր բերել կաւ, ծեփ, աղիւս։ Եւ հրամայեաց Թագաւորն՝ եւ բերին վաղվաղակի։ Եւ ես Խիկարս գնացի կապեցի զերկոսին աղայսն յերկուս ձագըս արծուոյ. եւ թռուցի յօդս, Եւ որդայքն աղաղակէին, Կաւ, ծեփ, աղիւս բերէք, զի շինեսցուք զդարպասն։ Եւ ոչ ոք կարէր հանել ինչ 'ի վեր։ Եւ ես ասեմ. Հանեցէք, զի մի դատարկ մնասցեն։ Եւ տեսեալ զայս զօրացն Փարաւոնի՝ փութեան եւ անկան 'ի դարպասն. եւ պատմեցին Փարաւոնի զաքանչելիսն ամենայն։ Եւ ելեալ Փարաւոն 'ի տես եւ աղաղակ ողայոցն հնչէր յօդս. եւ զարմացաւ յոյժ, եւ ասաց 'ի սրտի իւրում թէ՝ Սա իմաստութեամբ լաւ է քան զԽիկար. եւ ոչ գիտէր թէ՝ ես եմ Խիկարն։ Եւ մտի առ Թագաւորն, եւ երկիրպագի նմա։ Եւ ասէ

ցիս՝ Փարաւոն։ Երդմնեցուցանեմ զքեզ, ասա ինձ զատոյդն. ով ես դու։ Եւ ասաց ցնա, Ես եմ Խիկարն։ Եւ ասէ Փարաւոն՝ Ով թշուառական, կենդանացար։ Եւ դարձեալ ասէ. Ո՛վ իմաստուն Խիկար. մեկնեա ինձ զայս թէ՝ ղինչ է սիւնն այն 'ի վերայ սեան. մայրք երկոտասան 'ի վերայ մայրեաց. անուանք երեսուն 'ի վերայ անուանց. սուրհանդակք երկու մինն սեաւ եւ միւսն սպիտակ։

Պատասխանէի ետու եւ ասացի. Սիւնն՝ տարին է. մայրք երկոտասան՝ ամիսք տարւոյն են՝. անուանք երեսուն՝ աւուրք ամսոյն են. սուրհանդակք երկուս՝ միւն եւ գիշերն է։ Եւ դարձեալ ասէ Փարաւոն. Ո՛վ Խիկար մանէ ինձ պարան յաւազոյ։ Եւ ես գնացի ծակեցի յորմն մի դէպ յարեւելս. եւ 'ի ծակել արեւուն, անկաւ չորն 'ի ներքս եւ ես առի աւազ եւ փոշի երկուս ափս, եւ տայի ընդդէմ արեգական, որ տանէր ոլոր ոլոր ընդ ծակն 'ի ներքս. եւ ես գոչէի՝ Կդեցէք զպարան փութով։ Եւ զահի հարեալ Փարաւոն ապուշ մնայր. եւ կոչեալ զիս առ ինքն՝ ետ ինձ պարգեւս ազնիս եւ հարկս թագաւորին իմոյ, եւ չնորհակալ եղեւ 'ի նմանէ։ Եւ ես Խիկարս եղեալ եկի առ Սենեքերիմ թագաւորն իմ, եւ անկեալ համբուրեցի զոտս նորա. եւ պատմեցի մի ըստ միոջէ

զպատասխանին Փարաւոնի. այլ եւ զառաջին գրոյն զանմեղութիւնն իմ։ Եւ յորժամ լուաւ զայս ամենայն, յայնժամ յոյժ ուրախ եղեւ Սենեքերիմ ասելով. Խիկար իմաստուն իմ, այժմ ցնծութեամբ ուրախ եմ ընդ կենդանութիւն քո. եւ զոր ինչ խնդրես յինէն՝ տաց քեզ։

Եւ ես Խիկարս չնորհակալ եղէ յարքայէն իմմէ եւ ասացի. ոչ է պէտք ինձ գանձ կամ պատիւ, բայց միայն զայս ինչ խընդրեմ 'ի քէն. զի զՆաթան քեռորդին իմ որ է որդեգիր ինձ եւ աշակերտ՝ հրամանաւ քո տացես ինձ. զի ուսումն այլ կայ պակաս, զայն եւս ուսուցից զի լիցի կատարեալ։ Եւ հրամայեաց թագաւորն տալ զՆաթան 'ի ձեռս իմ. եւ ասէ, Զոր ինչ կամիս՝ արա դմա։ Եւ ես կալայ ըզ Նաթան եւ տարայ 'ի տուն իմ, եւ սկըսայ ասել ցնա այսպէս։ Ո՛րդեակ իմ Նաթան՝ զառաջին խրատն՝ զոր ետու քաղցրութեամբ՝ ոչ պահեցեր 'ի սրտի քում եւ կորուսեր, արդ այժմ ուսուցանեմ դառնութեամբ։ Եւ կապեցի զնա երկաթի կապանօք, եւ եդի 'ի պարանոց նորա հինգ հազար լիտր երկաթ, եւ յանձնեցի զնա Բելիար ծառային իմոյ, եւ հրամայեցի առնուլ թուղթ եւ թանաք 'ի ձեռին իւրում, զի 'ի մտանել եւ յելանել իմ զոր ինչ առնիցեմ Նաթանայ՝ գրեսցէ։ Եւ ե-

տու պատուէր նմա, զի զհաց եւ զջուր չափով տացէ. այնչափ զի մի մեռանիցի։

Եւ նմա եւ յառաջ հարի բրով 'ի թիկունս նորա եւ ասացի։

Ո՛րդեակ իմ Նաթան՝ մարդոյ ականջք եթէ ոչ լսեն. զթիկունսն ծեծելով լսեցուցանեն։

Ո՛րդեակ իմ Նաթան՝ յաթոռ փառաց նստուցի զքեզ. այլ դու յաթոռոյ իմմէ ընկեցեր զիս եւ կործանեցեր։

Խօսեցաւ ընդիս Նաթան եւ ասէ. Զի ՝ի՞ր ուրացար զքեռորդին քոյ։

Եւ ես ասացի. Ո՞՝րպէս ոչ ուրացայց։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս կարիճն այն՝ որ եհար զասեղն, եւ ասեղին ծայրն չար էր քան զիւրն. եւ դարձեալ՝ իբրեւ զայն՝ որ եհար զոտս ուղտոյ. եւ նա հարեալ ըզթաթն 'ի վերայ կարճին՝ սատակեաց զնա։

Ո՛՝րդեակ՝ զի եղեր ինձ որպէս վայրենացեալ եզն. որ էարկ զտոճն, եւ անկաւ վարսցն, եւ վիրաւորեցան ոտք իւր։

Ո՛՝րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այծն այն որ ուտէր զտորոնն. եւ ասէր՝ Ես 'ի կենդանութեան իմում ուտեմ զքեզ. թող յետոյ հանեն զքո արմատս, եւ ներկեն զմորթ իմ։

Ո՛՝րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այրն այն՝ որ ձգեաց նետ ընդ երկինս. թէպէտ ոչ կարաց հասուցանել, այլ՝ զանօրէնութիւնքն չահեցաւ, եւ դարձաւ նետն 'ի գլուխ

իւր. նոյնպէս եւ դու կամեցար սպանանել զիս, այլ անմեղութիւնս իմ ապրեցոյց զիս։

Ո՛րդեակ՝ զի եթէ ապի խողին ութ կանգուն երկայն լինի՝ փոխանակ ձիոյ ոչ կարէ լինել։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս արջն այն՝ որ հանդիպեցաւ իշոյ, եւ ասաց՝ Ողջոյն ընդ քեզ. եւ ասէ էշն՝ Այդ ողջոյնդ՝ 'ի գլուխս Տեառն իմոյ լիցի՝ որ արձակեաց զիս 'ի մարոյ, որ եկի եւ հանդիպեցայ քեզ, եւ տեսի զերեսս քո զժամս։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս որոգայթն այն՝ որ թաղեալ կայր յաղին. եւ եկեալ ճնճղուկ մի ասէ, Զի կայցես ասա. ասէ որոգայթն՝ Աղօթս առնեմ առ Աստուած. ասէ ճնճղուկն՝ Զինչէ այդ 'ի բերան քում. ասէ որոգայթն՝ Քաղցելոց հաց. եւ վաղեաց ճնճղուկն առնուլ զհացն յորոգայթէն. եւ որոգայթն անկաւ 'ի վերայ պարանոցի ճնճղկին. եւ ասէ ճնճղուկն, թէ ա՞յդ է քաղցելոց հացն. ապա եւ Աստուած այսպէս լսէ աղօթից քոց։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն՝ որ դողայր 'ի ցրտոյ, եւ եմուտ 'ի հնոց բրտին. եւ յորմամ ջեռաւ՝ սկսաւ հայել յերեսս բրտին։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն ագահ, որ ունէր հաց մի 'ի բերան, եւ երթայր յեզր գետոյն. եւ տեսեալ շուն մի

այլ 'ի մէջ ջրոյն՝ եւ հաց մի 'ի բերանն՝ որ՝ ընկեցեալ զիւր հացն 'ի բերանոյ իւրմէ անկաւ 'ի ջուրն, զի առցէ զնորա հացն. եւ իբրեւ եհաս 'ի մէջ գետոյն, ոչ զչունն՝ գիտ եւ ոչ զհացն. այլ խեղդեցաւ չունն՝ եւ զրկեցաւ յիւրմէ հացէն. նոյնպէս եւ դու զհացն իմ խլել կամեցար՝ եւ զրկեցար 'ի հացէն քումմէ։

Եւ դարձեալ Նաթան ազաչանօք ասէ առիս՝ Մեղայ քեզ հայր՝ այլ չգործեմ, զոր ինչ գործեցի. մի՛ չարաչար տանջեր զիս։ Եւ ես ասացի՝ Ահա տամ քեզ օրինակ մի. զի որպէս ծառն այն՝ որ բուսեալ էր յեզը գետոյ միոյ. եւ մարդ մի ծառայէր նմա. եւ յորժամ հասանէր պտուղն՝ թափէր 'ի գետն եւ կորնչէր. եւ երբ գայր տէրն՝ ոչ գտանէր զպտուղն. եւ աշխատեցաւ այրն այն ամս երկուս եւ երիս. այլ 'ի հասանիլ պտղոյն թափէր 'ի ջուրն, եւ ոչ չահէր 'ի նմանէ. եւ ապա եհատ զծառն, եւ ընկեց 'ի ջուրն ասելով. Այսքան աշխատեցայ, զինչ չահեցայ, զի այսուհետեւ զըտից։ Նոյնպէս եւ դու եղեր ինձ. զի յառաջագոյն այսչափ խրատս ետու քեզ՝ եւ ոչ լուար. այժմ զինչ լինիցիս. արժանի ես չարչարանացդ՝ մինչեւ մեռանիցիս։ Եւ սպանի զնա, բարձաւ չարն 'ի միջոյ, եւ եղեւ խաղաղութիւն։ Արդ՝ մարդ՝ որ փոխանակ բարւոյ չար հատուցանէ, իբրեւ զՆաթան կորնչելոց է։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՆ
ԵՒ ՀԱՐՅՄՈՒՆՔ ՆՈՅՆ
ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ

Այր մի էր մեծատուն եւ իշխան 'ի քաղաքի միում եւ ունէր ամբաւ դանձս։ Ոսկի եւ մարգարիտս անդինս, եւ պատուական ակունս, եւ ոչ ոք էր յաշխարհին յայնմիկ քան զնա մեծատուն։ Եւ ինքն ծերացեալ էր՝ եւ ոչ ունէր զաւակ՝ եւ հանապազ աղաչէր զԱստուած վասն զաւակի։ Եւ Աստուած ետ նմա որդի անընման եւ գեղեցիկ։ Իբրեւ աճեաց մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն իմաստասիրութեան։ Եւ նա ուսաւ զամենայն իմաստասիրական բանս. եւ էր պատերազմող անյաղթ։ Բայց յետոյ ետ զանձն յուսել եւ յընդել, եւ հատոյց՝ զգանձս հօր եւ մօր իւրոյ. եւ հայր եւ մայր նորա մնացին դատարկ, մինչեւ չմնալոյ նոցա ինչ մի։ Ապաց որդին ցհայր եւ ցմայր իւր՝ կամիք, զի

մեկնեսցուք յերկրէ ասսի, եւ երթիցուք յերկիր՝ուր ոչ ոք ճանաչէ զմեզ, եւ զհպարտութիւն ընկեսցուք, եւ մուրանայցեմք զի կեցցուք, եւ մի վհատեսցուք, եւ մի այր թշնամի ծիծաղեսցի զմեօք։ Ասացին ծնողքն, Դու գիտես որդեակ։ Էառ մանուկն զհայր եւ զմայր իւր, եւ գնաց 'ի Հռոմ քաղաք։ Եւ 'ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի բարի եւ իմաստուն. մտին 'ի քաղաքն՝ եւ իջին 'ի տուն մի։ Եւ թագաւորն ելեալ էր յորս. եւ իբրեւ եկն թագաւորն յորսոյ. եմուտ մանուկն առ թագաւորն, եւ ծունր եւ կանգնեցաւ։ Եւ սկսաւ թագաւորն խօսիլ ընդ մանկանն եւ ասաց. Զինչ խնդրես յինէն, զի արարիցք քեզ։ Ասէ մանուկն. թագաւոր՝ յաւիտեան կաց. են իմ երկու ծառայք 'ի վաճառել, մին այր եւ միւսն կին. խնդրեմ, զի զբնեսցես զնոսա։ Ասէ թագաւորն. բեր, եւ ես առիցս զնոսա զնոց։ Գնաց մանուկն առ հայրն եւ առ մայրն. եւ ասաց նոցա. Ես արարիցս զոր ինչ արժան է, զի կեցցուք ես եւ դուք միանգամայն։ Ասացին ծնողքն, Դու գիտես որդեակ։ Ասաց մանուկն. Կամիմ վաառել զձեզ թագաւորին. դուք բարիս վայելէք եւ ձերով գնովն ինձ բարիլիցի. սակայն Ջանացայց փութով ազատել զձեզ. դուք զինչ հրամայէք։ Ասացին ծնողքն, Դու գիտես որդեակ։ Եւ էառ մանուկն զհայր

եւ զմայրիւր, եւ գնաց առ թագաւորն։ Ասէ թագաւորն ցմանուկն թէ՝ Քանիոյ վաճառես։ Ասէ մանուկն ցթագաւորն. Տուր ինձ փոխանակ ծառայ կնոջդ ձի ընտիր եւ զէնս իւր սարօքն։ Եւ ծառայ առնդ տուր ինձ հանդերձ լաւ եւ պատուական։ Հրամայեաց թագաւորն՝ եւ եառն զամենայն ինչ զոր խնդրեաց մանուկն փոխանակ երկուց ծառայից. եւ տուեր մի եւ ոսկի հանդերձ գօտւով։

Եւ էառ մանուկն զամենայն, զոր պարգեւեաց նմա թագաւորն։ Ապա ասէ թագաւորն ցմանուկն, Եւ զայլ ինչ զոր կամիս յինէն՝ խնդրեա, զի տաց քեզ։ Ասէ մանուկն. Տացես ինձ հարիւր դահեկան վասն այսց պիտոյից։ Հրամայեաց թագաւորն եւ եառն։ Դարձեալ ասէ թագաւորն. Կամիս այլ եւս ինչ յինէն։ Ասէ մանուկն. Հրաման տուր ինձ, զի խօսեցայց ընդ քո ծառայս՝ զորս յինէն գնեցեր, զի զիւրեանց օրհնութիւն տայցեն ինձ։

Հրամայեաց թագաւորն. գնա եւ խօսեաց։ Եւ իմացաւ թագաւորն, եթէ ծնողք նորա էին։ Գնաց մանուկն, եւ անկաւ յոտս ծնողացն եւ ասէ. Մի հոգայք, թէ Աստուած կամեցի, զձեզ փութով ազատեմ։ Եւ ծնողքն օրհնեցին զորդին իւրեանց։

Եւ մանուկն յիշեաց զԱստուած, եւ մեկնեցաւ 'ի ծնողացն լալով. եւ գնաց զե-

րիս աւուրս եւ զերիս գիշերս ընդ դաշտ մի մեծ։ Եւ 'ի գնալն հանդիպեցաւ ընտիր մանուկ մի. ողջոյն տուուն միմեանց, եւ ընկերացան 'ի ճանապարհին։ Եւ իբրեւ ընկերացան՝ միւս մանուկն խնդացաւ զայր մանկան զիրսն, զի վաճառեալ էր զհայր եւ զմայր իւր։ Եւ ասաց նմա. զիտասջիր եղբայր՝ զի իմ թագաւորն զիս յոյժ սիրէ եւ թուղթս աւետեաց ետ, ինձ տանել առ կրզզեաց թագաւորն, եւ առից պարգեւս մեծամեծս. այլ տեսանեմ զքեզ, զի դու խեղճ մանուկ ես, եւ լաւ ճիաւոր քան զիս. առ զթուղթդ, եւ դու տար զնոսա առ թագաւորն. զի քեզ բարեւ բարիս պարգեւէ. զոր ինչ ինձ չնորհեալ է Աստուծոյ քեզ լիցի. եւ ես մնամ 'ի դաշտի աստ, մինչեւ դու դայցես առ իս։ Եւ մանուկն զնամականին եւ եդ զնոսա 'ի քսակ մի մաշկեղէն, եւ գնաց 'ի ճանապարհ իւր 'ի մեծ դաշտ մի։ Եւ յանկարծակի յիշեաց զհայր եւ զմայր իւր, եւ չատելաց. եւ 'ի չատ հոգալոյն հնչեաց 'ի վերայ ձիոյն. եւ եկ ձին 'ի ճանապարհէն, եւ կորոյս զճանապարհն։ Եւ յանկարծակի զարթեաւ 'ի քնոյն. եւ էր ծարաւեալ ինքն եւ ձին. եւ ջուր ոչ գոյր. այլ մոլորեալ չուրջ գայր։ Եւ եգիտ ջրհոր մի 'ի վաղնջուց ժամանակաց. եւ 'ի ծարաւոյն կամէր 'ի ջրհորն անկանել. ապա եհան զքսակն մաշկեղէն՝

յորում նամականին էր, եւ կապեաց պարան, եւ եհան ջուր. արբ ինքն, եւ արբոյց ձիոյն, եւ պահ մի հանդեաւ։ Եւ ապա ասաց 'ի միտս իւր թէ՝ ընթերցայց զթուղթն, եւ սկսաւ ընթեռնուլ։

Եւ էր գրեալ այսպէս։

Այս անուն կղզեաց թագաւորի ողջոյն ըոյ. զիտացիր եղբայր, զի թղթաբերդ այդ անհաւատ մարդ է, եւ մեզ նենգաւոր. դա մեծ էր առ մեզ. եւ սպառեաց զամենայն գանձ մեր. դա ել առ դուստրիս, եւ վնաս գործեաց նմա. եւ ես կամեցայ կորուսանել զնա, այլ առաքեցի առ քեզ զի մի ոք իմացի զծանականս մեր. եւ առաքեցի առքեզ, զի կորուսցես զդա եթէ, զմեր սէրն կամիս։

Ընթերցաւ եւ իմացաւ մանուկն, զի 'ի վերայ իւր գալոց էր մահն. պատառեաց զնամականին, եւ գոհացաւ զԱստուծոյ. եւ օրհնեաց զիւր ծնողն, զի ուսուցին նմա ուսումն եւ դպրութիւն, զի գիտութեամբն իւրով ապրեցաւ. եւ աղաչեաց զԱստուած գտանել զճանապարհն։ Եւ մոլորեալ շուրջ գայր զտիւ եւ զգիշեր եւ հարցանէր զանուն թագաւորին, եւ զայն քաղաք ուր գնալոց էր. եւ գտեալ եմուտ 'ի քաղաքն։ Եւ էր այնր քաղաքի թագաւորն մեծ, եւ քաղաքն բարի։ Եւ

էջ մանուկն 'ի տուն պառաւոյ միոջ, հանդեաւ սակաւիկ մի. եւ սկսաւ հարցանել եւ քննել զքաղաքն, եւ զքաղաքին գնացս եւ զթագաւորն։

Եւ պառաւն ասաց թէ՝ Այսր քաղաքի թագաւորն դուստր մի ունի յոյժ գեղեցիկ եւ իմաստուն՝ եւ չիք նման նմա մինչեւ յայս տիս հասակի իւրոյ. սպանեալ է նորա զորդիս ինն թագաւորի։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Վասն էր սպանանէ։

ԱՍԷ ՊԱՌԱՒՆ. Որդեակ ասէ թէ՝ Որ ոք յաղթէ ինձ իմաստութեամբ՝ ես գնա առնեմ ինձ այր. եթէ ես յաղթեմ նմա ըսպանանեմ զնա։ Եւ արդ յաղթէ զորդիս թագաւորաց եւ սպանանէ զնոսա. եւ ըզ գլուխս նոցա կանգնէ 'ի վերայ աշտարակին իւրոյ։ Աշտարակ նորա կայր 'ի վերայ քաղաքին. եւ ունի նա անդ գահ ոսկի յեռեալ ակամբք եւ մարգարտովք. անդ նստի եւ ընդ վանդակապատ պատուհանսն դիտէ զմարդիկ, որպէս զի ոչ ոք կարէ տեսանել զնա։ Եւ ունի պառաւ մի թարգման, որ խօսի ընդ այնոսիկ որ առնա մտանեն։ Լուաւ մանուկն զբանս պառաւոյն եւ զգիշերն 'ի բուն ոչ եմուտ 'ի քուն։ Իբրեւ եղեւ այգ, գնաց 'ի բաղանիս, զգեցաւ հանդերձ ոսկեթել, եւ օծաւ իւղովք անուշիւք, եւ գնաց 'ի դուռն դստեր թագաւորին. խնդրեաց հրաման

մոանել կալ առաջի դշխոյին։ Իսկ մարդիկն որ առ դրանն կային, խրատեսուն մանկանն եւ ասեն թէ՝ Զգոյշ լեր այնձին քում, զի չատ թագաւորի որդւոց զգլուխ է առեալ։ Եւ իբրեւ եմուտ մանուկն 'ի ներքս՝ ետ ողջոյն, եւ եդաւ աթոռ ոսկի, եւ նստաւ մանուկն։ Եւ գիտաց աղջիկն՝ եթէ վասն այնր բանի եկեալ էր։ Յղեաց կոչել զհայր եւ զմայր իւր, զդուշակսն եւ զիշխանս, եւ ժողովեցան ամենեքին։

Ապա ասաց աղջիկն ցթարգման իւր ցՊառաւն թէ՝ Ասա մանկանդ՝ եթէ կամիցի արդեօք զի արարից ընդ նմա որպէս արարիս ընկերաց նորա այլոց։ Ասաց Մանուկն. Կամք տեառն եղիցին։

Ասէ աղջիկն հօր եւ մօր իւրում եւ դուշակացն եւ իշխանաց զի վկայ լիցին բանիս նորա. եւ զի եթէ մանուկն յաղթէ դատեր թագաւորին՝ առնուցու զնա իւր 'ի կնութիւն. եւ եթէ դուսաւ թագաւորին յաղթիցէ մանկանն՝ արասցէ նմա որպէս այլոցն. զոքս սպան։ Հաւանեցաւ մանուկն եւ ամենեքին վկայ եղեն։

Հարցուածք։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ. Ով է քո հայր։
ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Հողմն եւ հուր։
ԱՂՋԻԿՆ. Ո՞վ է քո մայր։
ՄԱՆՈՒԿՆ. Հող եւ անձրեւ։

ԱՂՋ. Յորմեմ կենդանակերպի ծնեալ ես գու:

ՄԱՆ. Ի խոյին տարուոջ եմ ծնեալ.

ԱՂՋ. Ո՞վ է քո դայեակ.

ՄԱՆ. Այն է իմ դայեակ՝ որ զիս տեսանէ, եւ ես զնա ոչ տեսանեմ. նա զիմ ձայն լսէ, եւ ես զնորա ձայն ոչ լսեմ.

ԱՂՋ. Այդ տղայոց հարցմունք են, թող զայդ ոցիկ 'ի բաց.

ԱՂՋ. Ո՞ր է առաջին արիւնն՝ որ հեղաւ յերկիր.

ՄԱՆ. Աբելի արիւնն է, զոր Կայէն սպան.

ԱՂՋ. Զինչ են այն երեքին, որ կերան եւ արբին եւ մեռան. եւ չէ ծնեալ զնոսա մայր.

ՄԱՆ. Ադամ եւ Եւայ եւ զառնն Աբրահամու, եւ խոյն այն՝ զոր Քրիստոս 'ի Սաբեկայ ծառոյն կախեաց.

ԱՂՋ. Դու մի աւելի ասացեր.

ԱՂՋ. Ո՞յք են որ ծնեալ էին՝ եւ ոչ մեռան.

ՄԱՆ. Ենովք եւ Եղիա, որ ոչ մեռանին մինչեւ 'ի գալուստ Նեռին.

ԱՂՋ. Ո՞ր թռչուն է այն, որ ուտէ յարդ եւ գարի.

ՄԱՆ. Այդ մորեխն է.

ԱՂՋ. Զինչ է այն՝ որ ցորչափ կեայ, ճանճիւ չատանայ եւ կայ կենդանի.

ՄԱՆ. Գայլագռաւն է. որ յորժամ բերէ զձագն՝ սպիտակ է աւուրս երիս, եւ

մայրն փախչի. եւ յետ երից աւուրց սեւանայ, եւ մայրն գայ առ ձագն իւր։

ԱՂՋ. Զինչ է այն որ ցորչափ կենդանի էր, յարդ եւ գարի ուտէր. եւ իբրեւ մեռաւ՝ մարդոյ միս եւ արիւն կերաւ։

ՄԱՆ. Այդ այն է, զի Սամսոն մանուկն իշոյ ծնօտ առ 'ի ձեռն, եւ նովին հազար մարդ սպան։

ԱՂՋ. Ո՞ր ծառ է այն որ ոստ եւ տերեւ էր, եւ միս եւ յարիւն գարձաւ։

ՄԱՆ. Այդ Մովսիսի գաւազանն էր. որ մինչ ծառ էր՝ ոստս եւ տերեւ ունէր՝ իբրեւ յօձ գարձաւ՝ միս եւ արիւն եղեւ։

ԱՂՋ. Զինչ են այն երկու հակառակք, որ զմիմեանս սիրեն։

ՄԱՆ. Գիշեր եւ տիւ են։

ԱՂՋ. Այն ովէր, որ 'ի հանին իւր մերձեցաւ. եւ հանին ասաց թէ՝ Կոյս եմ։

ՄԱՆ. Աբելի մարմինն էր, զոր 'ի հող բերին. եւ հողն ասաց թէ՝ Ես կոյս եմ։

ԱՂՋ. Այն ովէր, որ հնգետասան ամ թագաւորեաց. եւ իբրեւ եղեւ վեշտասան ամաց 'ի հիւանդացաւ. եւ իբրեւ եղեւ երեսնամենի մեռաւ, եւ գարձեալ յարեաւ։

ՄԱՆ. Այդ լուսին է։

ԱՂՋ. Ո՞ր գերեզման էր, որ շարժուն եւ գնայուն եղեւ։

ՄԱՆ. Յովնան մարգարէ, զոր ձուկն եկուլ, եւ եղեւ շարժուն եւ գնայուն։

ՍՂՋ. Այն ոմ էր, որ Ջուր եւ կերակուր տարաւ քաղցելոց. եւ նոքա զկերակուրն թողին, եւ զնա որ տարաւ կերան։

ՄԱՆ. Դանիէլ մարգարէն էր, զոր արկին Առիւծոց, եւ նոքա զԴանիէլ թողին եւ զնոսա որ զկերակուրն տարան կերան։

ՍՂՋ. Այն ոմ էր, որ իբրեւ մեռաւ, ոչ մարմինն 'ի հող եմուտ, եւ ոչ հոգին առ Աստուած գնաց։

ՄԱՆ. Ղովսայ կինն էր, որ յաղ դարձաւ. ոչ մարմինն 'ի հող եմուտ, եւ ոչ հոգին առ Աստուած գնաց։

ՍՂՋ. Զինչ լոցէ ծառն այն, որ ունի երկոտասան ոստս եւ իւրաքանչիւր ոստ երեսուն տերեւ եւ պտուղ նորա սեաւ եւ սպիտակ է։

ՄԱՆ. Ծառն՝ տարի է. երկոտասան ոստքն՝ երկոտասան ամիսք են, երեսուն տերեւքն՝ երեսուն աւուրք են. պտուղն սեաւ եւ սպիտակ՝ տիւ եւ գիշեր են։

ՍՂՋ. Ո՞վ էր նա, զոր քարկոծէին. ոչ մարդ էր՝ ոչ քաջ էր՝ եւ ոչ հրեշտակ, եւ խօսեցաւ իբրեւ զմարդ։

ՄԱՆ. Երեմիա մարգարէին վէմն էր զոր քարկոծէին. խօսեցաւ իբրեւ զմարդ, իբր թէ ինքն էր Երեմիա մարգարէն։

ՍՂՋ. Ո՞վ էր այն՝ որ խրատ եւ ժողովրդեանն. ոչ քաջ էր, ոչ հրեշտակ, եւ ոչ Ադամայ որդի, եւ խօսեցաւ իբրեւ ըզ մարդ։

ՄԱՆ. Մրջիւնն զոր Աստուած յիշեաց 'ի գիրս եւ ասաց. Գնացէք 'ի ձեր դադարսն մտէք. Սողոմոն ժողովս է արարեալ՝ զի մի երթիցէք անդր։

ԱՂՋ. Ո՞վ էր նա զոր դեսպան առաքեաց Աստուած. ոչ քաջ էր, ոչ հրեշտակ եւ ոչ Ադամայ որդի։

ՄԱՆ. Գայլագուռան էր, որ եկն առ Ադամ, իբրեւ Կայէն զԱբէլ սպան. եւ Ադամ՝ չգիտեր, թէ զինչ առնէր. եկին երկու ագռաւք, եւ մին զմիւսն սպան եւ թաղեաց. ապա Ադամ ուսաւ, եւ փորեաց զգետինն, եւ թաղեաց զԱբէլ։

ԱՂՋ. Արի՛ եկ եւ գնա. այսօր աղատեցար 'ի ձեռաց իմոց. եւ տայր երկիւղ մանկանն։

ՄԱՆ. Այն Աստուած՝ որ փրկեաց զիս այսօր՝ կարող է եւ 'ի վաղիւն եւս փրկել, եւ ել եւ գնաց խնդալով։

Յորժամ տեսին՝ ամենեքեան զարմացան ընդ աղատել նորա. զի մինչեւ ցայն օր այլ ոք չէր զերծեալ 'ի նմանէ։

Գնաց մանուկն յիշեւանս իւր եւ ետես զի լայր Պառաւն դառնապէս։

Եւ Պառաւն իբրեւ ետես զՄանուկն՝ յոյժ ուրախ եղեւ եւ ասէ. Որդեակ դու ողջամբ եկիր. այսօր նոր ծնար 'ի մօրէ. ես երկնչէի, թէ զքեզ եւս սպանանէ. եւ առ կսկիծ քո ես մեռանէի։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Ամուսած փրկէ զիս 'ի նմանէ. Վաղիւն իբրեւ լուսացաւ՝ գնաց մանուկն 'ի դուռն Թագուհւոյն. եւ ողջոյն եւ ասաց թէ՝ Գիշերս բարւոք լուսացաւ քեզ։

Եւ նոքա եդին աթոռ ոսկի, եւ մանուկն նստաւ։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ. Ո՞վ էին այնոքիկ որ զմինանս սպանին. Նա որ սպանաւ՝ գնաց 'ի դժոխս, եւ որ սպանն՝ գնաց յարքայութիւն։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Ղամէք է, որ զԿայէն սպան. Կայէն գնաց 'ի դժոխս եւ Ղամէք յարքայութիւն։

ԱՂՋԻԿՆ. Ո՞վ է նա որ 'ի քնէ սպիտակ էր, եւ 'ի սեաւ դարձաւ։

ՄԱՆՈՒԿՆ. Նոյի որդին է որ իբրեւ զանէծսն ընկալաւ՝ սեւացաւ։

ԱՂՋ. Ո՞յք էին նոքա, որ կերան եւ արբին եւ մեռան, եւ չէր ծնեալ զնոսա մայր։

ՄԱՆ. Ադամ եւ Եւայ էր։

ԱՂՋ. Այն ո՞վ էր, որ էգ էր եւ յարուէ ծնաւ։

ՄԱՆ. Եւայ է՝ որ ծնաւ յԱդամայ։

ԱՂՋ. Ո՞վ էր այն, զոր 'ի Գայլոյ բերան եդին, եւ Գայլն ոչ կերաւ զնա։

ՄԱՆ. Յովսէփ դեղեցիկն է։

ԱՂՋ. Ո՞ր տեղի լցէ այն՝ յորոյ վերայ

արեւ ոչ ծագեաց, յորմէ հետէ արար Աստուած զաշխարհ։

ՄԱՆ. Այն ծովու յատակն է, զոր Մովսէս պատառեաց։

ԱՂՋ. Ո՞վ իցեն երկուք այնոքիկ որ ցորչափ կեան, հանապազ անին։

ՄԱՆ. Զիք մեծ քան զձուկն 'ի ծովու, եւ քան զօձ 'ի ցամաքի։

ԱՂՋ. Ո՞յք են երկու սիրելիք որ զմիմեանս ատեն։

ՄԱՆ. Հոգի եւ մարմին։

ԱՂՋ. Զինչ իցէ այն որ զմարդ մեծատուն առնէ, եւ դառնայ ապա աղքատ առնէ։

ՄԱՆ. Շերաս, (մետաքսի որդն է), եւ հանճար նորա։

ԱՂՋ. Ո՞ր արիւն է, զոր ուտել արդար է։

ՄԱՆ. Այդ ձկան արիւն է։

ԱՂՋ. Զինչ էր այն, որ ոչ կերաւ եւ ոչ արբ 'ի կենդանութեան. իբրեւ մեռաւ՝ կերակուր՝ զհող կերաւ եւ էարբ ջուր։

ՄԱՆ. Մովսէսի գաւազանն էր. որ մինչ ծառ էր՝ կերակուր ոչ ուտէր. իբրեւ հատաւ 'ի ծառոյն եւ յօձ դարձաւ՝ կերաւ հող. եւ արբ ջուր, եւ եհերձ զծովն։

ԱՂՋ. Ցուն մի է, յորոյ 'ի մէջի ոսկի է եւ դուռն արծաթի. եւ եթէ ինչ մի նոր աւերեսցի, եթէ աշխարհ ամենայն 'ի

մի վայր եկեսցէ՝ զայն ոչ կարէ չինել։

ՄԱՆ. Այդ ձու է, որ իբրեւ բեկանի, ոչ եւս այլ չինի։

ԱՂՋ. Արի՛ ել եւ գնա. այսօր եւս գերծար 'ի ձեռաց խոց. վաղիւ արարից քեզ որպէս արարի ընկերաց քոց։

ՄԱՆ. Ասուած ողորմած է. եւ ել գընաց խնդալով։

Իբրեւ այդ եղեւ՝ գնաց յապարանս 'ի դուռն թագուհւոյն. եւ ողջոյն ասելով. Գիշերս բարւոք լուսացար քեզ։

Եւ հրամայեաց աղջիկն, եւ եղին զոսկի աթոռն, եւ նստաւ մանուկն։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ։ Ո՞վ է այն որ կռուի լսելով, եւ հարկանէ իւրովի, այլ չունի ձեռքս եւ ոտս։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ։ Այդ ձուին է։

ԱՂՋԻԿՆ. Ո՞վ է այն, որ կերակուր ուտէր, մինչ մեռեալն էր 'ի գերեզմանի, եւ դարձաւ եւ եղեւ կենդանի 'ի գերեզմանի։

ՄԱՆՈՒԿՆ։ Յոբ երանելին էր. որ մինչ ցաւագնեալ էր՝ մեռեալ էր եւ կերակուր ուտէր. եւ յետոյ առ ղիւր գեղեցկութիւնն կրկին։

ԱՂՋ. Այն ո՞վ էր, որ խրատ ետ մարդոյ. ոչ ոգի էր, ոչ մարդ, եւ ոչ հրեշտակ։

ՄԱՆ. Բարաղամայ էշն է. ասաց թէ՝ Դարձիր յետս, եւ մի երթար անիծանել զԽարայէլ։

ԱՂՋ. Ո՞յք էին որ երկուս պատգամաւորս յուղարկեցին. որ ոչ ոգի էին, ոչ մասդ, եւ ոչ հրեշտակ։

ՄԱՆ. Ագռաւն եւ Աղաւնին, զորս Նոյ յուղարկեաց քերել լուր։

ԱՂՋ. Ո՞վ ոք էին այնոքիկ, որ մեռան եւ կացին 'ի մէջ սահու եւ կենաց ամս երեք հարիւր։

ՄԱՆ. Եօթն մանկունքն էին, որ փախեան 'ի թագաւորէն, եւ ննջեցին յայրին. եւ յետ երեքհարիւր ամաց յարեան։

ԱՂՋ. Ո՞վ ոք էին, որ իբրեւ մտին յԵգիպտոս՝ եօթանասուն եւ հինգ էին. եւ իբրեւ ելին, վեցհարիւր հազարք եղեն։

ՄԱՆ. Յակոբայ նահապետի որդիքն էին։

ԱՂՋ. Զանբոյն անծնին բարձին, եւ ընդ անդադարին երդս անցուցին։

ՄԱՆ. Անբոյն՝ ազն է. անծին՝ ջորին է. անդադար ջուրն է. երդիք՝ կամուրջն է։

ԱՂՋ. Զինչ է այն զոր Աստուած ետ, եւ 'ի վաղիւն ել եւ ցանեաց զցանն. եւ յամենայն պահու երթայր եւ ասէր՝ Մեծացիր Աստուծոյ հրամանաւն. եւ այն որ 'ի միում տարւոջ աճի, սա յիւրաքանչիւր ժամու տարւոյ չափ աճէր. եւ 'ի միում աւուր արար զամենայն որ ինքեան պիտոյ էր։

ՄԱՆ. Այդ այն ծառն է՝ զոր տնկեցին

յայդուոչն Կիպարի. զի Աստուած առաքեաց ձեռօք Գաբրիելի հրեշտակին առնոյ եւ ասէ. Տար ցանեա զայդ՝ զի լիցի ծառ, կարեա եւ չինեա տապան. մուտ՝ի ներքս դու եւ որդիք քո, կանայք որդւոց քոց եւ կին քո ընդ նոսա. եւ արարին այնպէս՝ եւ ապրեցան ամենեքեան։

ԱՂՋ. Ջինչ են այն երեքին որ խօսեցան, եւ նման նոցա չիք յաշխարհի աստ։

ՄԱՆ. Երեքին այնոքիկ սոքա են. նախ՝ ծով որոյ չիք խուփն. երկրորդ՝ երկինք որոյ ոչ գոն սիւնք. եւ երրորդ՝ հաւ որ ոչ ունի կաթն. եւ միւս եւս ափ ձեռին մարդոյ ուր մաղ ոչ բուսանի։

Ցերրորդ պատասխանէ անտի երկեաւ աղջիկն. եւ ասէ ցպատանին. Դու մի եւս այլ աւելի ասացեր. եւ ասէ. Ե՛լ, գնա. այսօր եւս զերծար 'ի ձեռաց խմոց. այլ վաղիւն հասուցանեմ զքեզ առ ընկերս քո։

ՄԱՆ. ՑԱստուած եմ ապաւինեալ, նա ողորմած է, եւ ողորմի ինձ։

Ել խնդալով եւ գնաց ուրախութեամբ յիւր օթեւանս։

Իբրեւ վաղիւն լուսացաւ՝ նա եկն 'ի դուռն թագուհւոյն եւ ետ ողջոյն նմա։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ. Թէ՝ Գիշերս երբ բարեաւ լուսացաւ եւ քեզ. եւ եդին զոսկի աթոռն եւ նստաւ։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Հրամայեա, մեծ թագուհի

եւ զայլ ինչ զոր կամիս։

ԱՂՋԻԿՆ. Այժմ հրաման քո է։

ՄԱՆՈՒԿՆ. Ո՞վ է այն՝ որ մեծատուն էր, աղքատացաւ, եւ յաղքատութեան իւրում ագաւ զիւր հայրն, եւ հեծաւ յիւր մայրն. եւ գնաց գտանել զինչս իւր. այլ մահն եհաս 'ի վերայ. նաւառ զմահն 'ի ձիոյն վերայ. արբ մահուն չուր՝ եւ արբոյց ձիոյն. ինքն այլ ապրեցաւ՝ եւ ձին այլ։

Եւ աղջիկն չկարաց խօսել, զի ոչ գիտէր։ Ապա ասաց ցմանուկն. այսօր գնա, վաղիւն տամ զայնր պատասխանին. այդ բան դժուարին է։

Եւ մանուկն ելեալ գնաց յիւր օթեւանն։

Ասէ աղջիկն ցիւր թարգման պառաւն թէ՝ գնա 'ի շուկայն, եւ առ սպիտակ հաց, եւ սագ մի գէր. եւ հաւ խորովեալ. եւ զվորն լից շաքարով. եւ երկուս ամանս անուշ դինի սաստիկ յոյժ։ Գնացին ծառայքն, եւ կատարեցին զկամս նորա։

Եւ իբրեւ խոր 'ի քուն եղեն ամենեքին, աղջիկն ագաւ զիւր ոսկենկար հանդերձն, եւ օծաւ իւղոլք անուշիւք։ Եւ այլ եւս երկուս աղջկունս գեղեցիկս առ ընդ իւր։ Եւ ծառայիցն հրաման եառ, որ բարձին զկերակուրն անուշահամ եւ զըմպելին. եւ գնացին յիջեւան մանկանն, եւ հարին զդուռնն։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Ո՞վ ես դու։

ԱՍԵՆ ԾԱՌԱՅԻՆ. Տէր, գիտասջիր զի աղջկունք եմ 'ի տանէ թագաւորին. եւ որպէս լուսինն արեգական սիրոյ տէր է եւ մեք քո սիրոյ տէր եմք, վասն այնորիկ կամիմք տեսանել զքեզ։

ՄԱՆՈՒԿՆ. Ի բաց գնացէք. չէ արժան ձեզ մտանել առ իս. ոչ գիտեմ զձեզ։

Եւ նոքա աղաչանօք պնդեցին զերեսս իւրեանց ասելով թէ Ոչ երթամք 'ի դրանէս, մինչեւ տեսանեմք զքեզ։

Եւ մանուկն թող նոցա մտանել 'ի ներքս։

Եւ մտեալ աղջիկն, եբաց զերեսս իւր։

Եւ իբրեւ ետես մանուկն զերեսս աղջկանն, նուաղեցաւ 'ի սիրոյն։

Եւ աղջիկն նստաւ, եւ նստոյց ընդ իւր զՄանուկն։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ ՑՄԱՆՈՒԿՆ. Ունիս կերակուր ինչ ուտելոյ, բեր զի կերիցուք. եւ անուշահամ գինի՝ զի արբցուք եւ զուարթասցուք։

Զձայնն փոխեալ էր աղջիկն, զի մի կարիցէ ճանաչել զնա մանուկն։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ։ Ճշմարտութեամբ ասեմ, չունիմ ինչ 'ի ժամուս յայսմիկ, ոչ գիտէի թէ գալոց էք առիս, զի պատրաստէի ձեզ կերակուր լաւ։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ, ցծառայս իւր։ Բերէք այսր զոր ինչ ունիք ուտելոյ. եւ բերեալ ե-

դին սեղան զանազան անուշ կերակրով.ք, եւ նստան ըմպել քաղցր եւ անապակ գինի, եւ արբուցին զմանուկն. եւ աղջիկն քաղցրը բանս խօսէր, եւ զուարթացուցանէր զմանուկն։

ՄԱՆՈՒԿՆ. Եթէ կամիք՝ երթիցուք իւրաքանչիւր յիւր հանգիստ։

ԱՂՋԻԿՆ, Ասէ ցմանուկն. Եթէ զիս սիրես, պատմեա ինձ, զինչ էր այն զոր երեկ հարցանէիր դստեր թագաւորին։

ՄԱՆ. Ոչ կարեմ ասել, զի երկնչիմ, գուցէ մեռանիցիմ. զայլ ինչ հարց, եւ տաց պատասխանի։

Նա երդուաւ յԱստուած, թէ մինչեւ ոչ լսեմ 'ի քէն զայն բան՝ ոչ թողում զքեզ. եւ սկսաւ թախանձել զնա։

Եւ մանուկն բորբոքեցաւ 'ի սիրոյ աղջկանն, եւ յաղթեցաւ 'ի գինւոյն. եւ ասէ ցաղջիկն՝ Արի, եւ պատմեցից քեզ։

Եւ աղջիկն, եւ եհան զտեռն 'ի գըլխոյն՝ եւ եդ 'ի սնարան. եւ սկսաւ ուռնկն դնել մանկանն։

Եւ մանուկն յաղջկան սիրոյն եւ 'ի գինւոյ անտի թմրեցաւ, եւ մեկնեաց զբանն եւ աղջկանն ոչ կարաց առնել ինչ։

Եւ աղջիկն խնդաց ընդ միտս իւր. սահեցաւ յաթոռոյն, եւ եկ գնաց խնդալով. այլ զշղաչատեռն՝ զքօղ գլխոյն ոչ առ. եւ յոյժ ուրախ եղեւ թէ՝ Ուսայ զառեղծուա-

ծրն. եւ ինձ ինչ ոչ կարաց առնել. եւ
ես 'ի լուսանալն՝ սպանանել տամ զնա։

Եւ մանուկն 'ի վաղիւն զարթեաւ, եւ
ուշաբերեալ գիտաց թէ խաբեցաւ. եւ
յոյժ տրտմեցաւ. յետոյ ետես զձորձ աղջ-
կանն՝ զոր մոռացեալ էր, եւ յոյժ ուրախ
եղեւ, եւ առ պահեաց զնա։

Եւ ելեալ գնաց յապարանն, եւ ողջ-
ոյն եւ նստաւ յոսկի աթոռն։

Իմացաւ մանուկն՝ եթէ թագաւորին
դուստրն էր, որ եկն առ նա։

Եւ աղջիկն յղեաց պատգամ հօրն եւ
մօրն եւ իշխանացն, եւ եկին ամենեքին։

Եւ մանուկն յոտն եկաց, ծունր եդ
թագաւորին եւ նստաւ։

ԱՍԷ ԱՂՋԻԿՆ. Ասացից զերեկեան բանն,
զոր հարցեր ցիս. եւ սկսեալ ասաց զա-
մենայն կարգաւ, զոր երեկոյին լուեալ էր։

Եւ ամենեքեան զարմացան ընդ գի-
տութիւն աղջկանն։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. ցթագաւորն առաջի ա-
մենայն իշխանացն։

Տիեզերական թագաւոր՝ քո դուստրն
ինձ աւուրս երիս բան եհարց, եւ ես պա-
տասխանի ետուս. թող հարցից նմա եւ ես
ինչ մի. եթէ գիտասցէ՝ նա զիս յաղթէ.
եւ թէ ոչ ես յաղթող եղէց նմա։

ԱՍԷ ԹԱԳԱՒՈՐՆ. Այդմ հաւան եմք։

Եւ վկայ կացին ամենայն իշխանքն ե-

թէ այլ եւս ինչ մի հարցցին միմեանց։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ ՑԱՂՋԻԿՆ. Ո՞ր թռչուն է այն զոր կալայ եւ զենի. եւ զիւեսուրն պահեցի. զնա գլխովին խորովեցի եւ եղի առաջի իմ զի կերայց, եւ այն թռչունն ունէր ընդ իւր այլ եւս թռչունս. այլ իւր փետուրն էր գեղեցիկ որպէս զոսկի՝ եւ յանկարծ թռեաւ եւ գնաց։ Եւ եթէ ոչ հաւատայք զիւեսուրն բերեմ զի տեսանիցէք։

ԱՂՋԻԿՆ ԻԲՐԵՒ ԶԱՅՆ ԼՍԱՒ՝ ԵՐԿԵԱՒ ՅՈՅԺ, ՔԱՆԶԻ ԶԻՍԷՐ ԵԹԷ ՎԱՆ ԻՒՐ ԱՍԷՐ։

Ասէ՝ այդ քան դժուարին է, ոչ կարեմ զիտել. գիտեմ զի յաղթեցեր զիս. խնդրեա զինչ եւ կամիս, եւ տաց քեզ։

ԱՍԷ ՄԱՆՈՒԿՆ. Բաց 'ի քէն զայլ ինչ ոչ խնդրեմ։

Եւ իշխանքն վկայեցին եւ հաւանեցան։

Պատկեցին եւ արարին աւուրս եօթն հարսանիս։

Եւ եան թագաւորն զկէս թագաւորութեանն եւ զկէս գանձուն. եւ որչափ աշխարհ ունէր ամենեցուն տիրեաց։

Ապա առաքեցին բազում մարդիկ եւ գանձս բազումս առ թագաւորն առ ուրում հայր եւ մայր նորա էին, եւ այնպէս եան բերել զնոսա առ իւր։

Եւ տեսեալ զիմաստնս ուրախ եղեն, եւ գոհացան զԱստուծոյ։

Եւ զասպրնչական պառաւն տարաւ յապարանսն եւ արար իւր մեծ։

Եւ թագաւորն յետ մահուան իւրոյ՝ ամենայն գանձուն եւ հեծելոյն եւ աշխարհին տէր կացոյց զմանուկն։

ՎԱՐՔ
ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱԼԷՔՍԻԱՆՈՍԻ ՃԳՆԱՒՈՐԻՆ

Այր մի էր 'ի քաղաքին Կոստանդնուպօլսոյ մեծատուն յոյժ եւ իշխան մեծ, եւ հրամանատար բազում գաւառաց. եւ էր անուն նորա Եփրեմիանոս. եւ անուն կնոջն Աննա։

Եւ էր Եփրեմիանոս մեծ եւ սիրելի յաչս թագաւորին իւրոյ։ Սոքա էին հասեալք մերձ 'ի ծերութիւն, եւ ոչ ունէին զաւակ 'ի վերայ երկրի, որ ժառանգէր զինչս նոցա. եւ էին կարի տրտում եւ անմխիթար՝ վասն ժառանգութեան։ Զտիւ եւ զգիշեր հանապազ աղաչէին զԱստուած վասն զաւակի։ Եւ յաւուր միում կինն Աննա՝ բազում աղախնօք եւ ծառայիւք գնաց 'ի մեծ եկեղեցին 'ի սուրբն Սոփիա, եւ կայր յաղօթս առ Տէր. եւ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն Սրբոցն՝ հայցէր 'ի Քրիստոսէ ժառանգ բարի։ Եւ յետ աղօթիցն բազում ողորմութիւնս առնէր աղքատաց եւ կարօտելոց,

եւ քահանայիցն ամենեցուն, եւ ելեալ գնայր 'ի տուն իւր։

Եւ 'ի գնալն 'ի ճանապարհին հանդիպեցաւ նմա ոմն թշուառ աղքատ եւ ողորմելի եւ ասաց. Տիկին՝ տուր ինձ ողորմութիւն յարեւ որդւոյ քո միամօրոյ։ Եւ տիկինն հիացեալ ընդ միտս իւր, ասաց թէ, Վայ ինձ՝ զի ես անժառանգ եմ, եւ դա ինձ երանի տայ վասն որդւոյ. արտասուեաց եւ ելայ. եւ հանեալ ետ նմա ողորմութիւն, եւ անց գնաց 'ի տուն իւր։ Եւ 'ի դիշերին յայնմիկ եկն 'ի տեսլեանն ծերունի ոմն, եւ աւետեաց Աննայի եւ ասաց. Կին դու՝ ահա կատարեցան խնդրուածք քո առաջի Աստուծոյ։ Բայց զայդ արծաթապատ ապարանս՝ որ անթիւ ոսկւով եւ արծաթով է զարդարեալ՝ տացես ողորմութիւն աղքատաց եւ կարօտելոց։

Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զերիցսունս եւ զքահանայս, եւ արար մատաղ մեծ եւ ընդունելութիւնս։ Եւ պատմեաց զտեսիլն իւր՝ առն իւրում Եփրեմիանոսի։ Իսկ նա ոչ կամէր տալ, այլ դժուարաւ ետ. քանզի սիրէր զապարանսն որ 'ի հինգ հարիւր երեսուն եւ երկու լիտր ոսկւոյ էր չինեալ. եւ յայսկոյս եւ յանկոյս մարգարտովք յեւեալ եւ զարդարեալ։ Եւ չորս բազէք տասն տասն լիտր արծաթոյ էին՝ թռուցեալ ածուէնման։ Եւ միւս եւս այլ

զթեւս իւր տարածեալ 'ի վայելչութիւն անկողնոյ իւրոյ. եւ էր երեսուն եւ երկու լիտր արծաթոյ։ Եւ առեալ զայս կին նորա, կոչեաց զոսկերիչս եւ արար անտի դահեկանս. եւ քարոզ կարդաց եւ ասաց ժողովել զամենայն քահանայսն, որ ընդ իւրով իշխանութեամբն կային, եւ զամենայն աղքատս եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս. եւ պահել զնոսա 'ի Հրոտից ամիսն մինչեւ ցելս ամսոյն։ Եւ առեալ ընդ իւր չորեքհարիւր քառասուն եւ հինգ քահանայս. եւ իջեալ 'ի վանսն հակեցին զգիշերն մինչեւ ցառաւօտն. եւ Պատարագս մատուցին վասն որդէծնութեան նորա. եւ նա ետ նոցա եօթն եօթն դահեկանս։ Եւ յետ երից ամսոց գիտաց կինն զյղութիւն իւր. եւ ետ աւետիս առն իւրում. եւ յետ ինն ամսոց ծնաւ կինն 'ի ծերութեան իւրում արու զաւակ։ Եւ յարուցեալ այրն՝ արձակեաց հրաւիրակս ընդ ամենայն իշխանութիւն իւր, կոչել զքահանայս եւ զեպիսկոպոսունս եւ զիշխանս։ Եւ արար ընդունելութիւն մեծ, եւ մկրտեաց զմանուկն. եւ եդին զանուն նորա Այեքսիանոս։ Եւ իբրեւ զարդացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն գրոց։ Եւ էր պատանին առատամիտ եւ առատաձեռն քան զզ հայրն իւր, եւ էր գեղեցիկ յոյժ. եւ ձայն նորա էր քաղցր իբրեւ զքնարի։ Եւ իբ-

բեւ եղեւ պատանին ութեւտան ամաց՝ եղեն հայրն արքառս եւ ոչխարս բազումս վասն նորա։ Եւ էր հսկայաձեւ եւ ընթերցող Աստուածեղէն սուրբ Գրոց, Հին եւ Նոր Կտակարանաց, մինչեւ եհաս լուր նորա յազգարանս թագաւորին։ Եւ յաւուր միում ասէ թագաւորն ցԵփրեմիանոս. Աստուած ետ քեզ պտուղ որովայնի, որոյ լուր նորա եհաս առիս. եւ է իմ դուստր զոր դու ճանաչես. արդ՝ տուր զնա ինձ 'ի փեսայութիւն։ Ոսկի եւ արծաթ իմ նմա եղիցի. եւ յետ մահուան իմոյ ժառանգեսցէ զաթոռ իմ։

Եւ ել Եփրեմիանոս յերեսաց թագաւորին, եւ գնայր թմբկօք եւ պարուք 'ի տուն իւր։

Իբրեւ լուաւ Ալեքսիանոս զգալուստ հօրն իւրոյ, յարեաւ ընդ առաջ՝ եւ երկիր եպագ նմա եւ ասաց. Հայր իմ ալեօք ծաղկեալ՝ զի է քեզ։ Պատասխանի ետ հայր նորա եւ ասէ, Խնդամ եւ ուրախ եմ վասն քո. զի թագաւորն խոստացաւ փեսայացուցանել զքեզ։ Պատասխանի ետ Ալեքսիանոս եւ ասէ. Գրեալ է 'ի սուրբ Աւետարանի, թէ որ դառնայ ընդդէմ ծընողաց իւրոց՝ տրտմութեամբ ի՞նչ անէ 'ի դժոխս։ Բայց դու անարգեալ լիցիս յերեսաց իմոց, զի յոյժ խզեցին բանք քո ըզսիրտ իմ։ Եւ իբրեւ լուաւ Եփրեմիանոս՝

դարձաւ տրտում, եւ անկաւ առաջի թագաւորին եւ ասէ. Վայ է ինձ այսօր՝ զի որդին իմ արհամարհեաց զհրաման թագաւորիդ եւ զբանս իմ։ Ասէ թագաւորն ցԵփրեմիանոս. Մի հոգար դու վասն այդորիկ. թերեւս դարձուցանեմ զնա յայնպիսի խորհրդոց։

Եւ հրամայեաց թագաւորն կոչել զԱլեքսիանոս։ Եւ գնացեալ գտին զԱլեքսիանոս, որ ընթեռնոյր զԱզմոսարանն՝ զոր ունէր 'ի ձեռին իւրում։ Ասէ պատանին. Կոչէ զքեզ թագաւորն։ Եւ յարուցեալ գընաց Ալեքսիանոս զհետ նորա յապարանս թագաւորին։ Ասէ թագաւորն ցԱլեքսիանոս. Որդեակ՝ զամուսնութիւնն պիղծ համարիս։ Պատասխանի ետ Ալեքսիանոս եւ ասէ. Ոչ թէ զամուսնութիւնն պիղծ համամիտ, այլ գրեալ է 'ի սուրբ Աւետարանի, թէ Որ ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զազգականս՝ եւ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։ Ոսկի եւ արծաթ կերակուր է ժանկոյ. եւ հանդերձ փափուկ ցեցոյ է կերակուր։ Յայնժամ կոչեաց թագաւորն զերկոտասան իշխանսն զտանուտեարսն՝ որք էին խրատտու թագաւորութեան իւրոյ, եւ ասէ ցնոսա. Զինչ արարիցք, քանզի ոչ կարացի դարձուցանել զԱլեքսիանոս յայնպիսի խորհրդոց։ Պատասխանի

եռուն իշխանքն եւ ասեն. Ոչ թէ բա-
նիւ նորա վարի թագաւորութիւնս մեր,
այլ հրամայեա արկանել 'ի սենեակ։ Եւ
թագաւորն հրամայեաց արձակել զԱլեք-
սիանոս. եւ առաքեաց հրաւիրակս ընդ
ամենայն իշխանութիւնս իւր, ժողովել զա-
մենեսեան զալ 'ի հարսանիս։ Եւ իբրեւ
գնացին քահանայքն կոչել զԱլեքսիանոս,
զի պսակեսցին ընդ դստեր թագաւորին,
ասաց Ալեքսիանոս ընդդէմ քահանայի-
ցին. Մի գնէք ինձ պսակ թառամելի, զի
զանթառամն չահեցայց։

Պատասխանի եռուն քահանայքն եւ
ասեն. Որդեակ՝ թէպէտ 'ի թագաւորէն
ոչ երկնչիս, այլ 'ի մէնջ պատկառեա։ Եւ
նա լուա եղեւ. եւ տարեալ պսակեցին
ընդ դստեր թագաւորին. եւ արարին հար-
սանիս աւուրս երկոտասան։ Եւ ապա կալ-
եալ թագաւորն զձեռանէ մանկանն եւ ազ-
ջրկան՝ էարկ զնոսա 'ի սենեակ եւ փա-
կեաց 'ի վերայ նոցա զեօթնդրունսն։

Եւ յարուցեալ մանուկն չիջոյց զկան-
թեղն եւ զմոմեղէնսն, եւ ասէ ցաղջիկն.
Ելոյր՝ պարտ է ինձ եւ քեզ յաղօթս կալ
եւ ապա ննջել 'ի միասին։ Եւ ելեալ կա-
ցին յաղօթս եւ ննջեցին սրբութեամբ։
Եւ յետ երկոտասան աւուրն անցանելոյ՝
ասէ աղջիկն ցԱլեքսիանոս. Ընդէր ոչ յայտ-
նեցեր զքեզ հօր եւ մօր քոյ. զի բազում

զեղատու բժիշկք կան 'ի քաղաքիս։ Ասէ ցնա Ալեքսիանոս. Սահման է՝ զի այր մարդ համարձակ է քան զկինն. պարտ է ինձ երիցս խօսել, եւ քեզ ոչ տալ պատասխանի։

Եւ յարուցեալ եկաց յաղօթս եւ ասաց այսպէս. Աստուած Աբրահամու Իսահակայ եւ Յակոբայ. որ փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բորբոքելոյ, փրկեա եւ զիս յայսմ գազան կնոջէ. զի մարմին կընոջ որպէս հուր է, եւ ես որպէս խոտ առաջի հրոյ, կամ յայրումն առաջի սորա. զի կին՝ ընտանի գազան է չար, եւ ոչ տայ հանգչել մարդոյ. եւ լռեալ ննջեցին։ Եւ յարուցեալ առաւօտուն Ալեքսիանոս ասէ ցաղջիկն. Արի կացցուք յաղօթս։ Ասէ աղջիկն ցԱլեքսիանոս. Ընդ՞ի՞ր ոչ խօսիս ընդ իս եւ ոչ բանիս մխիթարես զիս։

Յայնժամ Ալեքսիանոս ետ զմատանին ոսկի 'ի նա եւ ասէ. Գոյր՝ առ զսա եւ պահեա 'ի քեզ առ յիշատակի. մինչ ես երթայց 'ի դուռն Եկեղեցւոյն յաղօթս, եւ ապա դամ կատարեմ զկամս քո։ Եւ բացեալ զդրունսն, ելեալ գնաց մինչեւ յանկելանոցն. եւ տեսեալ զաղքատ մի՝ որ ունէր մաղեղին մի զանձամբ իւրով, եւ նմա զծիրանին՝ եւ առ զմաղեղէն նորա եւ ագաւ ինքն։ Եւ էր զին ծիրանւոյն երեք հարիւր դահեկան։ Եւ աղքատն

թագոյց զայն։ Եւ առեալ Ալեքսիանոս այլ կարկատուն կտաւ մի, էարկ զգլխովն եւ ծածկեաց զերեսս իւր։ Իբրեւ էանց պահ մի գիշերոյն՝ իմացաւ կինն զխորհուրդս նորա. ճիչ եւ աղաղակ բարձեալ լայր։ Եւ յարուցեալ դռնապանն ետես ըզ դրունսն բացեալ. եւ վառեցին ջահս եւ ընթացան յորոնել։ Եւ յորոնելն առ ոտն կոխէին զնա. եւ նա ասէր՝ Մի նեղէք զիս. թէպէտ աղքատ եմ, այլ Աստուծոյ արարած եմ։ Եւ իբրեւ էջ յեղր ծովուն՝ եգիտ նաւ մի որ երթայր յԵրուսաղէմ. եւ ասէ ցնաւավարն. Որդեակ՝ տար զիս յԵրուսաղէմ, եւ ես աղօթս առնեմ վասն քո։ Ասէ նաւավարն. Աղքատ դու, ընդէր ծածկես զերեսս քո եւ ոչ բանաս։ Եւ նա ասէ, Զի խստակրօն վարդապետի աշակերտ եմ. եւ նա պատուիրեալէ ինձ թէ՝ մի հայիր 'ի մարդ եւ ոչ յաչխարհ եւ մի բանար զերեսս քո։ Եւ մտեալ 'ինաւ հասին յԱրապոլիս. եւ անտի 'ի Կիպրոս. եւ անտի յԵրուսաղէմ. եւ յԵրուսաղէմէ 'ի լեառն Սինա՝ ուր Տէր խօսեցաւ ընդ Մովսիսի։

Եւ արար անդ զնչան խաչին 'ի վերայ նորա եւ ասէ. Սա եղէցի ինձ գերեզման եւ տուն յարկի. եւ եկաց անդ Ալեքսիանոս առն երեսուն եւ չորս. եւ էր կերակուր նորա 'ի ծայրից ծառոց եւ 'ի խոտ-

տոց, եւ ըմպելի նորա ջուր անձրեւաց։ Եւ ապա Սատանայ ընկէց 'ի սիրտ նորա զկարօտութիւն եւ զգուլթ ծնողացն, եւ այնու նեղէր զնա։ Եւ յարուցեալ էջ յեզր ծովուն, եւ եդիտ նաւ մի՝ որ երթայր յերուսաղէմ. եւ ասէ ցնաւապետն. Տար զիս յերուսաղէմ. եւ ես վասն քո ազօթս առնեմ։ Եւ առեալ զնա նաւեցին։ Եւ իմացեալ դիւացն յարուցին հողմ եւ մրրիկ 'ի ծովուն, եւ սկսաւ ալէկոծել նաւն, եւ ոչ կարացին յաղթել։

Ցայժմամ եկին եօթն դեւք չարագոյնք քան զառաջինն, եւ ասեն ցմիմեանս. Մեք զդորա համբերութիւնն գիտեմք. զի ստրա զօրութիւնն առաւել է քան զՑոբայն. այլ արասցուք դմա չարութիւն, յարուցուք հողմն սաստիկ 'ի վերայ ծովուն, եւ տարցուք զդա 'ի դուռն տան հօր իւրոյ. զի տեսանելով զաղէտս ծնողացն իւրոց՝ տայցէ ծանօթութիւն։ Եւ հանին հողմ սաստիկ 'ի վերայ ծովուն, եւ տարեալ ընկեցին զնաւն 'ի դուռն տան հօր նորա։ Իբրեւ գիտաց Աղեքսիանոս, թէ սատանայի էր գործն՝ ասէ. Երթամ 'ի դուռն տան հօր իմոյ, եւ անդ կոխեցից զգլուխ սատանայի։ Եւ իբրեւ ել յեզր ծովուն՝ ետես զՍիրեմիանոս զհայր իւր նստեալ 'ի վերայ ջրոյ, զի երթայր 'ի բաղանիս. եւ ընթացեալ ընդ առաջ եր-

կիր եպագ նմա եւ ասէ. Օտար յերկրէ եկեալ եմ վասն անուան քոյ. արդ՝ որ 'ի փշրանաց սեղանոյ քոյ անկանի՝ բաւական է ինձ 'ի կերակուր. եւ որ 'ի բաժակաց քոց կաթէ՝ բաւական է ինձ յըմպել։ Ասէ Եփրեմիանոս ցԵղբիայոս ծառայ իւր. Որդեակ՝ տար զդա յանկելանոց մեր։ Իբրեւ տարաւ զնա յանկելանոցն՝ ճիչ եւ աղաղակ բարձին աղքատքն ամենայն եւ ասեն. Թէ դա աստ գայ՝ մեք ամենեքեան ելանեմք։ Ասէ Եղբիայոս. Աղքատ դու, վասն քո զամենայն աղքատսն ոչ կարեմ հանել աստի։ Ասէ Ալեքսիանոս. Աղաչեմ զքեզ՝ տար զիս մինչեւ յերրորդ դուռն։

Եւ Եղբիայոս տարեալ զնա ասէ ցդրունապանն. Թոյլ տուր սմա բնակել յայսմ տեղւոջ. եւ եկաց անդ աւուրս երեսուն։ Ապա յետ երեսուն աւուրն՝ ասէ դռնապանն. Աղքատ դու՝ արի եւ գնա աստի. երկիցս եւ երիցս վարեաց զնա եւ ասէ. Ել եւ գնա աստի. քանզի տիկինն մեր սովորութիւն ունի գալ ընդ այս՝ եւ երթայ 'ի ծովեզրն լալ զորդին իւր Ալեքսիանոս զտէրն մեր։ Եւ նա ասէր թէ՝ Ես աստ մեռանիմ, եւ ոչ գնամ յայլ տեղի։

Եւ յետ սակաւ ինչ աւուրց գայր տիկինն, եւ առաջի նորա ծառայք. եւ ծառայիցն լրբեալք՝ կալեալ զհերաց նորա քարշէին զնա 'ի վերայ երեսաց իւրոց։

Եւ նա ձայնէր եւ ասէր. Տիկին բարի՝ մի տար ինձ առնել զայդ. թէպէտ եւ աղքատ եմ, այլ Աստուծոյ սարարած եմ։ Եւ նա սաստէր աղջկանցն եւ ասէր. Թոյլ տուք դմա ընակել յայդմ տեղւոջդ պանդխտութեամբ։ Եւ հայեցեալ ատէպ յերեսս նորա ասէր տիկինն. Աչք դորա վիարդ նման են աչաց Ալեքսիանոսին իմոյ։ Եւ երեալ եկաց եւ սկսաւ լալ ընդդէմ ծովուն եւ ասէր. Ջուրք՝ որ 'ի ծովդ էք, մի թէ կլայք զորդին իմ զԱլեքսիանոս, ցուցէք ինձ զնա, զի նա էր իմ յեսին եւ առաջին միսիթարութիւն։ Զի ցաւին աղիք իմ եւ գալարին. եւ հեծեծանօք ողբայ սիրտ իմ անդադար։ Հոգմ. աւետարերք, մի թէ ունիք ինչ լուր զիմմէ Ալեքսիանոսէն. զի տուրք էր նա ինձ յԱստուծոյ, եւ խնդրուած 'ի սրբասէր քահանայից։ Եւ զայս ամենայն լսէր Ալեքսիանոս եւ գալարէին աղիք նորա՝ եւ խորովէր լեարդն, եւ ոչ տայր ծանօթութիւն յահէ ամենակալին Աստուծոյ. որ ասէ 'ի սուրբ Աւետարանին թէ՝ Որ ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զադարակ վասն անուան իմոյ, չէ ինձ արժանի։ Եւ եկաց 'ի դուռն տան հօր իւրոյ ամենիկոտաման։

Եւ ապա հայեցաւ Աստուած 'ի տառապանս նորա, եւ առաքեաց զհրեշտակապետն Գաբրիէլ՝ առնուլ զհոգի նորա։

Իբրեւ եկն Գաբրիէլ, եւ նմա ողջոյն եւ ասէ. Եկ Ալեքսիանոս այրդ Աստուծոյ՝ եւ հանգիր յուրախութիւնսն երկնից՝ ի վերին երուսաղէմ, ի բնակութիւնս հրեշտակաց. զորմէ պատմէ Պօղոս թէ՝ Զոր ական ոչ ետես՝ եւ ունկն ոչ լուաւ՝ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Եւ նա ասէ ցհրեշտակն, ներել սակաւիկ մի, մինչեւ գրեսցէ զվարս անձին իւրոյ։ Եւ յարուցեալ էառ քարտէս եւ մուր ի բաղանեաց, եւ նստեալ գրեաց այսպէս։

Ես եմ Ալեքսիանոս որդին ձեր. հայր իմ Եփրեմիանոս. եւ մայր իմ Անանա. եւ կին իմ Մարգարիտ։ Ողջոյն թագաւորիդ եւ քահանայից քաղաքիդ միաբան ամենեցուն։ Մի լայր հայր իմ ծերացեալ, այլ մխիթարեաց Աստուծով։ Ցիշեա զի դու զայս կեանս խնդրէիր, եւ ես զերկնաւորն։ Նոյնպէս զերկաթն, եւ առի զոսկին փոխարէն ի տեառնէ։ Մի լայր մայր իմ եւ մի՛ արտասիր. մխիթարեսցէ զքեզ Քրիստոս։ Ցիշեա զի դու գայիր եւ աղջկունքն առաջի քո եւ հասեալ նոցա ի վերայ իմ, քարշէին զներացս ի վերայ երեսաց իմոց. եւ ես լայի՝ ոչ վասն այնորիկ զի քարշէին զիս, այլ զի լայիր դու եւ աղիողորմ կսկծանօք հառաչէիր. եւ իմ տեսեալ զայն դալարէին աղիքս. եւ ոչ իշխէի տալ ծա-

նօթուքիւն յահէն Աստուծոյ։ Մի լայր եւ դու կին իմ Մարգարիտ. զի ահաւասիկ պատրաստեցի ինձ եւ քեզ ճանապարհ, որ տանի 'ի կեանսն յաւիտենից։

Եւ ծալեալ զթուղթն եդ 'ի մէջ ձեռին իւրոյ եւ խփեաց. եւ նոյն ժամայն աւանդեաց զհոգին իւր 'ի փառս Աստուծոյ։ Եւ իջին երկոտասան հրեշտակք 'ի ձեւ մարմնաւորաց եւ յայտնեցին քաղաքին եւ ասացին. Արիք գնացէք 'ի դուռն Եփրեմիանոսի՝ եւ գտէք զայրն Աստուծոյ վախճանեալ։ Եւ 'ի մէջ դիշերին դղրդեցաւ քաղաքն ամենայն. եւ վառեցին ջահս եւ ժողովէին՝ եւ գնացին գտին, որպէս հրեշտակքն ասացին։ Եւ արկին 'ի վերայ նորա դիպակս պատուականս. եւ տեսին զի թուղթ մի էր 'ի ձեռին նորա. եւ կամեցան բազումք առնուլ զնա, եւ ոչ կարացին հանել 'ի ձեռաց երանելւոյն։ Եւ մատուցեալ յառաջ քահանայ մի խնամատուն եւ ասէ. Ոչ է պարտ առնուլ ուստեք զթուղթն, այլ միայն նմա՝ որ այսչափ ժամանակս կերակրեալ է զդա։ Եւ յուղարկեցին 'ի խնդիր Եփրեմիանոսի. եւ իբրեւ եկն՝ երկիր եպագ նմա եւ ասէ. Մեղայ քեզ սուրբդ Աստուծոյ, զիարդ գիտէի թէ որպիսի ոք ես դու, եւ մեկնեալ զձեռն, եւ առեալ զթուղթն, եբաց եւ սկսաւ ընթեռնուլ։

Եւ էր գրեալ այսպէս:

Ես եմ Ալեքսիանոս որդին ձեր. հայր իմ Եփրեմիանոս, եւ մայր իմ Անանա. եւ կին իմ Մարգարիտ:

Եւ իբրեւ լուաւ՝ իսկոյն ձգեաց զթուղթն 'ի ձեռաց իւրոց. եւ անկաւ 'ի վերայ մեռելոյն մաքնոյ, եւ յինքն անիծեալ դուչէր եւ լայր. եւ ոչ կարէին հանել 'ի գրկաց նորա զերիս աւուրս: Եւ եկեալ մայր նորա եւ կինն՝ ոչ կարացին մատանել առ նա վասն ամբոխին: Յաջմամ բերին դանձս բազումս եւ ցանեցին չուրջ զամբոխիւն. եւ քակեցաւ ամբոխն զկնի գանձին, եւ ապա կարացին մատանել առ Ալեքսիանոս այրն Աստուծոյ: Եւ անկեալ մայրն 'ի վերայ նորա. եւ եդեալ զերեսս իւր 'ի վերայ երեսաց որդւոյն իւրոյ, ասէր. Որդեակ իմ, թէ կենդանի ես՝ խօսեա ընդ տառապեալ մօր քոյ. եւ դնէր զերեսն 'ի վերայ սրտին՝ եւ հեղոյր զարտասուսն. եւ ձայն բարձեալ լայր դառնապէս՝ եւ ողբայր ազիողորմ յոյժ: Եւ եկեալ կին նորա՝ ընկէց զմատանին եւ ասէ. Արդ՝ այս իցէ սուրբ գալուստդ սիրելիդ իմ Ալեքսիանոս. մինչեւ ցերբ պահիցեմ զյիշատակ քո: Եւ ո՞ կարէ պատմել դրով զկոծումն եւ զողբումն նոցա՝ բոլոր քաղաքաւն առ հասարակ: Եւ յետ բազում

լալոյ՝ տարեալ թաղեցին զերանելի խոստովանողն Քրիստոսի զսուրբն Ալեքսիանոս, եւ շինեցին եկեղեցի 'ի վերայ նորա։ Եւ կացին հայր եւ մայր նորա կենդանի ամսութ զկնի փոխման սրբոյն ծառայելով եւ սպասաւորելով սուրբ Գերեզմանին նորա. եւ յետ այնորիկ հանդեան խաղաղութեամբ 'ի Քրիստոս։ Իսկ սուրբն Ալեքսիանոս՝ փոխեցաւ 'ի Քրիստոս 'ի քսաներորդում ութերորդում ամսեանն Հրոտից 'ի փառս Աստուծոյ։

Բարեխօսութեամբ կամաւոր աղքատացելոյն վասն քո, եւ օտարացելոյն 'ի ծանօթութենէ մարդկան, Քրիստոս Աստուած՝ տուր եւ մեզ ատել զզբաղմունքս կենաց, եւ մերձենալ 'ի սուրբդ սրբոց եւ առ ամենեցուն փափաքելիդ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՏԷՐ ՅՈՒՍԿԱՆ
ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ
ՍՏԵՓԱՆՈՍԻՆ

Ի թուին աղգիս հայոց վեցհարիւրորդի վաթսներորդի, յերկրին Ռըշտունեաց 'ի գաւառին Ցարայ 'ի գիւղաքաղաքին, որ կոչի Արտամետ մերձ 'ի Շամիրամակերտ 'ի մեծ դղեկին Վանայ, էր քահանայ ոմն՝ մեծազգի եւ մեծատուն, զարդարեալ ամենայն առաքինութեամբք, անուն նորա Ստեփանոս։ Եւ էր յոյժ պարկեշտ եւ ամօթխած. աղքատասէր եւ ողորմած. հիւրընկալ եւ մարդասէր. առատաձեռն եւ ամենաբաշխ. քաղցելոց կերակրիչ, եւ մերկացելոց զգեցուցիչ. եւ յայլ ամենայն բարեգործութիւնս՝ ժիր եւ արի։ Նաեւ 'ի պաշտօնս Աստուծոյ՝ եւ 'ի ժամակարգութիւնս սրբոյ Եկեղեցւոյ անձանձիր աղօթասէր. եւ զի կին նորա ամուլ էր՝ եւ ոչ ծնանէր. վասնորոյ միշտ հայցէր տալ նմա պտուղ օրհնութեան՝ եւ ժառանգ սեպհական։ Իսկ որ զկամս եր-

կիւղածաց առնէ ցէր, լուաւ աղօթից նորա, եւ ետ նոցա արու զաւակ։ Եւ յաւուր մկրտութեանն անուանեցին զնա Յուսիկ. եւ եօթն ամաց լեալ մանկանն՝ հայրն սկսաւ գրել 'ի տախտակի, եւ ուսուցանել նմա զգիրս Աստուածեղէնս. զի էր յոյժ հանդարտ, չնորհալի եւ առատամիտ. երկարոգի եւ քաղցրաձայն. յոյժ հեզ եւ խոնարհ ծնողացն. եւ քաղցր եւ սիրուն յաչս ամենեցուն։

Եւ յորժամ եղեւ մանուկն Յուսիկ երեքտասան ամաց՝ ծնողքն ետուն զնա 'ի քեռին իւր առ մեծ վարդապետն եւ խրատակրօն ճգնաւորն Անանիա՝ 'ի մեծահրաչակ աթոռն Վարագայ. զի 'ի նմանէ կատարեալ ուսցի զՀին եւ զՆոր Կտակարանս Աստուածեղէն սուրբ Գրոց. եւ կացեալ անդ առ վարդապետին ամս չորս, եւ եղեւ յոյժ հմուտ եւ տեղեակ ամենայն Աստուածաշունչ պատգամաց, եւ պատուիրանացն Աստուծոյ. եւ 'ի չափ հասակի լեալ մանուկն Յուսիկ՝ ծնողքն նորա կամեցան մուծանել զնա 'ի կարգ աչխարհի։ Եւ հայրն նորա Ստեփաննոս քահանայն՝ զնաց 'ի Վարագ՝ էառ հրաման 'ի վարդապետէն։ Եւ նա հրամայեաց մանկանն Յուսիկայ գալնալ ընդ հօրն 'ի տունն, եւ հնազանդել հրամանաց ծնողացն՝ եւ առնել զնարանիսն։ Եւ նա ոչ կամէր. զի ուխտ եդեալ

էր ընդ Աստուծոյ սրբութեամբ պահել զկուսութիւնն իւր մինչեւ 'ի մահ. բայց այժմ ոչ իշխեաց ընդդիմանալ հրամանաց վարդապետին, այլ՝ արտասուօք համբուրեաց զաջն, եւ ելեալ 'ի Վարագայ գնաց ընդ հօրն իւրում 'ի տուն, եւ արարին զհարսանիսն։

Եւ յորժամ առանձնացաւ յառաղասին միայն ընդ հարսին, յիշեաց զուխտն իւր որ ընդ Աստուծոյ. այլեւ զողջախոհն Յովսէփ՝ եւ զերանելին Աղեքսանոս՝ յօրինակ եղեալ իւր։ Եւ քաղցրութեամբ ասէ ցաղջիկն. Գիտացիր՝ քոյր իմ ըստ հոգւոյ. զի գրեալ է 'ի գիրս կանոնաց 'ի սուրբ Առաքելոցն, Եթէ ոք զիցէ ուխտ առաջի Աստուծոյ վասն կուսութեան եւ սրբութեան անձին իւրոյ՝ եւ ոչ պահիցէ մինչեւ 'ի մահ, այլ՝ ուխտազանց լիցի ամուսնութեան մեղօք, նա ուրացող լինի Քրիստոսի, եւ առելի ամենայն սրբոցն Աստուծոյ. ճշմարտութեամբ այժմ ասեմ քեզ զխորհուրդ իմ. զի ես ուխտ եղեալ եմ ընդ Աստուծոյ սրբութեամբ եւ անարատութեամբ պահել զկուսութիւնս իմ մինչեւ 'ի մահ։ Զի թէ ամուսնութեամբ ապականեցից զկուսութիւնդ քո՝ լինիմ ուխտազանց եւ ուրացող։ Ասէ աղջիկն. Եթէ ամուսնութիւնն անարգութիւն եւ ապականութիւն է, ապա զիարդ 'ի սուրբ

եկեղեցւոջ՝ Աստուծոյ հրամանաւ, եւ ձեռամբ Քահանայից, Խաչիւ եւ Աւետարանաւ դնեն պսակ 'ի գլուխ փեսային եւ հարսին՝ եւ լինին մարմին մի ըստ հրամանին Աստուծոյ։ Ասէ մանուկն Յուսիկ. Ծանիր՝ քոյր. զի պսակն զոր քահանայքն դնեն 'ի վերայ գլխոց մերոց՝ այն մարմնաւոր է եւ ապականացու. եւ ընդ մեռանել մարմնոյն՝ անցանեն ընդ նմա ամենայն փառք եւ մեծութիւնք եւ վայելչութիւնք աշխարհիս։ Իսկ այն կենաց պսակն եւ փառքն եւ ուրախութիւնք սրբոցն, անանցանելի եւ յաւիտենական են։

Եւ իսկոյն լոյս Աստուածային չնորհացքն ծագեաց 'ի սիրտ աղջկանն։ Եւ ասէ ցՅուսիկ. Արդ՝ դիցուք ուխտ առաջի Աստուծոյ ծածուկ 'ի մարդկանէ, զի 'ի միասին կացցուք աստ 'ի տան հօր քում. եւ պահեսցուք անարատ սրբութեամբ զկուսութիւնս մեր՝ որպէս զհոգեւոր եղբայր ըստ հաճոյից կամացն Աստուծոյ։

Եւ զայս լուեալ պատանւոյն՝ ասէ. Տէր Աստուած մեր պահեսցէ զմեզ յուխտին մերում զոր ուխտեցաք՝ եւ փրկեսցէ յամենայն որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ։ Եւ ապա 'ի ծունկս անկեալ արտասուօք եւ բազում պաղատանօք՝ յանձնեցին Աստուծոյ զինքեանս։ Եւ զկնի աղօթիցն առանձնացեալ զատ 'ի միմեանց ննջեցին.

եւ յորժամ հարին զդիշերային ժամն, յայնժամ յարուցեալ մանուկն Յուսիկ հոգեւոր սիրով մխիթարեաց զաղջին. եւ յորդորեաց ջերմ սիրով եւ երկիւղիւ կալ յաղօթս առ Աստուած։

Եւ ինքն ելեալ 'ի տանէն ուրախութեամբ գնաց յեկեղեցին 'ի ժամ աղօթիցն։ Եւ այնպէս ահիւն եւ երկիւղիւն Աստուծոյ՝ կացին եւ մնացին 'ի միասին անարատ սրբութեամբ՝ զամս երեքտասան անյայտ 'ի մարդկանէ, բայց միայն ծածկագիտին Աստուծոյ յայտնի էր։ Եւ ապա քահանայն Ստեփանոս՝ խորհեցաւ ձեռնադրել զՈրդին իւր քահանայ. վասնորոյ կոչեաց զԱնանիա վարդապետն, եւ հանդէս մեծ ապարեալ բազմութեամբ եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ քահանայից, ոգոց ամենեքին կամեցան, եւ ձեռնադրեցին զՅուսիկ քահանայ. եւ արարին ուրախութիւն մեծ հոգեւոր եւ մարմնաւոր զաւուրս եօթն։

Եւ յետ երկուց ամաց վեցհարիւրորդում եօթանասներորդում հինգերորդում ամի սուրբ քահանայն Ստեփանոս փոխեցաւ առ Քրիստոս։ Եւ սուրբ քահանայն տէր Յուսիկ՝ օր ըստ օրէ կրթէր զանձն իւր պահօք եւ աղօթիւք, մաքուր սրբութեամբ, եւ ամենայն առաքինութեամբ։ Եւ յետ ժամանակաց ինչ՝ եղեւ գալ զօրացն Թաթարաց յարեւելս 'ի գերել զաշխարհս Հա-

յոց։ Եւ գերեալ զբազումս 'ի գաւառէն Ցոսբայ եւ յԹշտունեաց՝ եւ դարձան 'ի տեղիս իւրեանց բազում աւարաւ։ Եւ ընդ բազմաց գերելոցն՝ գերեցաւ եւ անուանեալ կինն Ցուսիկ քահանային 'ի գիւղաքաղաքէն Արտամետոյ. եւ տարեալ 'ի Շահասատան քաղաքն Թաւրէզ վաճառեցին զնա կնոջ միուսի Բոզաւագի, որ է պռոնկախառնիչ։ Եւ կինն այն Բոզաւագ՝ էր հաւատոյն քրիստոնեայ. իբրեւ գիտաց երիցակինն թէ՝ Բոզաւագն քրիստոնեայ է։ Աղաչեաց զնա եւ ասայ թէ Ես երիցա'կին եմ պարկեշտութեամբ կացեալ եւ անմերձ 'ի խառնակութենէ անօրինաց։ Զի այն թաթարքն՝ որ զիս գերեցոյ՝ յառաջին աւուրն հիւանդացաւ, եւ Աստուած իմ պահեաց զիս անխորձ 'ի մեղաց. վասնորոյ՝ աղաչեմ զքեզ տիկին, ոչ տալ զիս 'ի գործ մեղաց. զի գիտեմ կերպաս նկարել, եւ գործել մետաքս. եւ այնու քեզ առաւել տամ շահել, եւ 'ի մեղաց աղատ մնամ. զի կին քահանայի եմ արբուութեամբ կենցեալ՝ եւ դարշիմ 'ի խառնակութենէ անօրինաց։

Զայս իբրեւ լուաւ Բոզաւագն 'ի կնոջէ երիցուն, արար ըստ կամայ նորա։ Եւ ելին Ցուսիկ՝ ել 'ի խնդիր ամուսնոյն իւրոյ. եւ գնացեալ եգիտ անդ 'ի Շահասատան քաղաքն Թաւրէզ. եւ կացեալ առաջի Բոզաւագին 'ի կերպարանս մուրացողի։ Եւ

հարցեալ ցնա Բոզաւազն ասէ. Որպիսի՞ ոք ես դու. եւ նա ասէ, Երէց եմ եւ դերեւոյ տէր։

Եւ կինն այն եցոյց նմա զամուսինն նորա. եւ խօսին երիցուն ընդ կնոջ իւրում, տեսանէր Բոզաւազն, զի չունէր քահանային բոցածաւալ իբրեւ զլոյս ելանէր, եւ դարձեալ մտանէր 'ի բերան նորա 'ի նշան անմեղութեան նոցա։ Եւ կինն Բոզաւազ՝ հարցեալ զիտաց թէ՝ Դերեւս տըղայ ոչէ եղեալ նոցա։ Ցայնժամ ազդմամբ խնամոցն Աստուծոյ ասաց Բոզաւազն ցերէցն թէ՝ Զ'ի ինչ խնդրեմ 'ի քէն. դու զոր խնդրեմն տուր ինձ՝ եւ ես զկինդ քո տաց քեզ ձրի։

Ասէ երէցն. Զինչէ խնդիր քո տիկին. եւ նա ասաց, քեզ որդի տալոց է Աստուած՝ եւ այն քահանայ լինելոց է։

Զայս հայցեմ 'ի քէն տուր մատուցանել վան հոգւոյ իմոյ զառաջին պատարագն որդւոյ քոյ՝ 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն բազում մեղաց իմոց։

Ասէ երէցն. Եղիցի ըստ բանի քում. եւ զխնդրուածս արտի քո՝ ցէր կատարեսցէ։

Ասէ Բոզաւազն. Ահա կին քո անփորձ 'ի չարեաց, եւ անմերձ յանօրինաց։

Եւ ահա այլ եւս հինգ հարիւր դահեկան ձեզ 'ի պէտս չինութեան, երթայք

ողջութեամբ եւ խաղաղութեամբ։ Եւ առեալ երէցն Յուսիկ զկին իւր՝ եւ եկեալ 'ի գիւղն իւրեանց Արտամետ՝ արարին շինութիւն իբրեւ զամս երկուս. եւ 'ի կատարել շինութեանցն ամենայնի, ասէ երէցն ցամուսինն իւր. Դու ինքնին դիտես՝ զի ամենայն շինութիւնս մեր զոր արարաք, եւ ամենայն կահք եւ կարասիք մեր՝ զոր այժմ ունիմք. այս ամենայն 'ի պարգեւաց ընչից Բողուատպին է, զոր չնորհեաց մեզ, եւ հաւատով խնդրեաց զի 'ի մէնջ եղելոյ որդւոյ առաջին պատարագն լիցի 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց նորա. եւ զի մեք ուխտեցաք առաջի Աստուծոյ, զի սրբութեամբ պահեսցուք զկուսութիւնս մեր մինչեւ ցմահ մեր. եւ ուստի ծնանիցիս դու որդի՝ որ լինիցի քահանայ. եւ զենդրուածս տիկնոջն այնորիկ կատարեսցէ։ Ասէ երիցակինն. Ցէր՝ հանապազ ասես ցիս թէ՝ առանց հրամանին Աստուծոյ տերեւ մի 'ի ծառոց ոչ անկանի, արդ՝ որ ինչ հրաման ցեառն է՝ օրհնեալ եղիցի յաւիտեան։

Ասէ քահանայն Յուսիկ. Ես երթայց 'ի սուրբ եկեղեցին՝ եւ անդ 'ի տուէ եւ 'ի գիշերի աղօթիւք պաշտամամբ եւ պատարագօք աղաչեցից զտէր Աստուած. եւ դու 'ի տան քում 'ի սենեկի աղօթեա միշտ ջերմ արտասուօք, թերեւս մարդա-

սէրն Աստուած յայտնեսցէ մեզ զհաճոյս կամաց իւրոց։ Եւ 'ի վերայ այսր ուխտի անցին աւուրք իբրեւ երեսուն, յաղթմանէն Աստուծոյ եկն նուիրակ 'ի սուրբ Երուսաղէմայ վարդապետ մի Ստեփանոս անուն, յոյժ առաքինի եւ ճգնազգեաց, զգաստ եւ պարկեշտ յամենայն ճանապարհս Աստուծոյ՝ յոյժ ծերացեալ ալեօք, սա գայ 'ի քաղաքն Արտամետ, եւ կացեալ անդ զաւուրս ինչ, յաւուրն կիւրակէի 'ի գիշերին՝ զկնի առանձնական աղօթիցն, տեսանէր տեսիլ երազոյ. զի էր տէր Յուսիկ քահանայն զարդարեալ սպիտակ եւ պայծառ քահանայական զգեստիւ, եւ խաչ գաւազան ոսկիազօծ՝ ականակուռ ընդելուզեալ մարգարտօք ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին նորա, եւ յահեակ ձեռին սուրբ Աւետարան։ Եւ 'ի գլուխ գաւազանին ետես բուսեալ կանաչ տերեւովք մեծավայելուչ վարդ մի՝ շուրջանակի ծիրանի կարմրափայլ՝ որպէս զհուր վառեալ եւ զարհուրեալ 'ի տեսլենէն զարթեաւ։

Եւ զկնի արձակման առաւօտեան ժամուն՝ վարդապետն այն, կոչեաց առանձին սա ինքն զտէր Յուսիկ քահանայն. եւ տարեալ յաւանդատունն, եւ երդմամբ էհարց զնա վասն վարուց եւ առաքինութեան նորա։ Իսկ նա՝ նախ ոչ կամեցաւ յայտնել նմա բան ինչ՝ մինչեւ ընդ բանիս

արար զնա վարդապետն. եւ ապա քահանայն Յուսիկ, սկսաւ պատմել նմա խոստովանաբար զամենայն մի ըստ միոջէ։ Եւ վարդապետն Ստեփանոս՝ հիացեալ ասէ. Օրհնեալ է Աստուած՝ որ տայ զօրութիւն եւ համբերութիւն սիրողաց իւրոց։ Եւ ապա յետ հոգեւորական մխիթարութեանն, ասէ վարդապետն ցտէր Յուսիկ. Գիտես, որդեակ՝ զի 'ի սկզբանէ Աստուած զնախնիս մեր՝ արու եւ էգ արար. զի ամուսնութեամբ աճեսցին եւ լցցեն զերկիր. որպէս եւ առաքեալն Պօղոս ասէ. Պատուական է ամուսնութիւն. վասնորոյ պատուիրանադրութեամբ տեառն ես տամ ձեզ վերստին հրաման ամուսնութեան ձերոյ։

Ապա յետ աւուրց ինչ, յղացաւ կինն տեառն Յուսիկան. եւ ետ Աստուած նոցա զաւակ արու. զաղաւնին ամրիծ զսուրբն Ստեփանոս, որ կրթեալ վարժեցաւ 'ի կրօնս Աստուածպաշտութեան։ Իբրեւ ՀՐԹափեալ եհաս 'ի գիտութիւն բարւոյ եւ չարի. սկսաւ զհետ լինիլ բարեաց, եւ խորշել 'ի չարեաց պարկեշտ վարուք եւ ուղիղ գնացիւք. կրթէր զանձն իւր 'ի պահս եւ յաղօթս սրբութեամբ. հեռանալով 'ի լկտի եւ յանմիտ բարուց կանանց 'ի տիս տղայութեան, եւ 'ի տիս մանկութեան զկատարելոցն ունէր յինքեան ըզ գիտութիւն. իմաստուն եւ հանճարեղ. ժուժ-

կալ եւ հարբերող ուռուճնասէր եւ ողորմած. հոս եւ հպատակ հրամանաց ծնողացն. հեղ եւ հանդարտ առ ամենեսին։ Եւ եղեւ յաւուր մերում գնալ նմա յաղօրիս՝ տանել ցորեան 'ի տանէ իւրեանց 'ի գիւղն Անդղ, առ աղալ յաղօրիսն։ Եւ զի էր յաւուրսն յայնոսիկ նուաղութիւն հացի. եւ աղքատքն յոյժ տառապէին. եւ ետես, զի բաղում աղքատք ժողովեալ 'ի դուռն աղօրւոյն, ինքն բարեանուանդ պատանին Ստեփանոս՝ բաժանեաց զամենայն ցորեանն աղքատաց կուց կուղ, եւ մնաց խորքն դատարկ։ Ապա անտես 'ի մարդկանէ ելից զայն մանր աւազով, եւ մոխրով. եւ ասաց ոմանց օգնել ինքեան՝ եւ բառնալ գրաստուն իւրում. եւ բարձեալ զէչն՝ եբեր յԱրտամետ, վարեաց զնա 'ի գաւիթ տան իւրեանց. եւ ինքն փախուցեալ գաղտաբար անկաւ 'ի ճանապարհ, եւ գնաց 'ի Բերկրի։ Իսկ երէցն Յուսիկ՝ առեալ զքեռն 'ի դիկանց իշոյն, տարաւ 'ի տուն. եւ մայրն բաղեալ զքեռն՝ եհան ալիւր, եւ տարար խմոր, եւ հասուցեալ զհացն ասաց երիցուն. Ել 'ի դուրս, եւ տես զմանուկն՝ եւ ասա, Զի մտեալ կերիցէ հաց, քանզի քաղցեալ է. զի կարծէին թէ՝ ընդ տղայս գեղջ խաղայր, եւ կամ թէ աշխատեալ 'ի ճանապարհին՝ եւ ննջեալ է ուրեք ընդ որմով, եւ կամ 'ի տանիս։

Եւ ելեալ Յուսիկն չրջեցաւ ընդ գիւղն ողջոյն՝ եւ ոչ եգիտ։ Եւ մայրն յոյժ տագնապէր մտօքն թէ՝ Զինչ եղեւ մանուկըն։ Եւ յերեկոյին հասեալ՝ առաւել հոգայն ծնողքն, զի մինչ մնային՝ թէ ուր եւ իցէ, երեկոյին եկեալ հասանէ 'ի տուն, նա ոչ եկն. եւ զգիշերն ամենայն անքուն կացեալ ծնողքն՝ հոգային զնմանէ։ Եւ մանաւանդ թէ՝ առաւել եւս մայրն ըստ մայրական գթոյն աղէկիզեալ լայր գառնապէս. որպէս եւ է իսկ սովորութիւն, մարդ հոգալ զորդեակս իւրեանց, ասելով թէ՝ թերեւս քաղցեալ իցեն, կամ թէ ծարաւի իցեն, կամ թէ զինչ արդեօք պատահեաց նոցա, եւ թէ ուր եւ զիարդ կեան։ Եւ այնպէս զգիշերն ամենայն աղէկիզեալ՝ լային գառնապէս հայրն եւ մայրն։

Եւ 'ի վաղիւն գնացին ասա եւ անդ, 'ի գիւղս եւ 'ի քաղաքս. գնաց հայրն յՈատան՝ եւ մայրն 'ի Վան, հարցին եւ ոչ գտին, դարձան 'ի տուն իւրեանց՝ եւ լային անմխիթար տրտմութեամբ զցայդ եւ զցերեկ։

Եւ ապա յետ տասն աւուր հանդիպեալ ոմն 'ի ծանօթից նոցա, ետես զնոսա 'ի լաց տխուր դիմօք։ Եւ հարցեալ՝ գիտաց զպատճառն. եւ ասաց թէ՝ ԶՍտեփանոսն ես տեսի այս ինչ օր 'ի գեղջն Կոչանի. եւ ասացի թէ՝ Վան էր եկեալ

ինչ անդր. եւ նա ասաց թէ՝ հայրն իմ յու-
զարկեաց զիս երթալ 'ի Բերկրի 'ի պէտս
ինչ իրիք։ Եւ նոքա ուրախ լեալ օրհնեցին
զայրն եւ զճանապարհն նորա։ Եւ յարուց-
եալ հայրն տէր Յուսիկ գնաց 'ի Բերկրի.
եւ ել 'ի վանս Արգելան, եւ եառեալ զմա-
նուկն, եւ խնդութեամբ լցեալ ասաց.
Որդեակ՝ զինչ գործեցեր ընդ մեզ. մայր
քո՝ եւ ես՝ տառապեալ լալաքին աչօք՝
որոնեայ խնդրեցաք զքեզ 'ի Վան եւ
Յոստան՝ եւ 'ի գիւղն ամենայն։ Եւ ապա
ասաց թէ՝ Մայր քոյ հաց հասոյց՝ եւ ես
ելեալ չրջեցայ ընդ գիւղն ամենայն, եւ
ոչ գտի զքեզ։ Եւ ասաց Ստեփանոս թէ՝
Ուստի արար մայրն իմ զհացն։ Ասէ երէ-
ցն. Ցալերէն՝ զոր դու բերեր յաղօրւոյն։
Ասէ Ստեփանոս թէ՝ Այն ալիւր ՝ի՞նչ էր։
Եւ հայրն ասէր. Որդեակ՝ ցորեան տարար
յաղօրիս՝ եւ ալիւր բերեր. մինթէ չէր այն
ալիւր։

Եւ ապա հաւատարմացաւ բանն 'ի սիրտ
Ստեփանոսի. եւ ասէ ցհայրն. Տէր՝
յորժամ հասի ես յաղօրիսն, տեսի անդ
աղքատս բազումս՝ որք հայցէին յինէն ո-
զորմութիւն. եւ ես եառուս նոցա կուց կուց
զցորեանն ամենայն, եւ մնաց խորշն դա-
տարկ։ Ապա հնարս իմացայ, եւ լցի ըզ
նոսա մանր աւազով եւ մոխրով. եւ բարձ-
եալ իշոյն՝ բերեալ 'ի գիւղն՝ արարի ըզ

գրատան բեռամբն 'ի բակն մեր, եւ ես փախեայ. զի երկեայ 'ի քէն եւ 'ի մօրէն իմմէ, թէ գան հարկանէք, եւ կամ տրրտրնջէք զիս. վասն այնորիկ փախեայ եւ եկի այսր։ Յայնժամ երէցն Յուսիկ անկաւ յերկիր՝ եւ արտասուօք զոհանայր զԱստուծոյ։ Եւ ապա ուրախութեամբ լցեալ ասէ. Օրհնեալ է Աստուած, որ դեակ՝ որ 'ի ձեռն քոյ արար զայդ սքանչելիս։ Եւ արդ՝ արի որդեակ՝ զի երթիցուք 'ի տուն մեր առ մայր քոյ. զի եւ նա յոյժ տագնապի վասն քոյ. եւ 'ի տեսանելն ըզ քեզ՝ ուրախ լիցի 'ի վերայ քո։

Առէ Ստեփանոս. Մի արասցէ Աստուած, եթէ այլ ես 'ի վանաց ասսի եւ անեմ. ասա կեցից՝ ցորչափ եմն կենդանի. եւ ասա մեռայց եւ թաղեցայց։ Եւ 'ի չատ ողոքելն եւ 'ի ստիպել հօրն զորդին թէ՝ Եկ, զի երթիցուք 'ի տուն մեր. գան ժողովին միաբանքն ուխտին՝ եւ ասեն ցնա. Որդի, երթ գնա ընդ հօրն քում, եւ տես ըզ մայր քոյ. եւ յետ աւուրց ինչ դարձեալ դու եկ այսր 'ի վանս առ մեզ։

Եւ նա ոչ լուաւ նոցա, եւ ոչ հաւանեցաւ գնալ ընդ հօր իւրում։ Եւ իբրեւ ոչ կարացին հաւանեցուցանել զնա, ապա ասեն միաբանքն ուխտին ցհար մանկանն։ Տէր Յուսիկ. արդ՝ արի դու՝ եւ երթ գնա 'ի տուն քոյ՝ եւ առեալ զմայր մանկանդ

բերցես այսր, զի եւ նա տեսցէ զորդի
իւր։

Եւ այնպէս մնաց Ստեփանոս յայն
վանս, Արգելանի. եւ վարժեալ Աստուա-
ծեղէն գրոց դիտութեամբ՝ եղեւ աբեղայ։
Եւ հայրն ասաց նմա զզերութիւն մօրն եւ
զազատութիւն, եւ զինդիր բոզաւադին։ Եւ
նա 'ի պատարագին սկսաւ յիշել զկինն
որոյ անուն էր Բիբի. յայնժամ տեսիլ ա-
հեղ եւ զարմանալի երեւեցաւ նմա. քան-
զի ափշութիւն կալաւ զնա. եւ տեսանէր
զանձն յեղեր արեան ծովու միոջ, եւ կի-
նոջն այն Բիբի 'ի մէջ արեան ծովուն։ Եւ
նորընծայ քահանայն որչափ զաղօթս
սրբոյ Պատարագին ասէր՝ կինն այն 'ի
դուրս գայր յարեան ծովէն. եւ ելեալ ար-
տաքս՝ եղաւ 'ի ցամաքի անարատ եւ
սուրբ յարեան ծովէն. եւ երկուց պատա-
րագաց չափ յամեցաւ, եւ ապա կատար-
եաց զՊատարագն։ Եւ 'ի հարցանել ծե-
րոցն զպատճառս յամելոյն, ապա ա-
սաց նա զտեսիլն՝ զոր ետես. եւ որք
լուանն ուրախ լեալ փառս ետուն Աստու-
ծոյ։ Եւ 'ի վաղիւն աղաչեցին զնա ստէպ՝
եւ հայցէին 'ի նմանէ Պատարագ մատու-
ցանել. եւ նա ոչ առ յանձն. այլ այնու
միով Պատարագաւն եկաց զամենայն ժա-
մանակս կենաց իւրոց՝ ասելով թէ՝ Արեան
ծովուն ոչ եմ կարող ընդդէմ կալ. եւ

կացեալ 'ի նոյն վանս Արդելանի. եւ անդ վարժեալ եղեւ վարդապետ ճշմարտութեան։ Եւ յերկարեալ 'ի բազում աւուրս բարի եւ առաքինասէր վարուք 'ի հաճոյս կամացն Աստուծոյ. դէպ եղեւ 'ի վրդովմանց ժամանակաց եւ յասպատակէ հինից պատերազմաց այլազգեացն, եւ անել սրբոյ վարդապետին Ստեփանոսի՝ յերկրէն Տարբերունոյ՝ 'ի սուրբ մենաստանէն Արդելանայ։ Եւ գնացեալ 'ի սուրբ լեառն՝ որ կոչի Խաչ գլուխ, ուր սուրբ առաքեալն հայոց Թադէոս, եւ յետ նորա սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ Խաչ էին դրոշմեալ մատամբ 'ի գլուխ լերինն. եւ օծեալ էր զլեառնն 'ի վերայ կարծր վիմին յանապատի սրբոյն Սահակայ Պարթեւի հայոց հայրապետին. ուր բազում ճգնաւորք եւ խստակրօն միանձունք բնակէին։ Որոց էր առաջնորդ՝ սուրբ վարդապետն Գրիգոր վկայասէրն՝ հրեղէն լեզուն. որ էր այր կորովամիտ եւ բանիբուն, վարժեալ 'ի գիրս Հին եւ Նոր Կտակարանաց։ Եւ գնացեալ անդ յանապատն սրբոյն Սահակայ՝ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ եւ անդ անհնարին եւ խիստ ճգնութեամբ կատարէր զԱստուածահաճոյ վարս իւր։ Եւ քանզի ոչ թաքչի քաղաք՝ որ 'ի վերայ լերին կայցէ. եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ՝ 'ի վերայ աշ-

տանակի, զի ամենեքեան՝ որ 'ի տան աշխարհիս իցեն, զայս տեսցեն, եւ անէր համբաւ ճգնութեան վարուց նորա ընդ ամենայն շրջակայ գաւառն եւ յամենայն հեռաւոր տեղիս. եւ զայնն առ նա բազում դիւահարք եւ ախտաժէտք եւ պէս պէս ցաւագարք. եւ աղօթիւք սրբոյ վարդապետին՝ ամենեքեան ըստ հաւատոց իւրեանց անուամբն Քրիստոսի Աստուծոյ գտանէին զբժշկութիւն եւ զառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ. եւ ուրախութեամբ դառնային 'ի տեղիս իւրեանց՝ փառաւորելով զՔրիստոս։ Եւ այնքան տարածեցաւ համբաւ սքանչելեաց նորա ընդ ամենայն երկիր, մինչ զի այլազգիքն եւ Մահմետականք եւս լուեալ զարմանային։ Եւ ոմանք 'ի նոցանէ հայհոյէին զնա. սուտ եւ խաբեբայ կարծէին զնա՝ ասելով թէ, Այսպիսի նշանք եւ սքանչելիք Աստուծոյ միայնոյ գործ է, եւ ոչ հողեղէն մարդոյ։ Եւ մի ոմն յանհաւատ անօրինացն, չարագործ եւ ժանտաբարոյ, որոյ անունն էր Եուսուֆ. 'ի քերդէն Ամկոյ. արուեստիւ մսավաճառ, ըստ չար բարուց իւրոց. կամեցաւ նենգութեամբ փորձել զսուրբ վարդապետն. եւ զամենայն ըսքանչելիս՝ եւ զբարի համբաւ նորա սուտ առնել եւ արհամարհել։ Եւ երեալ զնաց 'ի վանս Երերնայ՝ յանապատն սրբոյն Սա-

հակայ. ասելով զանձնէ թէ Քրիստոնեայ
իցէ, զի լաւ գիտէր զլեզու հայոց. եւ ա-
սէր 'ի միտս իւր թէ՝ հոգեւոր բժշկու-
թիւն եւ օգուտ ոչ կարեմ իմանալ եւ տես-
սանել. այլ՝ կամիմ մարմնաւոր կերպիւ
փորձել զ.քանչելեաց համբաւ քրիստոնէ-
ից։ Եւ խորհեցաւ հնարս այսպիսի. ըզ
կոճդն՝ յորոյ վերայ կոտորէր զմին 'ի
մսավաճառանոցին, հայր իւր անուանեաց
եւ ասէր, Եթէ 'ի չոր փայտս այս երեւեսս-
ցի նշան ինչ, ապա հաւատամ թէ՝ ճըշ-
մարիտ են հաւատք քրիստոնէից՝ եւ համ-
բաւ ս.քանչելեացն Քրիստոսի եւ սիրելեաց
նորա։ Եւ մտեալ առ սուրբ վարդապե-
տըն Ստեփանոս իբրեւ քրիստոնեայ, երկրը-
պագութիւն մատուցանէր, եւ հայցէր բա-
ժին յաղօթից նորա. տայր մարմնական
ինչ պարգեւս եկեղեցւոյն եւ վարդապե-
տին. եւ քծնելով ազաչէր, եւ կեղծա-
ւորութեամբ ասէր, Աղաչեմ զքեզ՝ յի-
շել զհայրն իմ յարժանաւոր աղօթս քո 'ի
ժամ սուրբ Պատարագին։ Եւ սուրբ վար-
դապետն ասէ ցնա. Զինչ է անուն հօր
քոյ։ Եւ նա ասէ Կոճիկ է անուն հօր ի-
մոյ, տէր հոգեւոր։ Եւ 'ի գիշերին յայն-
միկ, զի էր կիրակէ՝ եւ տօն տէրունի
յարութեան, սուրբ վարդապետն Ստեփա-
նոս՝ յառանձնական աղօթս իւր՝ զոր մա-
տուցանէր, արտասուառատաչ պաղատա-

նօք հայցէր յԱստուծոյ ողորմութիւն՝ եւ
բժշկութիւն եւ պայծառութիւն կոճկին։
Եւ 'ի վաղիւն եկեալ մասվաճառն 'ի վա-
նացն՝ համբուրեաց զվարդապետն եւ գնաց
'ի տուն իւր։ Եւ իբրեւ եհաս մերձ 'ի
խանութն՝ առ զհոտ անուշութեան. եւ
բացեալ զդուռն խանթին, ետես զկոճդն,
զի կանաչացեալ էր ազգի ազգի տերե-
ւովք. եւ չառաւիղս արձակեալ՝ զոր ոչ
է տեսեալ ակն մարդոյ։ Եւ ապա հոգւոյ
հանեալ՝ եւ արտասուահոս ողբովք երա-
նի տայր քրիստոնէիցն եւ հաւատոց նոցա։
Եւ ընթացեալ 'ի տունն առ ընտանին եւ
առ ամենայն բնակիչս պատմեաց նոցա զը-
մեծ եւ զարմանալի նշանն. եւ ամենե-
քեան եկեալ տեսին զսքանչելին, եւ
հիացեալ փառս ետուն Աստուծոյ, եւ երկ-
մտեցան 'ի հաւատոցն իւրեանց։ Եւ ա-
պա մասվաճառն Եուսուֆ առեալ զկոճդն
կանաչացեալ չքեղութեամբ՝ եդ 'ի վերայ
դլխոյ իւրոյ. եւ ամենայն ընտանեօքն եւ
ազգականօքն գնաց առ սուրբ վարդա-
պետն Ստեփանոս 'ի վանս Երերնայ. ան-
կաւ յոտս նորա, եւ հայցէր զներողութիւն
եւ զթողութիւն յանցանաց. եւ ասէր թէ՝
Հայր սուրբ՝ ես խաբէութեամբ փորձեցի
զքեզ. եւ ապա խնդրեաց զմկրտութիւն։
Եւ սուրբ վարդապետն մկրտեաց զնա
ամենայն ընտանեօքն եւ ազգականօքն՝

յաղբիւր անապատին սրբոյն Սահակայ. եւ տեսին ամենեքեան լոյս սաստիկ ի-ջեալ յերկնից 'ի ժամ սրբոյ մկրտութեան վկայ սքանչելեացն Աստուծոյ. եւ եղեւ ուրախութիւն եւ ցնծութիւն մեծ ամենայն քրիստոնէից։ Եւ ապա սուրբ վարդապետն Ստեփանոս եմուտ 'ի տաճար սրբոյն Սահակայ, եւ արտասուալից պաղատանօք խնդրեաց յԱստուծոյ, զի 'ի ձեռն կանաչացեալ կոճեղն այնորիկ, բաղում ցաւոց բժշկութիւն եղիցի։ Եւ այլ եւս երկոտասան ազգի ախտից առողջութիւն լիցի. եւ մանաւանդ կատաղեալ շանց եւ այլ ամենայն գազանաց՝ որք խածատեն զմարդիկ։ Ամենայն հեռաւորաց եւ մերձաւորաց որ գայցեն հաւատովք խնդրել զբժշկութիւն, եղիցին նա դարման ցաւոց ականջաց, ատամանց, բերանոյ, որովայնի, որդեծնութեան կանանց, ջերման, այսահարութեան, ախտի բորոտութեան, եւ ամենայն հիւանդութեանց։

Եւ զկնի աղօթիցն՝ ապա ետես սուրբ վարդապետն, զի ձեղունք տաճարին բացան եւ լոյս սաստիկ փայլատակեալ յերկնից եմուտ 'ի տաճարն. եւ ընդ լուսոյն բազմութիւն զօրաց հրեշտակաց՝ եւ 'ի մէջի նոցին տեղ եւ զուարթատեսիլ երիտասարդ մի՝ նստեալ 'ի վերայ չորեքկերպեան աթոռոյ, զոր երեքսրբեան քաղց-

բաձայն բարբառով բերեալ՝ եդին 'ի վերայ սրբոյ սեղանոյն։ Եւ նա ինքն Քրիստոս ձայնեալ առ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ քաղցր բարբառով ասաց. Կատարեցին խնդրուածք քո՝ զոր հայցեցեր եւ զոր հայցես. ովսիրելի իմ. եւ ապա ամփոփեցաւ տեսիլն։ Եւ յայնմ օրէ մինչեւ ցայսօր եւ առ յապայ՝ հաւատացեալք եւ անհաւատք, որք 'ի հեռաւորաց եւ 'ի մերձաւորաց դիմեալ՝ զան հաւատով եւ յուսով յուխտ 'ի վանս սրբոյն Սահակայ, առնուն զկատարեալ առողջութիւն հոգւոց եւ մարմնոց. եւ զփարատումն ամենայն ցաւոց՝ շնորհօքն Քրիստոսի եւ աղօթիւք տեառն Յուսկան որդւոյ Ստեփանոսի վարդապետին։ Եւ յաւուրս աղուհացից՝ ըզկնի տօնի սրբոյ Լուսաւորչին՝ 'ի կիրակէի առաւօտուն, զկնի գիշերային ժամուն՝ սուրբ վարդապետն Ստեփանոս գնաց առանձինն յարեւելեան կողմն տաճարին, եւ ըստ իւրում սովորութեան՝ 'ի ծունկս անկեալ արտասուաբուղխ աչօք աղօթս մատուցանէր առ Աստուած տարածմամբ ձեռաց մինչեւ ցերրորդ ժամ աւուրն։ Եւ ետես զՔրիստոս մեծաւ փառօք իջեալ 'ի վերայ բարձր դղեկին Ամկոյ՝ բերդի եկեղեցւոյն զոր յառաջագոյն շինեալ էր սուրբ առաքեալն Թադէոս. եւ եկաց մնաց անդ իբրեւ ժամ մի՝ 'ի տեսութիւն

մխիթարութեան սուրբ վարդապետին, եւ ապա վերացաւ յերկինս։ Եւ յետ անցանելոյ ամաց երկոտասանից. 'ի հնգետասաներորդումն Մայիս ամսոյ յաւուր Համբարձման Փրկչին մերոյ յետ սրբոյ Պատարագին, ելեալ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ գնաց 'ի լեառն Խաչ գլուխ, ուր սուրբ Առաքեալն Թադէոս, եւ յետ նորա սուրբն Գրիգոր խաչ դրոշմեալ օծեցին, զոր յառաջագոյն յիշեցաք։

Եւ ապդմամբ սուրբ Հոգւոյն՝ յառաջագոյն գիտաց զվախճան իւր, եւ անդ 'ի լերինն առաջի սուրբ խաչացն՝ զծունկսն 'ի վերայ ապառաժ վիմի միոյ եդ՝ յորում հետք նշանացն եւ տեղիքն յայտնապէս երեւին 'ի տեսիլ ապանչելեաց առնն Աստուծոյ՝ սուրբ վարդապետին Ստեփանոսի։ Եւ անդ բաղկատարած մաղթանօք եւ յորդահոս արտասուօք հայցէր յԱստուծոյ, զի առաքեսցէ նմա զհրեշտակ բարի եւ խաղաղութեան՝ զի քաղցրութեամբ աւանդեսցէ զհոգի իւր, եւ անխռով խաղաղութեամբ անցցէ ընդ դասս օդային այսոցն չարութեան, որք են 'ի ներքոյ երկնից։ Նաեւ մանաւանդ խընդրէր զպէս պէս հայցուածս վասն ամենեցուն. աշխարհի խաղաղութիւն, քրիստոնէից անդորրութիւն, եկեղեցեաց հաստատութիւն, հայրապետաց ուղղափառու-

թիւն, վարդապետաց անձանձիր քարոզութիւն, քահանայից սրբութիւն, կրօնաւորաց արիութիւն այգեստանեայց պըտղաբերութիւն, պարտիզաց առաւելութիւն, խաչանց եւ անասնոց անսխալ ծննդականութիւն, տանց շինութիւն, արանց իմաստութիւն, կանանց պարկեշտութիւն, երիտասարդաց ղգաստութիւն, կուսից համեստութիւն, տղայոց պահպանութիւն, բարեաց լիութիւն, աղբերաց յոլովութիւն, ծովու խաղաղութիւն, ամպոց քաղցրութիւն, անձրեւաց յորդութիւն, գետոց հանդարտութիւն, թագաւորաց հաշտութիւն, բռնաւորաց խաղաղութիւն, սողնոց եւ ամենայն վնասակար գեռնոց եւ թիւնաբեր ճճեաց վերացումն, հիւանդաց առողջութիւն, տկարացելոց զօրութիւն, գլորելոց կանգնումն. նեղելոց անդորրութիւն, եւ ամենայն վիրաւորելոց փարատումն եւ առողջութիւն, մեղաւորաց դարձ եւ ապաշխարութիւն, ննջեցելոց հանգիստ եւ ողորմութիւն, եւ երկնից արքայութիւն։ Եւ ապա յետ աղօթիցն ետես 'ի վերայ ծովուն 'ի կողմանէ արեւմտից հիւսիսոյ ամպ լուսաւոր, եւ 'ի վերայ ամպոյն զտիրամայր սուրբ Կոյսն, որ ունէր 'ի գիրկս իւր զՈրդին Միածին պայծառ դիմօք. եւ երկու հրեշտակք որ դնէին պսակ լուսատու եւ

աստղանման 'ի վերայդլխոյ տիրամօր Կուսին։ Եւ ձայն եղեւ 'ի լուսաւոր սուրբ մանկանէն առ սուրբ վարդապետն՝ որ ասէր. Կատարեցին ամենայն խնդրուածք քո, զորս յառաջագոյն խնդրեցեր եւ զոր այժմդ խնդրես, եւ որք հաւատով աղաչեն զիս՝ ապաւինելով 'ի բարեխօսութիւն քո՝ ես կատարեցից զամենայն խնդրուածս նոցա. եւ դու եկ եւ վայելեա զանըսպառ ուրախութիւնն, զոր պատրաստեցեր դու քեզ՝ քոյին անհնարին ճգնութեամբդ։ Եւ յետ աւետաւոր քաղցր բարբառոյն տեսիլն վերացաւ, եւ ինքն մեծաւ գոհութեամբ փառաւորելով զՔրիստոս էջ 'ի լեռնէն՝ եւ եմուտ 'ի տաճարն սուրբ. եւ անդ գոհացողական եւ սրտահառաջ պաղատանս առաքէր 'ի վեր առամենասուրբ Երրորդութիւնն, միջնորդ եւ բարեխօս ունելով զերանելի կոյսն Մարիամ։ Եւ յետ համբարձմանն, 'ի նմին կիրակէի հրամայեաց միւսմ աշակերտացն իւրոց՝ որ էր աբեղայ յոյժ խստակրօն եւ ճգնազգեաց, զի հակմամբ մատուցանիցէ զսուրբ Պատարագն։ Եւ ինքն հաղորդեցաւ 'ի կենդանարար սուրբ մարմնոյ եւ յարենէ որդւոյն Աստուծոյ։ Եւ անկաւ 'ի մահիճս յաւուր երկուշաբաթւոջ. եւ պայծառացան երեսք նորա որպէս անուանակցին իւրոյ Ստեփանոսի նախավկա-

յին. եւ բազում խրատս ոգէշահս՝ եւ բանս մխիթարականս խօսէր առ ամենայն եղբարսն, որք 'ի կարգաւորաց եւ յաշխարհականաց եւ յամենայն գաւառաց գային եւ ընդունէին 'ի նմանէ զօրհնութիւն՝ եւ զառողջութիւն պէս պէս ցաւոց իւրեանց՝ եւ ուրախութեամբ դառնային։ Եւ հասեալ յաւուր շաբաթու՝ 'ի կիրակամտի երեկոյին՝ 'ի մեծի փառաւոր տօնի Գալստեան Հոգւոյն սրբոյ՝ հրամայեաց եղբարդն բառնալ զինքն՝ եւ մուծանել յեկեղեցին 'ի տաճար սրբոյն Սահակայ։ Եւ պատուիրեաց պաշտօնէիցն ամենեցուն՝ զի յերեկոյէ մինչեւ ցառաւօտն՝ զգիշերապաշտօն կարգ ժամուցն հսկմամբ կատարեսցեն։ Եւ յորժամ հասին յիւղաբերից Աւետարանն՝ մտին 'ի տաճարն քահանայքն, եւ սարկաւագունքն, զի զգեցցին հանդերձս՝ եւ ընթեռնուցուն զիւղաբերից զսուրբ Աւետարանն։ Եւ տեսին զսուրբ վարդապետն Ստեփանոս՝ 'ի ծունկս անկեալ՝ եւ զբազուկս յերկինս տարածեալ, եւ այնպէս աւանդեալ զհոգին իւր առ Աստուած։ Եւ նոքա ոչ ումեք յայտնեցին զայն, մինչեւ ցարձակել ժամուն. եւ հոտ անուշ բուրեաց 'ի քիմս ամենեցուն. եւ յետ արձակման Պատարագին, ապա ազդ արարեալ ամենայն եղբարցն. որք ձայն բարձեալ յոյժ ողբալի ազով եւ մորմոք-

մամբ արարին կոծ մեծ 'ի վերայ նորա։ Եւ ապա պատեցին զնա մաքուր կտաւօք ըստ օրինի. բայց զմարդեղէնն՝ զոր ոչ էր փոխեալ երբէք, ոչ հանին յանձնէ ըստ հրամանի սրբոյն. եւ զայն օր թողին 'ի տաճարի անդ 'ի պատիւ մեծի կիրակէին։ Եւ յաւուրն երկուշաբաթուոջ զկնի սրբոյ Պատարագին՝ զարդարեցին փոքրիկ սայլ մի. եւ ի ջուցեալ զսուրբ մաքուր մարմինն եդին 'ի վերայ սայլին, զի տարցին 'ի վանան Արգելան՝ եւ անդ ամփոփեսցեն, որպէս եւ հրամայեալ էր նոցա յառաջագոյն։ Եւ իսկոյն տեսին, զի բազումք ասի եւ անտի՝ արք եւ կանայք խածատեալք 'ի կատաղեալ շանց եւ վիրաւորեալք, որք եւ ինքեանք եւս ատամամբ իւրեանց խածատէին զինքեանս եւ վիրաւորէին. որք եկեալ անկան առաջի սայլին, ուր էր եդեալ սուրբ մարմինն։ Եւ տեսին յանկարծակի, զի թափեցան 'ի բերանոց նոցա որպէս զձագս մկանց՝ եւ առ ժամայն սատակեցան. եւ անդէն արարեալ փոսս՝ եւ արկին 'ի ներքս եւ ծածկեցին հողով. եւ ամենայն խածատեալքն եւ վիրաւորեալքն բժշկեցան 'ի ցաւոցն, եւ առողջացան 'ի հիւանդութեանց իւրեանց։ Եւ ապա լծեալ զլուծս եզանց՝ վառեալ լապտերօք եւ անուշահոտ խընկօք տարեալ 'ի վանան Արգելան, եւ անդ

ժողովեալ բազում եպիսկոպոսք եւ վարդապետք եւ անթիւ քահանայք եւ ժողովուրդք՝ եւ մեծաւ պատուով եդին 'ի դիր հանգստեան։ Եւ չինեցին 'ի վերայ սուրբ մարմնոյն մատուռ վայելուչ. որ մինչեւ ցայսօր եւ առ յապայ առնէ բազում ցաւոց եւ ազգի ազգի ախտաժէտաց բժշկութիւնս. եւ մանաւանդ խածատելոց 'ի կատաղեալ շանց եւ 'ի գայլոց եւ յամենայն չար գազանաց. որք 'ի հեռաւորաց եւ 'ի մերձաւորաց՝ հաւատացեալք եւ այլազգիք՝ հաւատով եւ յուսով դիմեալ գան յուխտ 'ի սուրբ գերեզմանն եւ յաղօթատեղի սրբոյն՝ առնուն զկատարեալ բժշկութիւն, աղօթիւք եւ բարեխօսութեամբ Ստեփանոսի սուրբ վարդապետին՝ որդւոյ տեառն Յուսկան։ Եւ արդ՝ զմի զօրութիւն եւ սքանչելագործութիւն շընորհեն ամենայնի՝ այս երկու սուրբ մեծատունքս. այսինքն, անապատն սրբոյն Սահակայ, եւ վանքն Արգելանից՝ 'ի փառս ամենազօր տէրութեան։ Եւ զի սուրբ վարդապետս այս Ստեփանոս՝ 'ի մանկութենէ իւրմէ էր յոյժ պահեցող, այնչափ՝ մինչ զի յաւուրս քառասնորդաց աղուհացից պահոց, յերկոտասան աւուր միանգամ ճաշակէր հաց. եւ զայն եւս ոչ ցյաղ, այլ՝ ոգեպահ մի։ Այլ եւ յաւուրս չորեքշաբաթու եւ ուրբաթու՝ եւ զամենայն տէրունի

չաբաթն անսուաղ անցուցանէր, եւ էր յոյժ ժուժկալ, աղօթասէր եւ արտասուող, լռակաց եւ խորհրդական, անձանձիր ուսուցանող, եւ յանդիմանիչ ստահակաց, քաղցրախօս, գթած, եւ առատաձեռն. երկայնամիտ եւ ողորմած. լի ամենայն շընորհօքն Աստուծոյ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

ՔԱՆՔ

ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ

ԱՍԱՅԵԱԼ ՅԱՌԱՋՆՈՅ

Եղուկ, պարտէ մեզ հայել յարեգակն որ լոյս ծագէ։ Է որնման է արեւու, եւ 'ի վերայ ոտից իւրոց ընթանայ։ Այր գիտուն է՝ որ նման է արեւու. բանք նորա ծագեն իբրեւ զարեգակն. այր տգէտ նըման է օձի, եւ հանապազ խոցէ զմարդ։ Է մարդ որ արժէ հազար, եւ են հազարք՝ որ արժեն զմի. նա՝ որ արժէ հազար առ առն տգիտի՝ եւ դանդ մի անգամ չարժէ։

Բազէ 'ի մորուոջ անտառի՝ մերթ բու է եւ մերթ բազէ. ակն պատուական 'ի մէջ ծովու՝ մերթ քար է եւ մերթ ակն պատուական։

Իմաստունն յաչս անմտի՝ զմտաւ ածթէ իմ իմիք նման է. ճրագ առաջի կուրի վառի, եւ նա ոչ գիտէ։

Իմաստունն նման է ծովու՝ զոր որչափ չափէ ոք՝ այնչափ առնու. իսկ անգէտն նման է տկի՝ ուր եթէ սակաւիկ մի աւեւի ընուցուս՝ պատառի։

Աշխարհս նման է ճախարակի որ վեր 'ի վայր թաւալի. վեր նորա 'ի վայր դառնայ, եւ վայր նորա 'ի վեր շրջի։

Աշխարհս նման է կանաչ մարդագետնի. մեք եմք 'ի նմա իբրեւ զձաղս կաքաւուց. մահն նման լեալ բազէի՝ մի մի առնու եւ կրէ 'ի վեր։

Որդեակք, յորժամ 'ի ճաշնատիք, արարէք զաղքատս ձեզ ընկերս. զի իբրեւ մեռանիցիք եւ երթիցէք անդր, նատջիք քան զայլս 'ի վեր։ Մարդ որ երթայ յօտար տեղի, պիտոյ է նմա իմաստութիւն բազում. զի ամենայն մարդոյ խոնարհեսցի, եւ յայնժամ գործք նորա կատարին։ Ի բազումթագաւորաց եւ յարանց իմաստնոց լուայ, եթէ՝ մարդ ոչ յագի մինչեւ մեռանի եւ երթայ յաստի կենաց։ Տարեալ դնեն զնա 'ի գերեզմանի, եւ աչք նորա ընուն հողով, յայնժամ զղջայ եւ ասէ. բաւական է, այլ ոչ եւս պիտոյ է։ Ոչ ոք 'ի մարդկանէ արար ընդ անձն իւր զոր եան արարի անձամբ անձին. ունէի ամանս մի լի ոսկւով եւ հեղեալ վատնեցի 'ի զուր։ Ստացայ երիվարս հաղար արագունս, արձակեցի զնոսա եւ զայլ ոչ կարացի ունել. արդ զինչ օգուտ եղեւ ինձ յառաջնոյ իմաստութենէ իմմէ, մինչդեռ զառաջին անուն իմ եղծի։

Ոմն ունէր ակն պատուական եւ առ

անմտութեանն ոչ կարաց պահել. յետոյ միտք նորա եկին 'ի նա, այլ ակնն պատուական չէր 'ի ձեռս նորա։ Զոքաւ նրատաւ ուրեք, եւ դառնապէս եւլաց. այլ զինչ չահ 'ի լալոյ անտի, զի ակնն պատուական չէր 'ի միջի։

Եղուկ, եւ հազար անգամ եղուկ, որ խմաստունս էի, անմտացայ. քան զկաթն յստակ էի, եւ քան զջուր գարնանայնոյ պղտորեցայ։ Էի իբրեւ զմարգարիտ յեռեալ, եւ հոսեցայ 'ի վայր. էի իբրեւ զհանդերձ ծալեալ, եւ մի ըստ միոջէ քակեցայ։

Այր լաւ նա է որ իբրեւ բանայ ըզբերան իւր 'ի խօսել, քաղցր է. այնպիսում լեզուոյ ոչ գոյ գին, թէպէտեւ տուն մի լի տացի ակամբ պատուականօք։

Իբրեւ արար Աստուած զաշխարհս, եդ կշռով հուր 'ի հողն, 'ի ջուրն եւ յօդըն. ցորեան մի աւելի ոչ արար, այլ կըշիռ հաւասար չափով եդ զամենայն։

Լեզու գործի է խօսելոյ. լեզու արդարոյ իբրեւ զոսկի սուրբ։ Լեզու մարդոյ միատարը է, այլ օձի լեզու կրկին է ծայրիւ։ Արդ մարդ որ երկդիմի է խօսիւք, մերթ քաղցր բարբառի եւ մերթ դառն, եղբայր է օձի, եւ զանէծս օձի ընկալցի։

Ոստ ծառոյ յորժամ գօսանայ, ի ասիցէ թէ ծաղկելոց իցէ անդրէն. եւ սպի-

տակ մաղ զոր 'ի սեաւ ներկիցէ ոք, ոչ ապաքէն դարձեալ չրջէ զգոյն, այսպէս այր մեղաւոր եւ սեաւ, զիտեմք զի սպիտականայ, այլ Աստուած զմի ինչ խնդրէ 'ի նմանէ, զի ասիցէ թէ մեղայ, եւ քաւեսցի։

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ
Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո
Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ
Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք

Ա

Սուրբ Երրորդութիւնն փրկէ զքեզ յամենայն փորձութենէ. փարատեցաւ ցաւ սրտի քո. մեծ ուրախութիւն եւ չնորհ յԱստուծոյ. եւ դու բարձրանաս մեծաւ պատուով։ Ա.յլ յորժամ ընծայեցար 'ի ծընողաց քոց՝ մեծ հիւանդութիւն կրեցեր. եւ հալածական եղեր յաղգականաց քոց եւ 'ի բարեկամաց։ Բայց պատրաստ կացո զանձն քո 'ի գաղանաց եւ յանօրինաց. զի փոթորիկ կայ առաջի քո եւ չարաչսօսք քո շատ են. գնա աղօթս արա առ Աստուած զի փրկեսցիս 'ի նոցանէ. եւ խորհուրդ քո զոր ունիս եւ զոր կամիս՝ կատարեսցին. Վիճակ բարի ել քեզ։

Բ

Բանն Աստուած անսկիզբն՝ որ 'ի հօրէ առաքեցաւ, նա է յոյս նեղելոց. որ փրկէ զքեզ յամենայն փորձութենէ։ Փարատեցաւ ցաւ սրտի քո. եւ կատարեցաւ վիճակն քո 'ի բարին. գործ զոր սկսանիս՝ Աստուած յաջողէ քեզ եւ առաջնորդէ։ Արդ արա զխորհուրդ քո. եթէ վաճառ ունիս՝ շահիս. եթէ 'ի ճանապարհորդութեան՝ բարեաւ գնաս. թէ զհեռաւոր զոք ունիս՝ բարեաւ տեսանես. թէ զհիւանդ ոք ունիս՝ վաղվաղակի ողջանայ. զոր կորուսեալ ես՝ գտանես. Աբրահամու վիճակն է։

Գ

Գնա՝ մի ինչ հարցաներ՝ զի բազում նեղութիւն ունիս. եւ տրտմութիւն կայ առաջի քո. եւ վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. եւ եհաս 'ի վերայ քո նեղութիւն մեծ. չգոյր քեզ օգնական եւ ոչ սիրելի, զի 'ի հայրենական ժառանգութենէն զրկեցար. եւ այժմ տարակուսեալ ես վասն կենացդ։ Արդ աղաչեա զԱստուած եւ ուխտ կատարեա նմա, որ կործանէ զթշնամին քո, եւ հանէ զքեզ 'ի նեղութենէ 'ի լոյս. եւ քո սրտի կամքն 'ի բարին կատարին. 'ի Ջրոյ զգոյշ լեր. Յովնանու վիճակն է։

Դ

Դու ով սիրելի՝ վասն այդր բանի հարցանես եւ հոգաս հանապազ. Աստուած փրկէ զքեզ եւ հանէ յամենայն նեղութենէ զանձն քո. եւ յանկարծակի ուստեք մեծանաս ընչիւք՝ ուստի ակն ոչ ունիս. եւ բանայ քեզ Աստուած դուռն բարի։ Ի ճանապարհ երթաս եւ բարեաւ գաս. եւ թշնամին քո յամօթ լինի. եթէ հեռաւոր զոք ունիս՝ տեսանես. վիշտք մահու տրտմեցուցին զքեզ՝ բայց մոռանաս զայն. փոխել կամիս 'ի տեղւոջէ 'ի տեղի սակաւ մի համբեր եւ ապա փոխեաց. եւ բարին

գտանես. մեծանաս եւ ուրախ լինիս. յուսա առ Աստուած զի մի վնասեսցիս. Դանիէլի վիճակն է։

Ե

Երանի է քեզ ով սիրելի՝ զի Աստուած է քեզ օգնական. բայց դու յոյժ վաստակեալ ես եւ ոչ եղեւ քեզ հանգիստ, ոչ օգնական, ոչ եղբայր եւ ոչ սիրելի։ Որպէս զալիս ծովու ծփաս. եւ քոց կենացդ հանգիստ ոչ գտանես. ով սիրելի ուր փառս Աստուծոյ՝ զի ուրախութիւն հասանիցէ քեզ յԱստուծոյ եւ առողջութիւն. եթէ փոխեսցիս 'ի տեղւոջէդ բարւոյ հանդիպեսցիս. եւ ամենայն դժուարութիւն 'ի բարին դառնայ. յաւագայ զգոյշ լինիջիր. որոգայթ ցուցանեն, յընկերաց եւ 'ի մատնողաց զգոյշ լեր. Սուրբ Գրիգորի վիճակն է.

Զ

Զարմացեալ եմ ով այր՝ զի երկմտեալ եւ 'ի թշնամեաց սասանիս, եւ խորհիս վասն մեծանալոյ. եւ ոչ խորհիս առնել աղաչանս առ Աստուած. աղօթից ծոյլ ես. վասն այնորիկ եկն 'ի վերայ քո նեղութիւն մեծ, եւ թշնամին քո զօրացաւ 'ի վերայ քո։ Գնա աղաչեա զԱստուած եւ ուխտս կատարեա նմա՝ զի հանցէ զքեզ

յամենայն նեղութենէ. եւ ազատեսցես յորոգայթից. եթէ վաճառ ունիցիս՝ սիրով շահեսցիս. Մատթէոսի վիճակն է։

Է

Ո՛վ այր առնուս զոր խորհիսդ եւ ուրախ լինիս. եւ ազատիս 'ի չարէ. գնա գոհացիր զԱստուծոյ։ Են որ մտօք չար խորհին վասն քո. բայց Աստուած հանէ զքեզ յամենայն նեղութենէ եւ յորոգայթէ. զի դու բարի ես եւ Աստուած 'ի բարին առաջնորդէ քեզ. յոր ինչ եւ ձեռն արկանիցես՝ յաջողեսցէ քեզ Աստուած զոր ցանկասն տեսանիցես. զոր կորուսեալն ես՝ գտանիցես. եթէ հիւանդ ունիցիս՝ բժշկեսցի. եթէ տուն չինիցես կամ հողագործութիւն առնիցես 'ի գլուխ հանցես, եւ մեծասցիս։ Ի կախարդ կանանց 'ի բաց լինիջիր. Մովսեսի վիճակն է։

Ը

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութեան եկն 'ի վերայ քո. եւ տրտմեցար յազգականաց քոց եւ 'ի բարեկամաց. եւ ազգն քո նենգաւոր եղեւ քեզ. եւ եղեւ աւերումն տան քո. եւ շրջեցար դու 'ի վերայ երկրի։ Այլ գոհացիր զԱստուծոյ. զի գալոց է քեզ ուրախութիւն մեծ. եւ տեսանիցես զոր տեսանելն կամիս. եթէ 'ի ճա-

նապարհ երթիցես՝ յաջողութեամբ դարձ-
ցիս , եւ զոր ինչ եւ առնիցես՝ յաջողես-
ցէ քեզ Աստուած . զուխտն զոր խոստա-
ցար Աստուծոյ կատարեսցէ . եթէ
վաճառ առնիցես՝ չահեսցիս . ապա մի խռո-
վեսցի սիրտ քո . Սեթայ վիճակն է ։

Թ

Ո՛չ յառաջացար 'ի բարին . զրկեցար՝
յորմէ ունէիր . ոչ էր քեզ օգնական , ոչ
եղբայր եւ ոչ սիրելի ։ Արդ աղաչեա
զԱստուած զի փրկեսցէ զքեզ եւ հանցէ
'ի նեղութենէ զանձն քո ։ Բայց դու ան-
լսող ես , եւ ծոյլ յաղօթս կալ . վասն այ-
նորիկ եկն 'ի վերայ քո նեղութիւն . եւ
դու չրջեցար յօտար երկիր՝ բայց ոչ վը-
նասեցար ։ Ապա թէ ոչ դառնաս 'ի կամս
Աստուծոյ , գայ 'ի վերայ քո նեղութիւն .
եւ լինի յափշտակումն ընչից քոց եւ ա-
ւերումն տան քո . եւ ամենայն զինչ եւ
առնիցես՝ ոչ յաջողեսցի . եւ մի տեսցես
զոր տեսանելն կամիս , եւ զոր կորուսեալն
ես մի գտցես ։ Այլ եթէ դառնաս 'ի կամս
Աստուծոյ , դուռն որ փակեալ իցէ՝ բաց-
ցի քեզ . եւ յաւելցի քեզ մեծութիւն։ Գնա
աղօթս արա առ Աստուած եւ ուխտս կա-
տարեա . եւ մի եւս այլ չար գործեսցես ,
եւ ազատեսցիս 'ի տանջանացդ . Սուրբ Գը-
րիգորի վիճակն է ։

Ժ

Զորմէ եւ բուռն արկանիցես՝ յաջողեսցէ քեզ Աստուած. եւ արա զխորհուրդ սիրտ քո։ Աւետիս տուր անձին քո՝ եւ ուրախ լեր յայն յոր ձեռն արկեր։ Ի ձեռաց քոց ելանէ ողորմութիւն. եւ բազումք կերիցեն զվաստակս ձեռաց քոց։ Այլ հիւանդացար յոյժ, եւ մերձ 'ի մահ եղեր. եւ Աստուած եհան զքեզ 'ի նեղութենէ եւ ապրեցոյց։ Ի հեռաւոր ուստեք՝ յորմէ ակն ոչ ունիս՝ բարիք գալոց են քեզ. եւ տրտմութիւն քո՝ յուրախութիւն փոխեսցի. զի դու բարի ես՝ եւ Աստուած 'ի բարին առաջնորդէ քեզ. եւ որդիք շնորհաց լիցին քեզ։ Այլ չես բախտաւոր 'ի սիրելեաց. վասն այնորիկ զգոյշ լեր՝ զի զուր 'իլեզու անկանիս եւ տուգանս տաս։ Գնա աղաչեա Աստուած եւ ուխտս կատարեա նմա, զի ողորմութիւն նորա եկեսցէ 'ի վերայ քո. թէ 'ի ճանապարհ երթիցես՝ յաջողութեամբ դարձցիս, եւ բարւոյ հասանիցես. Սողոմոնի վիճակն է։

Ի

Ո՛վ այր՝ ապաւինեալ ես 'ի խորհուրդ քո եւ մոռանաս զուխտն Աստուծոյ. զի տրտմութիւն քո՝ յուրախութիւն փոխի.

'ի հեռաւոր տեղեաց՝ ձայն աւետեաց լը-
սես. կամ հեռաւոր մարդ տեսանես. եւ
յԱստուծոյ առողջութիւն գտանես. եւ
դարման ոսկերաց քոց ոչ պակասէ. բայց
ծնողաց քոց դիմադարձ մի լինիր զի զոր
ինչ եւ խնդրիցես յԱստուծոյ տացէ քեզ։
Եւ փոխել տեղւոջէ 'ի տեղի բարի լինի
քեզ. եւ յամենայն դժուարութենէ ազա-
տիս. եւ զինչ խորհուրդ եւ ունիցիս, եւ
յոր ինչ եւ ձեռն արկանիցես, արա եւ կա-
տարեա, շահեսցիս եւ մեծանայցես յոյժ.
եւ վախճան քո բարի լինիցի. Ղազարու
վիճակն է։

Լ

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ եւ զխոր-
հուրդ քո զի նման են ալեաց ծովու.
նման ես դու ճնճղկի որ անկաւ 'ի ձե-
ռըս որսորդաց. նոյնպէս եւ դու 'ի ձեռս
բռնաւորաց անկանիցիս։ Գնա աղաչեա
զԱստուած եւ ուխտս կատարեա նմա.
զի փրկեսցէ զքեզ տէր Աստուած քոյա-
մենայն որոգայթէ եւ 'ի նեղութենէ.
բացցէ քեզ դուռն բարւոյ եւ մեծութեան.
այլ զուխտն զոր խոստացար՝ կատարեա։
Ապա թէ ոչ դառնաս 'ի կամս Աստուծոյ,
գայ 'ի վերայ քո նեղութիւն. եւ լինի յա-
փշտակումն տան քո եւ ընչից քոց։ Եւ
դու հալածական լինիցիս. եւ վիշտ մա-

հու տրտմեցուսցեն զքեզ. եւ յօտար երկիր վտարիս։ Եւ եթէ դառնաս 'ի կամս Աստուծոյ, զուռն մի փակեալ բացցի քեզ. եւ յոր ինչ եւ ձեռն արկանիցես՝ յաջողեսցէ քեզ Աստուած։ Այլ զդոյշ լեր 'ի ջրոյ եւ 'ի գազանաց. եւ 'ի չար գործոց. Յովնանու վիճակն է։

Խ

Ո՛վ մարդ՝ ողորմութիւնն Աստուծոյ լիցի ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց. բայց յօտար աշխարհ վտարեցար. զո՞ ոք եւ կամիցիս՝ տեսանիցես. զինչ կամիցիս՝ առնուցուս՝ զոր եւ կորուսեալ իցես՝ գտանիցես. այլ չես բախտաւոր յընկերաց. յԱստուծոյ բազում շնորհ ունիս. եւ որդի շնորհաց լիցի քեզ։ Բայց վիշտս մահու տրտմեցուցին զքեզ. իսկ բան եւ խորհուրդ զոր արարեալ ես՝ գնա, արա, շահիս եւ բարի գտանես. այլ յազգէ քումմէ ինչ ոչ շահիս։ Եւ 'ի քոց վաստակոց բազումք կերիցեն. եւ պարգեւս յԱստուծոյ առնուցուս. յառնակին կնոջէ մի խաբեսցիս. 'ի յիշողաց եւ 'ի կախարդաց զգոյշ լեր. սուրբ Մարտիրոսի վիճակն է։

Ծ

Ո՛վ այր դու՝ նման ես գետոյ որ եր-

թայ յերկար եւ ոչ գոյ 'ի նմա դադարումն։ Դու հալածական եղեր եւ 'ի հայրենական ժառանգութենէն զրկեցար. եւ 'ի ծնողաց քոց ոչ խնդացեր. զրաբախտ ես զի ամենայն ոք զրկեալ է զքեզ։ Արդ աղաչեա զԱստուած եւ ուխտս կատարեա նմա. զոր օգնեսցէ քեզ Աստուած եւ փրկեսցէ զքեզ յորոգայթէ։ Դու մի՛ տրտմիր զի իրացդ դժուարութիւն 'ի լոյս ելանէ. եւ քեզ ձայն աւետեաց գայ եւ դու խնդաս եւ ուրախ լինիս. յանկարծակի մեծութիւն գայ քեզ՝ ուստի ակն ոչ ունիս. Սեթայ վիճակն է։

Կ

Ո՛վ սիրելի՝ կակղացո զբարս քո եւ պահեա զկամս Աստուծոյ. եւ տուր հաց քաղցելոց եւ ջուր ծարաւեաց։ Ապա թէ ոչ դառնաս 'ի կամս քո. յայնժամ գայ 'ի վերայ քո նեղութիւն մեծ եւ յափշտակումն ընչից քոց եւ աւերումն տանն քո. եւ ամենայն ինչ յոր արկցես ձեռն ոչ յաջողեսցի. եւ որում ցանկաս ոչ հասանիցես. եւ զոր կորուսեալ ես ոչ գտանիցես։ Ապա եթէ դառնաս 'ի կամս Աստուծոյ եւ զպատուիրանս նորա պահես, ողորմութիւնն Աստուծոյ հասանէ 'ի վերայ քո. եւ յաւագաց մեծարեսցիս. եւ դուռն մի փակեալ բացցի քեզ, եւ յա-

ելու մեծութիւն քո։ Որպէս Արեգակն 'ի վերայ արարածոց՝ այնպէս Աստուծոյ բարին հասանէ 'ի վերայ քո. եւ յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս. աչք աւադաց քաղցրանան 'ի դէմս քո. եւ ամք բարեաց դան քեզ. Յակոբայ վիճակն է։

Հ

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի դու բարի ես եւ Աստուած 'ի բարին առաջնորդէ քեզ. եւ Տէր փրկեաց զքեզ յամենայն որոգայթէ։ Լիցիս ցանկալի ամենեցուն. եւ ոչ լինիցի պակասումն ընչից քոց. եւ տայ քեզ Աստուած փառս եւ մեծութիւն. բայց զգոյշ լեր 'ի լեզուէ մի գուցէ խաբեսցիս, զի հանապազ ընդ քեզ է այն լեզու։ Գնա աղաչեա զԱստուած եւ ուխտս կատարեա նմա զի աղատեսցիս 'ի չարէն. զինչ խորհուրդ ունիս՝ արա եւ մի երկնչիր. զոր ինչ եւ կամիս այնպէս կատարեսցի. Բարեղի վիճակն է։

Ղ

Ո՛վ մարդ՝ ճայն ցնծութեան եւ ուրախութեան մատուցանեմ քեզ. զի դու երկուցեալ ես եւ տարակուսեալ. եւ սասանեցար յաղդաց եւ 'ի բարեկամաց քոց. եւ աղգն քո նենգաւոր եղեւ քեզ. եւ 'ի բազում իրաց զրկեցար։ Տուն քո հայրենի՝

դարձաւ յաւեր. եւ դու չրջեցար 'ի վերայ երկրի. եւ սուգ մահու տրամեցոյց զքեզ. այլ այժմ փառս տուր Աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն մեծ. բազմանայ մեծութիւն քո, ոսկին եւ արծաթն. զինչ եւ կամիցիս կատարեսցի։ Այլ զգոյշ լեր յանօրինաց եւ 'ի պոռնկութենէ զի մի յորոգայթ անկանիցիս. եթէ հեռաւոր զոք ունիցիս գայցէ. եւ զայլ զինչ խորհուրդ զոր ունիս կատարեսցի. Մովսեսի վիճակն է։

Ղ

Ո՛վ մարդ՝ պարգեւեցաւ արձակումն կապանաց քոց. որպէս մոգքն որ ելին յարեւելից եւ եկեալ առ Քրիստոս գտին զնա եւ ուրախ եղեն, նոյնպէս եւ դու ուրախ լինիս 'ի բանս քո եւ 'ի խորհուրդս զոր ունիս։ Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարեաւ դառնաս եւ բարիս գտանես։ Որպէս Մովսէս յաղթեաց Փարաւոնի եւ Եգիպտացւոցն, նոյնպէս եւ դու յաղթեսցես թշնամեաց քոց. եւ զոր ինչ խորհեալ ես գնա արա. 'ի բարին առաջնորդեսցէ քեզ Տէր Աստուած. Մոգուց վիճակն է։

Ճ

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ քեզ, եղեր դու 'ի մանկութենէ քումմէ հալա-

ծական. եւ պանդխտութիւն կրեցեր զամենայն աւուրս կենաց քոց. եւ սասանեցար յաղագս եւ յանօրինաց. եւ ազգն քո նենգաւոր եղեւ քեզ։ Ով սիրելի մի երկնչիր՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն եւ կատարեցաւ վիճակ քո՝ի բարին. զինչ եւ ինդրեսցես յԱստուծոյ՝ տայցէ քեզ Աստուած. եթէ՝ի ճանապարհ երթիցես յաջողութեամբ դարձցիս. այլ՝ի կանանց դրացեաց զգոյշ լեր, զի բազում բամբասանս լսես. Դանիէլի վիճակն է։

Ա

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ. արդ՝ի չարիսդ յիմարեալ ես եւ ընկերի քում չար առնես. եւ ամենեցուն վնասախորհիս։ Ընկեա զնենգութիւն՝ի մտաց քոց. եւ ընկերի քում չար մի խորհիր. զի մի անկանիցիս՝ի մեծ նեղութիւն. եւ պատուհաս գայցէ՝ի վերայ քո։ Ոչ խընդացեր՝ի ծնողաց եւ ոչ՝ի զաւակաց. եւ ամենայն բան զինչ եւ առնես՝ ոչ յաջողի քեզ։ Ապա եթէ դառնաս՝ի կամս Աստուծոյ՝ եւ ընկերի քում եւ ամենայն մարդոյ նենգութիւն ոչ առնես, ծագէ Աստուած զողորմութիւն իւր՝ի վերայ քո եւ ոչ լինի նուազութիւն ընչից քոց. եւ մեծաւ պատուով վախճանիս. Յաբեթայ վիճակն է։

Ց

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի կատարեցաւ վիճակն քո 'ի բարին. եւ դու խորհուրդ ունիս 'ի սրտի քում. ոչ կարես ունել եւ ոչ թողուլ. մի երկնչիր գընա արա. զի խորհուրդ քո 'ի բարին կատարեցաւ։ Որպէս լուսինն որ զխաւարին գիշերն լուսաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ քո զոր խորհիս. եւ հասանէ քեզ մեծութիւն յԱստուծոյ. եւ ում ցանկաս հասանես. եւ յաւագաց բարի գտանես. եւ զաւետեաց ձայն լսես եւ խնդաս. գնա աղաչեա զԱստուած զի խորտակեսցէ զքո թըշնամին. Սուրբ Գրիգորի վիճակն է։

Ն

Ո՛վ մարդ՝ ահա 'ի նենգութեան տեսանեմ զքեզ. զի մեծամեծ որոգայթք կան առաջի քո. եւ 'ի նեղութիւն անկանիցիս։ Բազումք խորհին քեզ չարիս եւ դու ոչ իմանաս զկորուստ անձին քո. եւ զի ոչ առնես զկամս Աստուծոյ՝ վասն այնորիկ եկն 'ի վերայ քո նեղութիւն. խորհուրդ զոր ունիս ոչ կատարի. եթէ 'ի ճանապարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի։ Այլ եթէ դառնաս 'ի կամս Աստուծոյ եւ զուխտն զոր խոստացեալ ես կատարես, փակեալ դուռն մի բանայ քեզ. եւ յաւելու մեծութիւն քո։

Շ

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի՛ քո. առնուս պարգեւս 'ի մեծամեծաց. ուրախ լինիս եւ բարւոյ հանդիպիս. խնդաս 'ի զաւակէ, 'ի կնոջէ քումմէ. եւ լինիս յիշատակ ծնողաց քոց։ Եւ զինչ եւ խնդրես յԱստուծոյ՝ առնուս. զոր կորուսեալն ես՝ գտանես. եթէ հեռաւոր զոք ունիս՝ գայ եւ տեսանես եթէ հիւանդ ունիս՝ ողջանայ. եւ օր ըստ առողջագոյն լինի։

Ո

Ո՛վ մարդ՝ պարտ է քեզ յամենայն ժամ գոհանալ զԱստուծոյ, զի թէպէտ եւ տրտմեցար, բայց դարձեալ ուրախ լինիս եւ շնորհք Աստուծոյ հասանեն 'ի վերայ քո։ Այլ զգոյշ լեր յանօրինաց եւ 'ի գազանաց. զի որոգայթ կայ առաջի քոյ. բայց պարգեւ եւ շնորհ յԱստուծոյ առնուս. եւ յորդւոց քոց խնդաս. եւ լինիս ցանկալի ամենեցուն. եւ ոչ լինի պակասումն ընչից քոց։ Եթէ փոխիս 'ի տեղւոջէ 'ի տեղի՝ բարւոյ հանդիպիս. ձայն աւետեաց լսես. եւ զհեռաւոր զոք տեսանես. մահ քո լիցի յաւուր բարի. եւ երանի՝ զոր տեսեր բարի է. Աբրահամու վիճակն է։

Զ

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց. եւ առնուս իշխանութիւն բարի. թշնամին քո յամօթ լինի. եւ յօտար երկիր դընաս. եւ՝ առնուս պարգեւս. եւ յամենայն դժուարութենէ ազատիս. եւ զո ոք եւ կամիցիս՝ յաջողութեամբ տեսանես. եւ ում ցանկաս՝ հասանես։ Այլ զգոյշ լեր 'ի գազանաց եւ 'ի բարձր տեղեաց. 'ի կախարդաց եւ 'ի լկտի կնոջէ՝ որ զբազումս արկեալ իցէ 'ի խաբէութիւն։ Գնա աղաչեա զԱստուած եւ ուխտս կատարեա նմա. զի ազատեսցիս 'ի բազում չարէ. եւ բացցէ քեզ տէր Աստուած դուռն բարի 'ի մեծութիւն. Սեթայ վիճակն է։

Պ

Պարգեւ բարեաց տացէ քեզ Աստուած. չարն հեռացաւ եւ բարին մերձեցաւ կամօքն Աստուծոյ։ Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս ամենեցուն. բայց պահեա զանձն քո 'ի չար կամաց. եւ զոր ինչ գործեսցես, եւ յոր ինչ եւ ձեռն արկանիցես՝ 'ի բարին առաջնորդեսցէ քեզ տէր Աստուած. այլ դու չես բախտաւոր 'ի սիրելեաց։ ՅԱստուած ապաւինեսջիր որ կործանէ զքո թշնամին. եւ հանէ զքեզ յամենայն որոգայթէ. եւ լինիս ցանկալի

ամենեցուն. եւ ոչ լինի պակասումն ընչից քոց եւ զինչ եւ խորհեսցիս՝ կատարեսցի 'ի բարին. Մովսեսի վիճակն է։

Զ

Ո՛վ մարդ՝ մեծ էիր եւ խոնարհեցար. զմտաւ ածես եւ ոչ կարես կալ 'ի վերայ իրիք. դու մի՛ տրտմիր՝ գալոց է քեզ ուրախութիւն մեծ՝ ուստի ակն ոչ ունիս. զի դու բարի ես՝ եւ Աստուած 'ի բարին առաջնորդեսցէ քեզ։ Փոխանակ տրտմութեան՝ ուրախութիւն լիցի քեզ. բարի եւ չնորհ առցես յԱստուծոյ։ Գնա արա ըզ խորհուրդ քո. եթէ վաճառս ունիցիս՝ շահեսցիս. եթէ 'ի ճանապարհ երթիցես՝ յաջողութեամբ դարձցիս. այլ քանզի վասն բախտի հարցանես եւ 'ի քննութիւն մտանես, Աստուած բանայ քեզ զդուռն բարւոյ. եւ յաւելու զմեծութիւն. Մատթէի վիճակն է։

Ը

Ո՛վ մարդ՝ սասանեցար յաղգաց եւ յանօրինաց. եւ եհաս 'ի վերայ քոյ տրտմութիւն. եւ եղեւ աւերումն տան քո 'ի բարեկամաց քոց. եւ խորհուրդ քո հանապազ 'ի դերեւ ելանէ։ Ով այր՝ մի՛ հոգար վասն այդր բանի զի վաղվաղակի գայ 'ի վերայ քո բարին. եւ տէր Աստուած հա-

նէ զքեզ 'ի խաւարէ 'ի լոյս . եւ հասանիցես որուսմ ցանկասն ։ Այլ զգոյշ լեր յընկերաց՝ զի չես բախտաւոր եւ է մարդ մի չարակն՝ որ մտօքն չար խորհի քեզ . 'ի կախարդաց 'ի բաց կաց . Ադամայ վիճակն է ։

Ս.

Ո՛վ մարդ՝ վասն կենաց քոց ընդէր հարցանես . զի՞ յիմարեալ ես եւ չար խորհիս . եւ ամենեցունվնաս առնես . 'ի տեղւոջէ 'ի տեղի փոխիս՝ եւ ուրեք ոչ հաստատիս . զոր կորուսեալն ես ոչ գտանես ։ Ընկեա զնենդութիւն 'ի մտաց քոց . ընկերի քոսմ եւ ամենայն մարդոյ չար մի՛ խորհիր . ապա թէ ոչ անկանիս յորոգայթ . զնա աղաչեա զԱստուած զի փրկեսցիս 'ի բազումս չարեաց ։

Վ.

Ո՛վ սիրելի՝ տուր փառս Աստուծոյ , զի գալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս ։ Եւ 'ի քոց վաստակոց բազումք կերիցեն եւ զաւակ մի խնդամիտ տեսանես . եւ տացէ քեզ Աստուած առողջութիւն ։ Այլ զգոյշ լեր 'ի չարադէմ մարդոյ եւ 'ի չարակն կնոջէ . որ մտօք չար խորհին քեզ . 'ի բաց կաց 'ի նոցանէ զի մի անկանիցիս 'ի փորձութիւն. եւ զինչ եւ առնիցես՝ 'ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստ-

ուած. 'ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լուիցես կամ զհեռաւոր զոք տեսանիցես, գնա արա զխորհուրդ քո։

Տ

Ո՛վ մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ քեզ. զի դու զարհուրեալ եւ տարակուսեալ եւ զրաբախտ ես. զոր տան՝ կռուով արկանես. ում բարիս առնես՝ նա քեզ չար առնէ։ Այլ յաղօթից եւ յաղաչանաց դու մի՛ դադարիր. գալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս. եթէ հեռաւոր զոք ունիս՝ գայցէ. եթէ աղքատ ես՝ մեծանայցես. թէ հիւանդ ունիցիս՝ առողջացի. եթէ տեսիլ տեսեր՝ բարի է. Ղուկասու վիճակն է։

Ր

Ո՛վ մարդ՝ ցնծութիւն եւ ուրախութիւն տամ քեզ. զի դու բարի ես եւ Աստուած 'ի բարին առաջնորդէ քեզ. եւ ում ցանկաս՝ հասանես. բայց թշնամիք քո բազում են. այլ դու մի՛ երկնչիր 'ինոցանէ՝ զի Աստուած է քեզ օգնական. բայց եւ 'ի կնոջէ չես բախտաւոր։ Զգոյշ լեր զի մի՛ 'ի բանտ մտանիցես. արդարեւ տուգանատացես. այլ զոր ինչ կորուսերն գտանես։ Ի ճանապարհ կամիս երթալ եւ երկմիտ ես. գնա եւ մի՛ երկնչիր. յաջողութեամբ

գարձցիս յո՛ եւ երթաս. զինչ կալցիս յաջողեսցէ քեզ Աստուած. եւ զինչ խորհուրդ եւ ունիցիս՝ Աստուած 'ի բարին կատարեսցէ. եւ օր քան զօր լաւագոյն լինիցիս. Մարկոսի վիճակն է։

8

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի քո. առնուս պարգեւս 'ի մեծամեծաց. ուրախ լինիցիս եւ բարւոյ հանդիպեսցիս։ Խնդայցես 'ի զաւակէ եւ 'ի կնոջէ քումմէ. եւ լինիցիս յիշատակ բարի ծնողաց քոց. թէ փոխիս 'ի տեղւոջէ քումմէ՝ ոչ հաստատեսցիս. զի ամենեքեան նենգաւորք են քեզ։ Եւ 'ի մարդոյ չես բախտաւոր. այլ քո բարին յԱստուծոյ է. եւ տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն անչափ. եւ յամենայն դըժուարութենէ ազատեսցիս. եւ երազն զոր տեսեր՝ 'ի բարին կատարեսցի։

Ի

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ 'ի քէն եւ բարին մօտեցաւ. այլ սասանեցար յաղգաց եւ յանօրինաց. եւ ազգն քո նենգաւոր եղեւ քեզ։ Զգոյշ լեր 'ի թշնամեաց քոց. զի կայ մարդ մի չարակն եւ կին մի կախարդ՝ որ մտօքն չար խորհին վասն քո. եւ յընկերաց քոց վտանգ կայ առաջի քո. գատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերեա. Աբրահամու վիճակն է։

Փ

Անզգամ մարդոյ մի լինիր սիրելի զի մի վտանգեսցիս. եւ 'ի ձեռաց քո իրք կորուսեալ են. մի՛ տրտմիր՝ 'ի քեզ դառնայ։ Զինչ խորհուրդ ունիցիս կատարեսցէ Աստուած. բայց սակաւ մի համբերեա. զի պիղծ ոք այր մտօքն չար խորհի վասն քո. եթէ զգոյշ լինիս 'ինամանէ ազատիս 'ի չարէն։ Կամէր գալ 'ի վերայ քո տրտմութիւն՝ բայց Աստուած խափանեաց. եւ բազում ուրախութիւն կայ առաջի քո։ Նման ես Աբրահամու. զոր Աստուած սիրեաց եւ 'ի տրտմութենէ ազատեաց. նոյնպէս եւ դու ազատիս յամենայն չարէ. Սահակայ վիճակն է։

Ք

Ո՛վ այր՝ տեսանեմ զի յաղթէ ոք քեզ. եւ լեզուով եւ սրտիւ չարիս խորհի վասն քո. կամ հոր փորէ քեզ. այլ ոչ կարէ վնաս առնել քեզ։ Գնա ուխտս կատարեա Աստուծոյ՝ զի 'ի բազում չարէ փրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ, այլ Աստուած դարձոյց զչարն 'ի գլուխ նորա։ Նման ես դու Իսահակայ զոր հայր նորա կամէր զենուլ. այլ Աստուած օգնեաց նըմա եւ փրկեաց զնա. եւ բազում մեծութեան եւ փառաց եհաս. նոյնպէս եւ դու ուրախ լինիս կամօքն Աստուծոյ. սրբոյն Յակոբայ վիճակն է։

ԽՈՅՆ	ՅՈՒԼ	ԵՐԿԱՒՈՐ
ԽԵՅԳԵՏԻՆ	ԱՌԻՒԾ	ԿՈՅՍ
ԿՇԻՌ	ԿԱՐԻՃ	ԱՂԵՂՆԱՒՈՐ
ԱՅԾԵՂՋԻՒՐ	ՋՐՀՈՍ	ՋՈՒԿՆ
ՀՐԱՏ	ԱՐԵԳԱԿՆ	ԼՈՒՍԱԲԵՐ
ՓԱՅԼԱԾՈՒ	ԼՈՒՍԻՆՆ	ԵՐԵՒԱԿ
	ԼՈՒՍՆԹԱԳ	

ԽՈՑՆ

Ո՛վ մարդ՝ լոյս ահագին փառաց եւ չառաւիղ անմուաղ ծագեսցէ 'ի վերայ քո որպէս արեգակն 'ի վերայ արարածոց. նոյնպէս եւ դու 'ի բանս քո ուրախ լինիցիս։ Այլ ուխտ եդեալ ես կատարեա. եւ ցեր լցուսցէ զմնդրուածս քո. ապա եւ բազ տեսեալ եւ զարհուրեալ ես, մի երկնչիր երազն 'ի բարին եղեւ։

ՅՈՒԼՆ

Ո՛վ մարդ՝ լուսաւորի խորհուրդ սրտի քո. յամենայն ժամ տրտում ես. մի երկնչիր՝ զի չարն հեռացաւ 'ի քէն եւ բարին մերձեցաւ. եւ զոր խորհեալ ես վաղվաղակի տայ քեզ Աստուած եւ զիւր ողորմութիւնն չնորհեսցէ քեզ։

ԵՐԿԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալն ես՝ կատարի Աստուծով. զի բազում բարութիւն կայ յայդ խորհուրդս քո. զի դու բարի ես՝ եւ անիրաւն ոչ գայ առ քեզ. առ այժըմ տրտում ես եւ 'ի ցնորս կաս. մի ցնորիր՝ զի բազում բարութիւն կայ առաջի քո. եւ զինչ եւ խորհեալ ես՝ 'ի բարին կատարի Աստուծով։

ԽԵՑԻԵՏԻՆՆ

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես 'ի սըր-

տի քում զգոյշ լեր 'ի կատարելոյ, զի մի վտանգեսցիս. զի խորհուրդ քո ոչ յաջողեսցի. ապա զգոյշ լեր 'ի չար կամաց. զի ընդ քեզ ուտեն եւ ըմպեն եւ վասն քո չարիս խորհին։

ԱՌԻԻԾՆ

Ո՛վ մարդ՝ տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն. ցանկութիւն սրտի քոկատարի. եւ յետ սակաւ աւուրց՝ ձայն աւետեաց լսես եւ ուրախ լինիս. բայց 'ի կուուոյ զգոյշ լեր. եւ զոր ինչ կամիս՝ տեսանես կամօքն Աստուծոյ։

ԿՈՑՍՆ

Ո՛վ մարդ՝ զլոյսն անսպառ ծագեսցէ Աստուած 'ի վերայ քո. եւ ողորմութեամբքն իւրով յաջողեսցէ քեզ զոր դուդ կամիս. այլ երազ տեսեր եւ զարհուրեալ ես՝ զի թէպէտ պատերազմն ահագին է, մի երկնչիր բայցոնչան բարւոյ է. մեծութիւն գալոց է քեզ ուստի ակն ոչ ունիս. եւ այլ զինչ եւ խորհեալ իցես՝ կատարեսցի. եթէ հիւանդ ոք է քո առողջանայ. եւ պատուհասն 'ի քէն հեռանայ կամօքն Աստուծոյ. աւուրք որ 'ի վերայ քո գալոց են, լաւ են քան զառաջինն։

ԿՇԻՌՆ

Ո՛վ մարդ՝ զինչ եւ խորհեցար մի եր-

կնչիր այնպէս ուրախ լինիս որպէս եւ պի-
տոյ է քեզ, բայց զխորհուրդ քո զամե-
նայն մի ումեք ասեր. զի քո վիճակն 'ի
Կշիռն է. եւ ամենայն ինչ քեզ յաջողէ.
'ի յիշոցաց զգոյշ լեր եւ յամենայն ժամ
աղօթս արա. զի ամենայն չար 'ի քէն
հեռասցի եւ 'ի հոգոց ազատեսցիս. ե-
թէ 'ի ճանապարհ երթաս՝ յաջողութեամբ
դարձցիս. եւ եթէ վաճառ ունիցիս, բա-
զում շահեսցիս։

ԿԱՐԻՃՆ

Ո՛վ մարդ՝ գիտասջիր զի Կարճի թու-
նովք կամի հարցանել զքեզ մարդ մի.
զգոյշ լեր 'ի նմանէ եւ յայդմ խորհրդոյ հե-
ռացիր՝ զի պահէ զքեզ Աստուած. ապա
թէ ոչ յետոյ ապաշաւես. եւ եթէ համ-
բերեսցես սակաւիկ մի, զինչ եւ կամիս կա-
տարեսցի։

ԱՂԵՂՆԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ ժամանակս ուղիղ եղեւ քեզ.
եւ խորհուրդ սրտի քո 'ի բարին կատա-
րեցաւ. արա զինչ եւ կամիս եւ խնդաց-
ցես 'ի բանս քո. եւ տայցէ քեզ Աստ-
ուած զինդրուածս քո. մի՛ աճապարեր
սակաւ մի համբերեա, եւ ուստի ակն ոչ
ունիս՝ ուրախ լինիցիս. եթէ տունս շի-
նեսցես յաջողեսցէ քեզ Աստուած. եւ 'ի
հեղուութենէ ազատեսցիս. եթէ հեռաւոր

զոք ունիս՝ տեսցես. բայց 'ի լեղուէ քումմէ զդոյշ լեր։

ԱՑԾԵՂԶԻՒՐՆ

Ո՛վ մարդ՝ յիշեա զԱստուած 'ի բանս քո եւ նա հանէ զքեզ 'ի տրտմութենէ զի տրտմութիւն հասանէ քեզ 'ի սիրելեաց քոց. ասես երբ դարման լիցի ինձ կամ յաջողութիւն։ Աստղս ցուցանէ թէ հիւանդանայցես, սակայն վաղվաղակի առողջասցիս. եթէ հեռաւոր զոք ունիցիս եկեսցէ. եւ կատարեսցին խնդրուածք քո 'ի բարին։

ՋՐՀՈՍՆ

Ո՛վ մարդ՝ բարութիւնս բաղումս ունէիր եւ յամենայնէ զրկեցար. պանդխտեցար եւ չար դիպեցաւ քեզ. կոիւ ընդ քեզ եղեն սիրելեացդ՝ եւ իբրեւ նաւ 'ի վերայ ծովուն 'ի տատանման կաս. եւ կամիս քո կենացդ հանգիստ գտանել՝ եւ հնարս ոչ գտանես. ով մարդ մի՛ տրամիր՝ զի տրտմութիւն քո յուրախութիւն փոխեսցի. եւ զոր խորհիսն՝ կատարեսցի կամօքն Աստուծոյ։

ՁՈՒԿՆ

Ո՛վ մարդ՝ զհեռաւոր ոք զքո տեսցես, կամ ձայն աւետեաց լսիցես եւ խնդայցես, զի դժուարինք քո անցին եւ բա-

բին մօտեցաւ. եթէ խոստումն ինչ ունիցիս կատարեա. եւ 'ի յիշողաց զգոյշ լեր. եւ որպէս կապեալք որ արձակիցին, եւ փակեալ դուռն որ բանայցի, այնպէս բանալոց է քեզ Աստուած զդուռն ողորմութեան։

ՀՐԱՏՆ

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախեաւ 'ի ցրտոյն եւ եմուտ յայր. եւ ոչինչ փոյթ յանձին կալաւ զոչխարաց. եւ բեկ գայլ զնոսա եւ արար զէջ. նոյնպէս եւ դու 'ի բարւոյն հեռանաս եւ երթաս զհետ չար խորհրդոց. զգոյշ լեր 'ի նոցանէ եւ 'ի նենգաւոր մարդոյ. եւ 'ի խորհրդոց այդի հեռացիր. զի չար խօսք կան վասն քո. այլ այն զոր զմտաւ ածես, չարոյ քումէ. ահա ասացի քեզ զամենայն։

ԱՐԵԳԱԿՆ

Ո՛վ մարդ՝ որպէս արեգակն որ լուսաւորէ զարարածս, այնպէս լուսաւորեսցին խորհուրդք քո. կատարելոց է Աստուած զբարին զոր կամիս. այլ 'ի մարդոյ ումեքէ որ բուխ է երեսօք՝ զգոյշ լեր. զի սրտիւն նենդէ զքեզ, եւ լեզուովն քաղցր խօսի ընդ քեզ։ Բայց դու վասն իրիք հոգաս եւ խորհիս ընդ այն 'ի միտս քո. մի երկնչիր, վաղվաղակի լուսաւորեսցին խորհուրդք սրտի քո։

ԼՈՒՍԱԲԵՐՆ

Ո՛վ մարդ՝ ընդ չար մարդոյ մի՛ շրջիր ։ եւ եթէ ոչ անսայցես խրատուս՝ խաբեսցիս ՝ի նմանէ . եւ ՝ի լեզուէ քումմէ ըզգոյշ լեր ։ եւ յանոյշ անոյշ բանից ամենայն ուրուք մի՛ խաբիր . զի կամին կորուսանել զքեզ . սակաւ մի՛ համբերեա . ապա թէ ոչ յետոյ ապաշաւեսցես . բազում բարութիւն կայ առաջի քո . կորուստ քո գտանիցի . եւ զինչ եւ առնիցես՝ յաջողեսցէ քեզ Աստուած ։

ՓԱՅԼԱԾՈՒՆ

Ո՛վ մարդ՝ ՝ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսիցես եւ խնդրուած քո կատարեսցի . եւ ուխտն զոր եդեալ ես կատարեսցէ Աստուած . չարն հեռասցի ՝ի քէն եւ բարին մերձեսցի քեզ . զինչ եւ առնելոց իցես արա համարձակ . զի կամք քո կատարեսցին եւ ուրախ լիցիս յԱստուած ։

ԼՈՒՍԻՆՆ

Ո՛վ մարդ՝ ցօղ ողորմութեանն Աստուծոյ անպակաս լիցի ՝ի քէն . եւ տէր Աստուած հաստատեսցէ զսիրտ քո . զոր ինչ խորհեալ իցես՝ արա եւ մի՛ երկնչիր . զի բազում բարութիւն կայ առաջի քո . եւ ՝ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսիցես ՝ի մօտ աւուրս եւ ուրախ լիցիս ։

եւ զինչ եւ սրտիւ քո ցանկաս՝ աչօքդ տեսանիցես եւ խնդայցես ։

ԵՐԵՒԱԿՆ

Ո՛վ մարդ՝ ընդէ՞ր յանիրաւի ջանաս եւ 'ի զուր աշխատիս . զի դժուարին է բանդ եւ անհատատատ գործդ . զի խորհուրդդ այդ որ 'ի սրտի քումն է ոչ է պատշաճ ժամանակիս . փոխանակ բարւոյ՝ չար հանդիպեսցի քեզ . եւ եթէ ոչ լսես խրատու՝ խաբեսցիս . առ ժամանակ մի համբերութեան տուր զսիրտ քո . եւ զյոյսդ առ Աստուած կալ հաստատուն եւ մի՛ երկնչիր . զի թշնամին քո գլորեսցի՝ եւ դու կանգնեսցիս կամօքն Աստուծոյ ։

ԼՈՒՍՆԹԱԳՆ

Ո՛վ մարդ՝ վիճակ բարի եկ քեզ . այս Ղազարու վիճակն է որ երեքօրեայ 'ի մեռելոց յարեաւ ։ Բազում աւուրք են զի քո վիճակն եկեալ է յաստեղատանէն . եւ դու 'ի տրտմութեան կաս՝ իբրեւ զնաւ երերալով 'ի վերայ ծովուն . մի՛ երկնչիր՝ վաղվաղակի ելանես 'ի նեղութենէդ ։ Այլ խոստումն զոր ունիս կատարեա . եւ 'ի յիշոցաց զգոյշ լեր . եւ զաղօթս հասարակաց կատարեա զի ելանիցես 'ի նեղութենէդ . եւ յառնէ միոջէ մեծէ բարի լինիցի քեզ ։

ՎԵՐՋ

ՀԱՅԿ-ՍՕՐԱ

ՑԱՆԿ

	Երես
ՑԱՌԱՋԱԲԱՆ ·	Գ
Պատմութիւն Պղնձի քաղաքին ·	9
Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին ·	51
Խրատք եւ յորդորանք օգտակարք ·	63
Խրատք պիտանիք եւ օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ ·	73
Պատմութիւն Աղջկան եւ Մանկան, եւ հարցմունք նոցա ընդ միմեանս ·	106
Վարք եւ պատմութիւն Ալեքսիանոսի ճգնաւորին ·	128
Պատմութիւն Տէր Յուսկան, եւ որդւոյ նորին Ստեփաննոսին ·	143
Բանք պիտանիք եւ օգտակարք, ասացեալ յառաջնոց ·	171
Զբօսանք Տղայոց ·	174 եւ 195

101

001539

2013